

ԷՋՄԻԱԾԻՆ



ՌՆԸ

ԺԶ ՏԱՐԻ

Ապրիլ

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Դ

1959

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԽՆԲԱԳՐԱԿԱՆ— Մի ֆանի խոսք ևս Ազգային-եկեղեցական Սահմանադրության նախագծի մասին	3
ԱՄՆՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ֆարոզը Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ	8
Մեր նահատակները	10
Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրազույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի շնորհավորական գրությունը փոյր Լկեղեցիների հոգևոր պետերին	12
Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրազույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի շնորհավորական գրությունը եվրոպայետական Աթոռների գահակալներին և բոլոր առաջնորդներին և Վեհափառ Հայրապետի անունով ստացված պատասխաններ	14
Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ	16
ԿԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՐՊԻՍՅԱՆ— Գրիգոր Տաթևացի	19
Ն. ՏՈԿԱՐՍԿԻ— Հայ ճարտարապետության նորաճայտ հուշարձաններ Զրվեծում	26
ՊՐՈՑ-ԻՈԿՏ. Լ. ՄԵԼԻՔՍԵՅ-ԲԵԿ— Սուրբ Հռիփսիմի և Սուրբ Գայանեի վանքերի երկլեզվյան շափածո տապանագրերը	34
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ— Թորոս Թորամանյան	39
Հ. Գ. ԽԱԼՓԱԽՉՅԱՆ— Արձանագրությունները հայկական ճարտարապետության ստեղծագործության կոմպոզիցիայում	44
ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՀՐՈՒԳՅԱՆ— Գրիգոր ավագ ֆահանա Մանդակունի	50
Ոռնա-հայկական մշակութային կապերի մասին Ժ—ԺԸ դարերում	53
Ո. Ս.— Համառոտ լուրեր Մայր Հայրենիքից	58
Ա. Հ.— Պրոֆ. ղոկտ. Ա. Գ. Առաքելյան, «Հայ ժողովրդի մտավոր զարգացման պատմություն»	60

Խ Օ Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Ո Ս Յ Ե Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ. ԷՅՄԻԱԾԻՆ

«ԷՅՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»

Kadaktion of the magazine «Etchmiadzin», Etchmiadzin, Armenia, USSR

ԵՐԵՎԱՆ, 1958 թ.

Հ Բ Ա Մ Ա Ն Ա Ռ

Տ. Տ. Վ Ա Ջ Գ Ե Ն Ա Յ Ա Ռ Ա Ջ Ն Ո Ց

Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Ե Ւ Ս Բ Բ Ա Ջ Ն Ա Գ Ո Ց Ն
Կ Ա Ք Ո Ղ Ի Կ Ո Ս Ի Ա Մ Ե Ն Ա Ց Ն Հ Ա Յ Ո Ց



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՄԻ ԲԱՆԻ ԽՈՍԻ ԵՎ Ս ԱԶԳԱՅԻՆ-ԵՎԵՂԵՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻՄ ՄԱՍԻՆ



այլ Արոտի պաշտոնաթերք «էջ-միածին» ամսագրի 1958 թվականի դեկտեմբերի համարում հրատարակվեց Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Սահմանադրության նախագիծը, որն ուղարկվեց մեր բոլոր եկեղեցուական Արոտներին և թեմերին՝ ի գիտություն և ի վճեարկում:

Ազգային-եկեղեցական նոր Սահմանադրության նախագիծը արդեն իսկ ժողովրդական լայն վճարկման առարկա է դարձել, և մեր ներքին թեմերում և՛ Սփյուռքում:

1958 թվականի հոկտեմբեր 16—23 օրերին, Մայր Աթոռում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ զամբարված եպիսկոպոսական ժողովը վճեց Մայր Արոտի կողմից ներկայացված նախագիծը և մի շարք յրացումներից ու փոփոխություններից հետո, այն նորից ներկայացրեց Վեհափառ Հայրապետին:

Մայր Աթոռում խմբագրված ազգային-եկեղեցական Սահմանադրության նախագիծը պատրաստելիս նկատի են առնված՝

1. Առաքելական, տիեզերական՝ երեմ, արտաքին, տեղական՝ վեց, գուտ ազգային՝ 16 ժողովների կանոնները, մեր եկեղեցական սուրբ ավանդությունները և հայրապետաճատատ կանոնները:

2. Հայ եկեղեցու հատուկ սահմանադրական ժողովրդավարական սկզբունքները:

3. 1945 թվականի եկեղեցական Սահմանադրության նախագիծը, որը ներկայացվել է 1945 թվականի հունիսի 19-ին, Ս. Էջմիածնում զամբարված Ազգային-եկեղեցական սրբազումար ժողովին:

4. 1955 թվականի հոկտեմբերի 5-ին, Մայր Աթոռի կողմից պատրաստված և Ազգային-եկեղեցական ժողովի երրորդ նիստին ներկայացված Սահմանադրության նախագիծը, որը 1945 թվականի նախագծի բարեփոխված և ամբողջացված ձևն էր:

5. 1956 թվականի Կանիբեի եպիսկոպոսական ժողովի որոշման հիման վրա Տ. Նորայր և Տ. Գերեբեիկ եպիսկոպոսների կողմից 1956—1957 թվականներին պատրաստված նախագիծը:

Ազգային-եկեղեցական Սահմանադրության նախագիծը վճեցելիս հարկավոր է հանդես բերել իմաստություն, հեռատեսություն, լավատեսություն: Ի հառաչագունե շտապողականությունը, կանխակալ կարծիքները, ճատվածականությունը կարող են միայն վնաս բերել գործին: Սփյուռքի հայ մամուլի մի որոշ մասում արդեն իսկ Սահմանադրության նախագծի դեմ առարկություններ երևացին: Առանց

հարցի խորը և հանգամանալից բնակարարական, ի հասարակական-հանդես-են-քերված մի շարք երկարադական առարկություններ, կանխակալ կառնիքներ, որոնք ըստ էության այնքան էլ կապ չունեն նախագծի հետ: Այդ առարկությունները կարելի է ամփոփել հետևյալ կետերի մեջ.

ա) Եկեղեցական նոր Սահմանադրության կարիք չունենալ այսօր, որովհետև Հայաստանյայց Եկեղեցին ունի իր Ազգային Սահմանադրությունը, որով նա ղեկավարվում է Ափյուտի մեջ:

բ) Այսօրվա պայմանների բերումով հնարավոր չէ լինելով Ազգային-եկեղեցական օրինավոր ժողով գումարել, եկեղեցական նոր Սահմանադրության նախագիծը պատշաճ հիմնականությամբ բնության առեկտի համար:

Պատասխանենք այս հարցերին:

Քուրհիայում 1883—1915 թվականներին, Օսմանյան պետության հետ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հարաբերությունները մի կերպ սահմանված ու մասամբ ճշտորոշված են եղել ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ անունը կրող կանոնադրությամբ:

Ազգային Սահմանադրությունը մինչև 1915 թվականը, մոտ 50 տարի, բայց փաստորեն միայն 30 տարի, ձգտում էր կանոնավորել հայ եկեղեցիների իրավական վիճակը նախկին Օսմանյան կայսրության սահմաններում:

Ազգային Սահմանադրության մեջ առնված ժողովրդավարական սահմանադրական այդ սկզբունքները վարդուց Հայ Եկեղեցու կանոնների և ավանդությունների մեջ նվիրագործված սկզբունքներ էին, որոնք սակայն 1883 թվականի Սահմանադրության մեջ թերի կերպով են կիրառվել:

Սահմանադրության մեջ «Ազգային ընդհանուր ժողով» գլխի տակ նշվել է, որ «Ազգային ընդհանուր ժողովը հարյուր քառասուն երեսուցյակներ է կրող կանոն (հոդված 57), որոնց»

ա) մեկ յոթներորդ մասը, այսինքն քսանը, եկեղեցական երեսուցյակներ են, զորս Կոստանդնուպոլսո մեջ գտնվող եկեղեցական կրճատներն.

բ) երկու յոթներորդ մասը, այսինքն քսանը, գավառներ են գալիք ազգային երեսուցյակներ են.

գ) չորս յոթներորդ մասը, այսինքն ութսունը, Կոստանդնուպոլսո թաղերն են ընտրված երեսուցյակներ են:

Ինչպես երևում է Սահմանադրության 57-րդ հոդվածից, որտեղ էլ մնացել Սահմանադրության ժողովրդավարական ոգին, երբ գավառի շուրջ երկու միլիոն հայությանը միայն 40 երեսուցյակ ունենալու իրավունք է տրվում, իսկ Կոստանդնուպոլսի մի քանի տասնյակ հազար հայությանը՝ 100 երեսուցյակներ:

Ջարմանային, սակայն, այն է, որ Ափյուտում դեռևս կան մարդիկ, որոնք ժողովրդավարական սկզբունքների որպես տիպար օրինակ ուզում են ցույց տալ 1883 թվականի Ազգային Սահմանադրությունը:

Ազգային Սահմանադրությունը գուցե եկեղեցական կանոնադրություն չէր, այլ Օսմանյան կայսրության մեջ ապրող հայ ժողովրդի եկեղեցական, մշակութային, իրավական գոյությունը ճշտող օրենք: Ըստ Սահմանադրության՝ հայ ժողովուրդը Քուրհիայում համարվում էր կրոնական, մշակութային համայնք, իր Մայրենի Եկեղեցու շուրջ համախմբված, ինչպես էին նաև Քուրհիայում ապրող այլ փոքրամասնությունները: Այս խնդրով, այսօր էլ Ազգային Սահմանադրությունը ի գործ պետք է նկատել Քուրհիայում, իբրև տեղական օրենք:

Այսօր փոխվել են պայմանները: Հայ ժողովուրդը և Հայ Եկեղեցին ցրված են աշխարհով մեկ: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, այսօր ավելի քան երբևէ, կանգնել է իր հոգևոր, կազմակերպչական-վարչական կյանքին ու գործունեությունը պատկերացնող, կանոնավորող, եկեղեցական մի ընդհանուր ու միասնական Սահմանադրություն ունենալու անհրաժեշտության առաջ, մի Սահմանադրություն, որն իր ընդհանուր գծերի մեջ ընդգրկի մեր Ս. Եկեղեցու ամբողջականությունը, իր նվիրապետական բոլոր Աթոռներով, թեմերով և բովանդակ հավատացյալ ժողովրդով:

Եկեղեցական նոր Սահմանադրությունը պետք է լինի իր ընդհանուր գծերի մեջ եկեղեցական սահմանադրական օրենքներ գծող մի օրինագիրք, այն պարզ պատահառով, որ Հայաստանից դուրս գտնվող մեր մյուս նվիրապետական Աթոռները, թեմերն ու եկեղեցիները, վարչական-կազմակերպչական իմաստով, կարողանան համաձայնեցնել ի-

րենց կյանքն ու գործունեությունը, համապատասխան պետական օրենքներին և պայմաններին, միշտ հավատարիմ մնալով սակայն մեր դարավոր եկեղեցու հոգևոր ավանդներին, ժողովրդավարական սկզբունքներին և մեր ազգային պատմության ռզուն:

Հայ եկեղեցու տարեգրության մեջ երբեք չի եղել մի ժամանակաշրջան, երբ մեր եկեղեցին ցրված լինի այսֆան՝ հինգ ցամաքամասերի վրա:

Իր դավանանքով, պաշտամունքով, եվրոպայեցիությամբ, կարգ ու կանոնով, ավանդություններով մի և անբաժան Հայաստանյայց Առաքելական եկեղեցին այսօր աշխարհագրականորեն ցրված է ամբողջ աշխարհով մեկ: Հայաստանում և Սովետական Միության մեջ ունենեմ հետևյալ թեմերը. Արարատյան, Շիրակի, Վրաստանի և Իմերեթիայի, Ադրբեջանի և Թուրքեստանի, Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի: Ափյուռում ունենեմ Կիլիկիա Կաթողիկոսությունը, Երուսաղեմի Հայոց Պատրիարխությունը, Թուրքիայի Հայոց Պատրիարխությունը (Ստամբուլում), Թավրիզի, Թեհրանի, Սպանանի, Հնդկաստանի և Մայրաքաղաք Արևելի, Իրաֆի, Եգիպտոսի (ներառյալ Եթովպիան և Սուդանը), Հունաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Արևմտյան Եվրոպայի, ԱՄՆ-ի հայոց (ներառյալ Կանադան), ԱՄՆ-ի հայոց Կալիֆոռնիայի (ներառյալ Մեխիկան), Հարավային Ամերիկայի հայոց թեմերը: Դեռ չենք խոսում հովվությունների մասին:

Այս բոլորից հետո, պարզ է մեզ համար, թե եկեղեցական նոր Սահմանադրության դիմովեր են և՛ր գլուրում, սուր նոճում: Այդ դրանք են, որոնք ոչ մեկ հոգևոր իշխանություն չունեն Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և նրա հավատացյալ ժողովրդի վրա և որոնց նպատակն է եղել և է՝ ամեն զնով «հավերժացնել» արհեստականորեն ստեղծված «անջատումը», անիշխանություն հաստատել և ցրել Ափյուռի հայ հավատացյալ ժողովուրդը, ամեն զնով բաժանել Ափյուռը Ս. Էջմիածնից և Մայր Հայրենիից, հատվածական մեկատիրություն հաստատել և շահագործել Ափյուռի հայությանը՝ որպես և՛րաֆական զենք Ս. Էջմիածնի և Հայրենիի դեմ: Մինչդեռ մեր փրկությունը միության մեջ է. կարգ ու կանոնի պահպան-

ման մեջ է: Եվ անհ եկեղեցական նոր Սահմանադրությունը մի տեսակ թումբ, պատենչ պիտի լինի հետագայում ամեն տեսակ պատանականությանց, ուժացումների և այլ տխուր գործողությունների դեմ, գործողությունների, որոնց նպատակն է ջլատումը հայ ժողովրդի ազգային եկեղեցական միասնության և միության: «Ճ՛րազ է պատուիրան օրհնացն» (Առակ 9 25):

Ինչպես հայտնի է, 1863 թվականի Ազգային Սահմանադրությունը, իբրև Հայ եկեղեցու և հայ փոքրամասնությանց իրավական վիճակը հշտող կանոնադրություն, երբեք չի նանաչվել և չի նանաչվում այսօր ևս ոչ մեկ պետության կողմից, ուր ապրում են այսօր հայ փոքրամասնություններ և գործում՝ հայ եկեղեցիներ, բացի Թուրքիայից:

Նվիրապետական յուրաֆանչյուր Աթոռ և առաջնորդական թեմ ունի իր ներքին կանոնադրությունը, որն առավել կամ նվազ չափով, իրավական ուժ ունի հաշս համապատասխան պետության, որի հովանու տակ գործում է Հայ եկեղեցին, համաձայն նույն հրկրի պետական օրենքների, օգտվելով օտար եկեղեցիների և ազգային փոքրամասնությանց համար սահմանված օրենքներից: Այդպիսի կանոնագրություններ ունեն Երուսաղեմի Հայոց Պատրիարխությունը և Սփյուռի մեր բոլոր թեմերը, այդ թվում Ամերիկայի Միացյալ Նահանգների, Հարավային Ամերիկայի, Ֆրանսիայի, Եգիպտոսի, Ռումինիայի, Բուլղարիայի, Իրաֆի, Պարսկաստանի և այլ թեմերը:

Արժան է հիշել, թե Կիլիկյան Աթոռը ևս ունի իր ներքին կանոնադրությունը, թեև իրավական տեսակետից անորոշ, որի հիման վրա կատարվեցին կաթողիկոսական վերջին ընտրությունները: Այստեղ պետք է հշել նաև այն հանգամանքը, որ Կիլիկյանի և Սիրիայի մեջ, Ազգային Սահմանադրությունը ի գործուկատելու ենթադրական մի կացություն գոյություն ունի, որը սակայն մինչև այսօր ոչ ոքի կողմից հստակ կերպով ձևակերպված չէ և ոչ էլ կենսագործված: Իսկ եթե նույնիսկ Ազգային Սահմանադրությունը, Կիլիկյանում և Սիրիայում, իրավական որոշ ուժ ունենար, ապա նա որևէ ձևով չէր կարող որևէ իրավունք ապահովել և հիմք հանդիսանալ Կիլիկյան Աթոռի համար, այն պարզ պատճա-

սով, որ Կիլիկյան Աթոռի ճիշատակությունն իսկ չկա Ազգային Սահմանադրության մեջ: Ազգային Սահմանադրությունն մեջ իրավական տեսակետից Կիլիկյան Կաթողիկոսությունն գոյություն չունի:

1863 թվականի Ազգային Սահմանադրությունը թրքահայ ժողովրդի եկեղեցական, ազգային, մշակութային, կրթական մեկ ստատուսն էր Օսմանյան կայսրության մեջ, այնպես ինչպես Պալոմենիան արևելահայերի մեջ:

Եկեղեցական նոր Սահմանադրությունը լինելու է ՋՈՒՏ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ամբողջ հայության համար:

«Հայ եկեղեցու Սահմանադրություն» անվան տակ: Հետևաբար պարզ է, որ 1863 թվականի արևմտահայ Ազգային Սահմանադրության և մեր նոր կազմվելիք եկեղեցական Սահմանադրության միջև նմանության և համեմատության եզր չի կարող լինել, և ոչ էլ մեկը մյուսին փոխարինելու հարց կարող է ծագել:

Եկեղեցական Սահմանադրության նախագծի ֆենարկյան առթիվ, առարկվում է նաև, որ մեր այսօրվա պայմաններում դժվար է օրինաձոր և ամբողջական Ազգային-եկեղեցական ժողով գումարել, վերջնական ֆենարկյան հեքարեկելու համար Սահմանադրության նման ետխագծեր:

Ինչպես ետխորդ առարկությունը այս վերջին առարկությունն էլ ճիշտ չէ: Ինչո՞ւ կարելի չէ օրինավոր Ազգային-եկեղեցական ժողով գումարել:

1945 թվականի հունիսի 16-ին, Հայրենական Մեծ պատերազմի ավարտից մեկ ամիս հետո միայն, Մայր Աթոռում գումարվեց Ազգային-եկեղեցական ժողով, զբաղվելու համար կաթողիկոսական ընտրության և այլ հարցերով: Այդ ժողովի բացառիկ նշանակությունը կայանում էր նրանում, որ դա մեր առաջին ժողովն էր իր լրիվ և ներկայացուցչական հանգամանքով, որին իրենց մասնակցությունը բերել էին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատգամավորությունը՝ Գարեգին Վենի եպիսկոպոսությանը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության պատվիրակությունը՝ Կյուրեղ Բ պատրիարքի, Կոստանդնուպոլսի Պատրիարքության պատվիրակությունը՝ պատրիարքական տեղապահ

Տ. Գևորգ արքեպիսկոպոս Ասլանյանի զխավորությամբ, ինչպես նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ Արևելյան և Արևմտյան, Հարավային Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Սօցիալտոսի, Քեներանի, Ատրպատականի, Իրանա-Հնդկաստանի, Արարատյան, Շիրակի, Արաստանի, Ադրբեջանի և Քուրդիստանի, Հյուսիսային Կովկասի թեմերի եկեղեցական և աշխարհական պատգամավորները: 1945 թվականի ազգային-եկեղեցական ժողովին ներկա 111 պատգամավորների մեջ մեծամասնություն էին կազմում թեմերի աշխարհական պատգամավորները:

1955 թվականի սեպտեմբերին Մայր Աթոռում գումարված Ազգային-եկեղեցական սրբազույգ ժողովի պատմական նշանակությունը նույնպես կայանում էր նրանում, որ հայրապետական նոր ընտրության մասնակցում էին Հայ եկեղեցու նվիրապետական բոլոր Աթոռները և մեր բոլոր թեմերը: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը ժողովում ներկայացված էր պաշտօնապես երկու աշխարհական և մեկ հոգևորական պատգամավորներով: Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը՝ նույնպես երկու եպիսկոպոս և մեկ աշխարհական պատգամավորներով, Կոստանդնուպոլսի պատրիարք ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատրյանը պատրաստվում էր անձամբ ներկա գտնվել ընտրության, երբ 1955 թվականի Ստամբուլի սեպտեմբերյան հայտնի դեպիբեր պատճառ դարձան, որ պատրիարք սրբազանը անձամբ չկարողանա ներկա գտնվել ժողովին: Այնուամենայնիվ Կոստանդնուպոլսի Պատրիարքությունը Ազգային-եկեղեցական ժողովում յիստորված էին ներկայացնել Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը, Վազգեն եպիսկոպոս Պալեյանը, պատգամավոր մեծանուն բանաստեղծ Ավետիս Իսահակյանը, Հրանտ Նասիպյանը և Առն Տեր-Ավետիսյանը:

Թեմերից ընտրության մասնակցում էին Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևելյան և Արևմտյան թեմերի, Հարավային Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունաստանի, Նիդրլանդների, Գամասկոսի, Հնդկաստանի, Արարատյան, Շիրակի, Ադրբեջանի և

Քուրմեստանի, Վրաստանի, Հյուսիսային Կովկասի և Նոր-նախիջևանի թեմերի 13 եկեղեցական և աշխարհական պատգամավորներ: Ազգային-եկեղեցական ու մի ժողովվերջին ժամանակներում չի ունեցել երբևեման երկայացուցչական կազմ և պատգամավորների մեծ թիվ. ինչպիսին էին 1945 և 1955 թվականների Ազգային-եկեղեցական ժողովները:

Ի՞նչ հանգամանք կարող է խանգարել նման իրապես պատկառելի Ազգային-եկեղեցական ժողովի գումարմանը, 1980 թվականին կամ հաջորդ տարիներին: Կանոնական տեսակետից մի՞թե նվազ օրինավոր Ազգային-եկեղեցական ժողովներ են եղել այն ժողովները, որոնց մասնակցել են նվազ թվով պատգամավորներ: Այսպես օրինակ՝ 1885 թվականի ապրիլին Մայր Աթոռ Ս. էջմիածնում Մակար կաթողիկոսի ընտրությամբ մասնակցել են «20 եկեղեցականներ 22 ձայնով և 8 աշխարհական պատգամավորներ միայն» (Օրմանյան, «Ազգապատում», Կ հատ., էջ 4597): Քայքայ ժողովը համարվել է օրինավոր: 1892 թվականի մայիսին, երբյան Հայրիկի համազգային քննադատությանը մասնակցել են 77 պատգամավորներ միայն, «տանկանայոց կողմն մեծ Աթոռներու երկու պատրիարքաց երկայացուցիչներ երկա, իսկ երկու կաթողիկոսացր՝ պակաս, վիճակներեն... 21 պակաս» (անդ, էջ 4891):

1908 թվականի հոկտեմբերին Իզմիրյան կաթողիկոսի ընտրության շի մասնակցել Սահակ Բ Խապայան կաթողիկոսը, որովհետև, «Կիլիկիո կաթողիկոսության միակ հրավիր


րագիրը դրված էր ճանուն Աթոռի, մինչ ինքը կպահանջեր, որ 13 վիճակներ զատ զատ երկայացվին ոճտրական ժողովին մեջ» (անդ, էջ 5405), այնուամենայնիվ Ազգային-եկեղեցական ժողովը 77 ձայնով Իզմիրյանին ընտրում է Ամենայն Հայոց կաթողիկոս: 1911 թվականի դեկտեմբերին Գևորգ Ե-ի ընտրությանը մասնակցել են 80 պատգամավորներ: Ընտրությանը նորից չի մասնակցել Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Բ Խապայանը: Ժողովի հրավիրված 71 հոգևորական պատգամավորներից ներկա են եղել միայն 51 հոգի, իսկ 57 աշխարհական պատգամավորներից՝ 29 հոգի միայն («Արարատ» ամսագիր, 1911 թ., դեկտեմբեր):

Վստահ ենք և խորապես համոզված, որ 1980 թվականին ԼՄայր Աթոռում գումարվելիք Ազգային-եկեղեցական ժողովը ևս կլինի յրիվ երկայացուցչական և համազգային բնույթի եկեղեցական մեծ ժողով, ուր, հետմննության, մեր եկեղեցին կօժտվի նոր Սահմանադրությամբ:

Սահմանադրության նախագիծը, Ազգային-եկեղեցական ժողովի հաստատումից և վավերացումից հետո, Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով պաշտոնապես կհրապարակվի և կմտնի Հայ եկեղեցու կյանքի մեջ:

Եկեղեցական նոր Սահմանադրության մշակումն ու կիրառումը մի նոր ու պայծառ ուղիքաց կանի մեր Ս. Եկեղեցու առաջ և կլինի Հայաստանայոց եկեղեցու նորագույն պատմության ճիշատակության արժանի ձեռնարկումներից մեկը:





**ՄԵՆՆԱՑՆ ԼՍՅՈՑ ԼՍՅՐԱՊԵՏԻ ՔՐԻՍՏՈՋՐ
ՓՐԿՉԻ ԼՐԱՃՍՓՆՈՒ ԵՎ ՍՈՒՐԲ ԼՍՐՈՒԹՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԹԻՎ**

(29 մարտի 1959 թ.)

Առաջ Հառության ավետար վերստին կոգեղնչե մեզ բոլորս, և համայն քրիստոսեյա աշխարհի հետ միասին, անիվ և խնդրությամբ, կերգենք փառք աշխարհասասան հռաչքին՝

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵՆՈՑ, ՄԱՀՈՒԱՄՔ ԶՄԱՀ ԿՈՆԵՆԱՑ, ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՄՔԻ ԻՒՐՈՎ ՄԵՉ ԶԿԵԱՆԱ ՊԱՐԳԵՆԻՆԱՑ:

Տարազանների և ստուգության միջև տարուրեվող ու խաբխափող մարդկության, հառուցյալ Փրկչի իշման Ս. Յահարեն, Մենք և՛ կրքենք լույսը հառության, հույսը հոգվա փրկության և վկայությունը կյանքի հաղթության:

Երկու հազար տարիներ առաջ, հռաչքի առավա մը, երբ արևի լույսի հետ «առաջին լույսը» կիջներ աշխարհի վրա, նախախնամության իսկ ձեռքով փակվեցան կապանքները նյութին, և Հիսուս, Որդին Մարդո, մանվան գեղեզմանեն հառությամբ վերստին ծնավ, հավետ պայծառացեկով մարդկային կյանքի մրազնամ երկինքը: Եվ անխնամալի հռաչքը դարձավ ստուգություն, զԱստված փնտռող մարդուն համար, իբրև լուսմը իր ամենասուրբ սպասումիկ:

Հուսացյալ հառագառներ Մեր, դատարկ է՛ քրիստոսի գերեզմանը. «զի՛ խնդրէ՛ք զկենդանին ընդ մեռնալս, չէ՛ աստ, այլ յարեալ (Դուկ. ԻԴ 8):

Մենք կհավատանք Քրիստոսի հառության՝ իբրև աստվածային գերբնական եղելություն:

Մենք կհավատանք Քրիստոսի հառության՝ իբրև հուսա ապավեն և առհավատյա հոգիներու փրկության:

Մենք կհավատանք Քրիստոսի հառության՝ իբրև վեմ՝ սիրո և խաղաղության Ավեաարանին, ու բարի և արգար գործոց հաղթանակին:

Ճշմարտապես «յարեալ» Քրիստոս ի մեռելոց»:

«Արեմն՝ «Ո՛ւր է ման յաղթութիւն քո, ո՛ւր է դժոխք յայրոց քո» (Ա Կորնթ. ԺԾ 55):

Եվ իբրև, քրիստոսեյա մարդկությունը ոգեկան կյանքի երկու հազար տարիներու պառմական փորձը, իր բոլոր իրավ հռաչակիներով, արդյոք ամենավերական ապացույցը չէ՞ հառության ստուգության:

Հնդեն ծնած ու արեւով անած մարդը, իր հոգեկան ուժերով, կբարձրանա նյութի մակարդակին վեր, ինչպես ծաղիկը դեպի լույս, ինչպես կռազը դեպի կապույտը երկնքին, և զնձությամբ կերգի փառքը հառության և հավիտենական կյանքին:

Արդ, սիրտ առե՛ք և ուրախ եղե՛ք, հավատացյալ օրդիք Մեր, և հավատացե՛ք Ս. Հառության շնորհներուն, հավատացե՛ք երջմարտության լույսին, հավատացե՛ք Արդարության Արեգակին, հավատացե՛ք բարիին

ու խաղաղության ուժերուն, «զի Աստուած յոյս է» (Ա Յովն. Ա 8), զի «Աստուած սէր է» (Ա Յովն. Դ 9), զի Աստուած արեւոյնը քայունը «արդարութիւն է և խաղաղութիւն և խնդրութիւն ի Հոգին Սուրբ (Հոռմ. ԺԴ 17):

Ո՛վ աստվածասէր զավակներ հայ ժողովրդայն, որ ի Հայաստան աշխարհ և որ ի սփյուռս աշխարհի ցրված, այսօր Հայոց Հայրապետը, Քրիստոսի Հարության մեծ ավետիստով, ձեզ կբերե հայրական սիրո ողջոյն և հայրապետական օրհնութիւն, ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն:

Մեր ավետիստը բող ձեզ բոլորդ գտնել զվարքերես և արբուն, սիրով միաբան, սուրբ և առաքիլնի, միշտ պատրաստ ի գործս բարիս:

Քող Հարության յույսը ձեր հոգիներէն են ըստ քափանցե և պայծառացնե ձեր մեջ մեծ Հույսը, ինչպես արևը, հաղթական ու կենսարար, կշռղա նյութական աշխարհին ու տիեզերին մեջ:

Քող ձեր կյանքի համբուն բարին շատնա և դու՛ք սուրբեցէ՛ք ի բաց զհին խմորն՝ զի Լորիչի՛ք նոր զանգումը, որպէս է՛նդ անխմոր, քանզի Ձատիկ մեր զենա՛ւ Քրիստոս» (Ա Կորնթ. Ե 7):

Եվ վերջապես, Հարության շնորհներով զեղուն սա օրերուն, մանավանդ դու՛ք, պանդուխտ զավակներ Մեր, գիտցե՛ք ձեր հոգեվոր կյանքը, ձեր Եկեղեցին վերաշինել ու շնեցնել՝ հաշտությամբ, միասնությամբ ու ներքին խաղաղությամբ:

Քող մարդը ու անխռով մնա հայոց սուրբ Լորջարությունը ի Քրիստոս:

Եվ բող իսպառ հեռանան մեր Ս. Եկեղեցվո ու Ազգի կյանքի սահմաններէն ամեն հերձու՛մ, ամեն անբարո՛ւմ: Ոչ ոք բող շտա՛մն քաղաքական պայմանավորումներ պարտադրել կեկեղեցական կյանքին:

Անշափելի պիտի ըլլան ավերիչ հետեւանքները ուղեկորայն այն գործելակերպին, որ ծայր տված է Սփյուռքի որոշ հայ համայններու ծոցին մեջ, բոլորովին արվեստական, բոլորովին անհիմն և անհարգատ կերպով:

Մենք չե՛նք տեսներ ու չե՛նք հասկնար, քե ինչ շան ունին Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը այդ ընթացքէն: Ստույգ է, քե ինչ որ Ս. Էջմիածնէն հափշտակվի ու բաժանվի՝ այդ բացարձակ կորուստ է մեզ բոլորիս համար, համայն հայության համար անխտիր:

Զգո՛ւյ՛ք, զգո՛ւյ՛ք: Անցյալը հիշեցե՛ք և հետուն նայեցե՛ք: Մի մտնա՛ք, որ Ս. Էջմիածինէն

կ'այտնել: Հայ ժողովուրդն և այսպեղ: Հայաստանն է այստեղ: Այստեղ ամեն ինչ սուր է: Այստեղ ամեն ինչ հավերժակա՛ն է: Երեխաները մե՛րն են այստեղ:

Այս Ս. Զատիկի օրով, երբ Ս. Էջմիածնի զանգակները Հարության ավետիստ կուտան, և ցնծագին կենչկցնեն սիրո ու խաղաղության ձայնը, Մենք անգամ մը ևս կվերանորոգենք Մեր իղձը և Մեր մաղթանքը՝ համերաշխության և միասնության, մեր Ս. Եկեղեցվո կանոններու և ավանդությանց յույսին տակ, մեր նվիրապետական Աթոռներու պատմական իրավասությանց հիմուն վրա:

Բա՛ց այնքոյ, ո՛վ ժողովուրդ հայոց և ծանի՛ր զհեզ: Դուն մահկանացու չես: Դուն հավետ անբաժան, կենդանի ես ու կենդանի պիտի մնաս, «քանզի բնի շնորհօք՝ Մերոյ Զարութեան», քո հողիիդ մեջ կան ու կահին՝ հավատքը, հույսը և սերը, և քո զավակներդ, շնորհներով զեղուն, այսօր վերստին կկերտեն նոր յուսաբաց մը կյանքի:

Ձի էթե ամեն գարուն աշխարհին կրբեր նոր կյանք, նոր բնձնություն և նոր գարթոնք, նույնպես և ամեն Ձատիկ մեզ կրբեր մեծ ավետիստ՝ մեր խաչված Ազգի հարության: Այո՛, դատարկ է այսօր մահվան դերեզմանը նաև հայ ժողովուրդին, որ մահը մահով հաղթելով, կապրի, կշինե ու կստեղծագործի իր իսկ Մայրենի սուրբ հողին վրա՝ նոր հունճարով, նոր Երգերով ու նոր փառով:

Արև՛ և յո՛ւյս և ճանապարհ և օրհնություն հայ ժողովուրդին:

Քող մեզ ապավեն ու պանապան ըլլա հարուշյալ Փրկչի շողակաթ յույսով կառուցված ճանառն այս յուսեղեն՝ հոգեծին Մայրը մեր, Սրբազնասուրբ Էջմիածինը, «յորում և դու՛ք բնդ նմին շինի՛ք ի բնակութիւն Աստուծոյ Հոգավ» (Եփես. Բ 22):

Սիրեցյալ և հարազատ զավակներ Մեր, Ս. Հարության շնորհարաշխ ավետիստով և Ս. Էջմիածնի անմար յույսով, հայրական սիրով կօրհնենք զձեզ բոլորդ, բոլորդ անխտիր, շնորհավորելով ձեր Ձատիկը: Եվ Իջման Ս. Սեղանի առաջ շեմագին եռանդով կազութենք ձեր բոլորիդ կյանքի արեւատության ու երջանկության համար, մեր Ս. Եկեղեցվո անասածության և միության համար, մեր նվիրական Մայր Հայրենիքի, Հայաստան աշխարհի ծաղկման ու բարօրության համար, համայն աշխարհի խաղաղությամբ:

«ՔՐԻՍՏՈՍ ԶԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ»:

Շնորհի բնդ ձեզ. ամեն:





Մ Ե Ր Ն Ա Դ Ա Տ Ա Կ Ն Ե Ր Ը



այ ժողովրդի բարեպաշտական զգացմունքների առաջ, նվիրական ու թանկագին են հղել անունները ու խնկելի հիշատակը բոլոր նրանց, որոնք դարերի ընթացքում, հայ ժողովրդի ազատության, հայրենի օշախի անկախության, Հայ Եկեղեցու սրբությունների և հայրենի հավատի համար անձնուրացորեն և հերոսաբար արյուն են թափել: Մեր Եկեղեցին սրբացրել է Եկեղեցու և Հայրենիքի այդ քաջարի մարտիկների խնկելի հիշատակը՝ դասելով նրանց սրբերի կարգը:

1922 թվականին, երչանկահիշատակ Գեփորգ Ծ կաթողիկոսի կարգադրությամբ, Նոր Կիրակին կամ Կրկնազատկի օրը հռչակել է որպես Ապրիլյան մեծ եղեռնի հիշատակին նվիրված Եկեղեցու մեծ սգի օր: Այդ օրը բովանդակ հայությունը, սուրբ պատարագի մատուցմամբ և հոգեհանգստյան պաշտոնի կատարմամբ, Եկեղեցու յեկեղեցիս Հայաստանեայց, ինչպես նշում է Մայր Աթոռի օրացույցը, ոգեկոչում է տխուր հիշատակը Երիւրաւոր Եանաթակաց յընթացս համաշխարհային պատերազմի»:

1947 թվականին, հոգելույս Գեփորգ Զ կաթողիկոսի կարգադրությամբ, Մայր Աթոռի օրացույցում, միացվում է նաև համաշխարհային երկրորդ պատերազմում նահատակվածների հիշատակը, նույնպես Կրկնազատկի կիրակին տոնելի, նվիրված հիշատակին Երիւրաւոր Եանաթակացն մեռոց, յընթացս համաշխարհային պատերազմաց»:

Մայր Աթոռի օրացույցում, վազգեն Ա Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, ապրիլի 24-ը նշված է միանգամ ևս «Յիշատակ նահատակաց, հատկապես ապրիլյան զոհերի հիշատակին նվիրված»:

1915 թվականի Ապրիլի 24-ը...

Հայ ժողովրդի հիշողության ու սրտի մեջ շրկացած երկաթով է գրված այդ ազգասպան զոհերի սև թվականը:

Ապրիլի 24-ը հայկական մեծ եղեռնի տխուր թվականն է, երբ Արևմտահայաստանի մեր խաղաղասեր և շինարար հայ ժողովրդի անմեղ արյունով ոռոգվեց երկիրը, երբ մեր ժողովրդի յավազույն զավակների՝ եկեղեցականների, մտավորականների, արվեստի և գիտության նվիրված և զործարար շրջանակի մարդկանց արյունը հոսեց գետի նման այն հողերի վրա, ուր հազարամյակներով ապրել, գործել, շինել ու ծաղկեցրել էր մեր ժողովուրդը: 1915 թվականին, գարնանը, ավերակների վերածվեցին մեր ազոթքի ու մշակույթի օջախները, քանդվեցին մեր ճարտարապետական կոթողները, մեր քաղաքներն ու գյուղերը, կողոպտվեցին, ուղղնացվեցին անխնա՝ մեր մշակույթի անկրկնելի գանձերը:

Արևմտահայության և Արևմտահայաստանի վրայով անցավ մեծ փոքորիկը խափարամիտ հետադիմության, վայրագության և բարդարարության:

Հայ ժողովրդի գլխին պայթած Ապրիլյան եղեռնը գրեթե իր նմանը լուսնի բարբարոսությունների տարեգրության մեջ:

Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա 1915, 1916 և 1917 շարագուշակ թվականները և իր նահատակներին: Մեր ժողովուրդը աչք լուսնի ոչ ոքի հացին և հողին, և այսօր, եղեռնից մոտ կես դար հետո, վրեժի զգացումով տոգորված չէ ոչ ոքի նկատմամբ:

Բայց մինչև այսօր, մեծ ազնտից վերապրող ամեն մի հայ մարդու հիշողության մեջ, դեռ թարմ են Ապրիլյան եղեռնի կսկրծալի հիշատակը, մեր նահատակված եղբայրների, քույրերի, մայրերի և այլ հարազատների՝ զաղանային սպանությունների արյունոտ պատկերները: Նահատակներից շատերը գերեզման իսկ չունեցան և ընկան տարագրության ճանապարհների վրա: Հայ ժողովրդի նահատակ զավակների նվիրական ոսկորներն են թափված մինչև այսօր մեր պապենական հողերի վրա, Արևմտյան Հայաստանի հողերի վրա:

յաստանից մինչև Միշագետք երկարածղվող տարածությունների վրա:

Կատարվեց մեծ ոճիր, որը քաղաքակիրթ մարդկության սիրտը ցնցեց: Հայության գլխի վրայով մեծ աղետ է կազմում անցավ: Պատմությունը, սակայն, հայ ժողովրդի նահատին գրել էր ոչ քան մեռնել, այլ ապրել:

Վեհափառ Հայրապետը իր անդրանիկ կոնգակով այնքան ճշգրտորեն բնութագրել է հայ ժողովրդի ապրելու տառապանքի նշանակության արժեքը. «Համբարձումի փոխրայց հոգիով մեծ հայ ժողովուրդը իր նախնականությունը գիացավ հաղթանակի վերահալ, և այժմ իր նոր կյանքը կկերտե ան, յուր նոր Հայրենիքի վեց, գմայլանքի արժանի խոյանքով դեպի իր ոսկի ապագան»:

Ապրիլյան եղեռնի օրերին, հայ ժողովուրդը անցավ «բնդ հուր և ընդ սուր», քարուքանդ եղավ մեր պատմական Հայրենիքի մի մեծ մասը, մեր ժողովրդի մի միլիոնից ավելին զոհ գնաց սրի, սովի և հիվանդության, մնացած մասը հյուծված, ամենախղճալի վիճակի և թշվառության մեջ, հայրենագուրկ և թափառական, ցրվից ամբողջ աշխարհով մեկ՝ սղորէն մոլորական աստեղաց, իսկ մի մասը պատստան գտավ Հայրենի հողի վրա՝ Արևելյան Հայաստանում և կերտեց իր ազգային-մշակութային նոր վերածնունդը, տառապանքից, նահատակությունից բարձրացավ, հոգեպես վերածնվեց:

Ժողովուրդները նահատակությամբ չեն մեռնում, եթե անձնասպան շիրեն հոգեպես, իմացասպես:

Եվ ահա ապրիլյան եղեռնից հետո մահվան անդունդի եզրը հասած հայ ժողովրդի մեծ հողին, իր դարձանալի կենսունակությամբ, շարժվեց հզոր ու աննկուն, ապրյան, կոտորածի, փլատակների միջից, հերիաթի փյունիկին նման՝ «հալալ կողմից սրը հայ ժողովրդի»:

Մեր ժողովրդի այդ ծանր, մղձավանջային օրերին, եզրայրական օգնության ձեռք կարկանդակ նրան ուս աղնիվ ժողովուրդը, ոտքի կանգնեցրեց նրան և սկսեց բուժել հայ ժողովրդի վերքերը:

Ցավի և մոխիրների տակից վերածնվեց հայ ժողովուրդը, վերադառավ իրեն այնքան պակասած խաղաղությունն ու անվտանգությունը, տեր դարձավ իր ազատության, հողին, իր աշխատանքին, իր պատվին ու կյանքին, մեկտեղվեց ու զարձավ ուժ, ու պետականորեն կառուցեց իր հայրենի քաղաքոված օջախը, սովետական եղբայրական ժողովուրդների ապահով ընտանիքում:

Հայ պետականության վերականգնումը մեր օրերի հայ ժողովրդի մեծագույն նվաճումն է և հաստատուն գրավականը նրա ապագա մեծ հաջողությունների:

Սակայն 1941 թվականին նորից ծանր մի արհավիրք կախվեց մեր երկրի և ժողովրդի վրա, Հայրենական Մեծ պատերազմի ծանր օրերն էին: Ոտքի կանգնեց հայ ժողովուրդն էլ՝ իր արյունով պաշտպանելու իր ազատ կյանքը, անկախ պետականությունը, ժողովրդական տնտեսությունն ու հոգևոր մշակույթը, ձեռք-ձեռքի տված Սովետական մեծ երկրի եղբայրական ժողովուրդներին: Հայ ժողովուրդը, իր ազգային ինքնուրույնությունը պահպանելու համար, այս անգամ ևս զանգվածաբար գրոհեց Հայրենի երկրի թշնամիների դեմ, ֆաշիզմի մուկ ու բռնակալ ուժերի դեմ, և հայրենանվեր, անձնուրաց սրայքարով ու նահատակությամբ փառքի նոր էջեր ավելացրեց մեր ազատագրական պայքարի հերոսական պատմության անմոռանալի էջերի վրա: Ժողովուրդը անձնվիրաբար զոհվեց, հանուն Հայրենիքի և քաղաքակրթության, Կովի ղողոր ճակատներում ընկան, նահատակվեցին թշնամու դեմ անհավասար, բայց հերոսական մարտում նաև հայ ժողովրդի զավակները ու տարան հաղթանակը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին հարգում և մեծարում է նաև վերջին Հայրենական Մեծ պատերազմում ընկած իր նահատակ որդիների հիշատակը:

Իզուր չի անցել սակայն նրանց նահատակությունը, Հայրենիքի և հայ ժողովրդի համար նրանց թափած սուրբ արյունը:

Նրախտագետ հայ ժողովուրդը, գալիք սերունդները, մեծ հարգանքով և սրբությունով կպահեն իրենց հոգում հայ նահատակների հիշատակը:



**ՓԻԿՁԻ ՀՐԱՇԱՓՈՒ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒՔՅԱՆ ՏՈՒՆԻ
ԱՌՔԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՄՔՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ
ԵՎ ԿԱՔՈՂԻԿՈՍ ԵՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒՔՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱՋԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ԳՐՈՒՔՅՈՒՆԷ ԻՌԻՑՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻՆ**

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐԲ
ՆՈՐԻՆ ՍՐՔՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻՒՆ (ՄՈՍԿՎԱ),

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐԲ-ԿԱՔՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐՔՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔԻՍԵՂԵԿ Գ-ԻՆ (ԹՔԻԼԻՍԻ),
ՔԵՆՏՐԱՔԵՐԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՋԵՈՖՖՐԻՒՆ
(ԼՈՆԴՈՆ),

ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼԻ ՊԱՏՐԻԱՐԲ
ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԴՈՍԻՈՍԻՆ
(ԴԱՄԱՍԿՈՍ),

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԲ
ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏԱՓՈՐԻՆ
(ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ),

ՌՈՒՄԵՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԲ
ՆՈՐԻՆ ՍՐՔՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (ՔՈՒԽԱՐԵՍ),

ՔՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԲ
ՆՈՐԻՆ ՍՐՔՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻԼԻՆ (ՍՈՖԻԱ),

ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՇԵԼԼԱԴԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԿԼԻՏՈՍԻՆ
(ԱԹԵՆՔ),

ԵԹՈՎՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԲ
ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՔԱՍԻԼԻՈՍԻՆ
(ԱԴԴԻՍ-ԱԲԵՔԱ),

ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՐ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (ՏԱԼԼԻՆ),

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՐ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (ՌԻԳԱ):

Մեր Տիրոջ և Փրկչի հաշտական հառուրդան մեծ ավետիսով Լեջանիկ
հե՛մ ողջունելու՝ Ձերոյ Սրբությունը, մազթելով, որ Տերը ծաղկած պահի
Ձեր հովվապետական գավազանը երկաթ տառիներ, սուրբ գործոց հաջողու-

րյաժք, ի պայծառությամբ Ձեր Ս. եկեղեցվային և համրապնդումն բրիտանոնեա-
կան բոյժը եկեղեցիներու հղբայրության:

Քող հարուցյալ Փրկչի սիրո և խաղաղության ոգին յուսավորե մեր հա-
նապարհը և մեր ձեռաց գործերը, ի փառս Աստուծո և հերթանկություն մեր
ժողովուրդներուն:

«ՔՐԻՍՏՈՍ ԶԱՐԻԱՒ Ի ՄԵՌԵՍԻՆՅԱ»:

Սղբայրական անկեղծ սիրով՝

Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա.

ՊԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Է. Մ. Ի. Ա. Ն. Ի.

**ՓՐԿՁԻ ՀՐԱՇԱՓՈՒ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒՔՅԱՆ ՏՈՒՆԻ
ԱՌՔՈՎ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒՔՅՈՒՆ Տ. Տ.
Վ Ա Ջ Գ Ե Ն Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ԳՐՈՒՔՅՈՒՆԸ ՆՎ.ԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՔՈՒՆԵՐԻ
ԳՈՒՀԱԿԱԼՆԵՐԻՆ ԵՎ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԳՆԵՐԻՆ
ԵՎ Վ.ԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՈՎ,
ՍՏԱՅՎԱԾ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ**

Քրիստոնեական հավատքի սյուն Մայր Աթոռ Ս. էջմիածնեն Ձեզ կրեւեմ
ավետիսը մեր Տիրոջ և Փրկչի հրաշափառ հարուրթյան, Մեր հայրական սրտեն
բխած ամենաբարի մաղթանքներով և հայրապետական օրհնությամբ հան-
դերձ, զի

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ, ՄԱՀՈՒԱՄՔ ԶՄԱՀ ԿՈՒՅԵԱՑ ԵՒ ՅԱՐՈՒ-
ՔԵԱՄԲՆ ԻՒՐՈՎ ՄԵՉ ԶԿԵԱՆԱ ՊԱՐԳԵՒԵԱՑ»:

Հարուցյալ Փրկչի Իջման Ս. Սեղանի առաջ, սուրբ հույզերով և իղծերով,
սրտեռանգն կաղոթեմք, որ կենարար հարուրթյան շնորհները առատապէս
բաշխվին Ձեզ, տեղվույզ քահանայից աստվածասեր դասուն, ազգային-եկեղե-
ցական և բարեսիրական կազմակերպությանց բարեպաշտ անդամներուն և մեր
սիրեցյալ ու հարազատ հավատացյալ ժողովուրդի բոլոր զավակներուն, սյու-
րբեղով ամենուր քաջառոյշ ու բարօր կյանք և զօրծոց հաջողութիւն, ճոզևոր
կյանքի շինության Ձեր հանապարհին վրա:

Քող Տերը զՁեզ բարօր պահէ-պահպանէ խաղաղ ու անվրդով, սիրով
միաբան, մեր նախնայց սուրբ հավատով զօտեպիճը, և միշտ հավատարիմ
աստվածատուր Ս. էջմիածնին:

«ՆՆՈՐԻՑ, սէր և խաղաղութիւն Փրկչին մերոյ Տիրուսի Քրիստոսի եզիցի՞ն
ընդ Ձեզ ընդ ամենեսին, այժմ և միշտ և յա:իտեանս. ամէն»:

Վ Ա Ջ Գ Ե Ն Ա

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Փրկչի Ս. Հարուրթյան հրաշափառ տօնի առթիվ նմանօրինակ շնորհավո-
րական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կրօնական խորհուրդնե-
րին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վար-
չության (Նյու-Յորք), Գալուստ Կյուպեէկյան հիմնադրության Կենտրոնական
խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժոզե դե Ազեւեդո Պերտիգաու-
յին (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. էջմիածնի տպարանի հանձնախմբին (Նյու-
Յորք), Արգարյան ավանդի և Ս. էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին
(Լոնդոն), Մայր Աթոռ Ս. էջմիածնի օժանդակ հանձնախմբին (Քէյրութ), Մայր
Աթոռի բարեբարեբերին և ազգային ծառայողներին, հայրենակցական, մշա-
կութային, բարեսիրական, տիկնանց, Երիտասարդաց և օրիորդաց կազմակեր-
պություններին:

**ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ Ա Ջ Գ Ե Ն Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

ԷԶՄԻԱՅՈՒ

Սրտագին շնորհավորություններ Ա. Զատկի առթիվ, Ձերդ Վեհափառության Բազմադրության և Մայր Աթոռի բարգավաճման մաղթանքներով:

ԽԱԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԳԱՐԱՊՈՍ

Ա. Զատկի առիթով ընդունեցե՛ք բոլորիս շնորհավորանքը և սրտագին մաղթանքները Վեհի՞դ Բազմադրության, արևշատության և եկեղեցանվեր անխոնջ ջանքերու պողատատ արդյունավորության, Ս. Աթոռին անասան պանպանման և պայծառացման համար:

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ՍՏԱՄՐՈՒԼ

Ա. Զատկվան առթիվ մեր և միաբանության կողմե կներկայացնե՛ք Ձերդ Ս. Օծության մեր ամենաճարգալի շնորհավորությունները, մաղթելով Ձերդ Վեհափառության և Մայր Աթոռին երջանկության և բարգավաճում: Թող Ամենակառողը հաջողությամբ պսակե Ձեր բոլոր ձեռնարկությունները:

ՍՈՒՐԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԵՐՈՒՍԱԿՈՐ

Փրկչի ճրաչափառ և Ս. Հարության տոնի առթիվ, Վեհափառ Հայրապետի անունով, ստացվեցին նաև ուրիշ բազմաթիվ շնորհավորական գրություններ և հեռագրեր թեմակալ առաջնորդներից, ազգային պաշտոնական մարմիններից, կազմակերպություններից, Մայր Աթոռի բարերարներից և եկեղեցական ու աշխարհական ազգային ծանոթ դեմքերից՝ Նորին Ա. Օծության կյանքի արևշատության և Մայր Աթոռ Ա. էջմիածնի պայծառության սրտագին բարեմաղթություններով:



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ռ Ի Մ

ՄԱՐՏԻ 4-ԻՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ սկսվեցին Ս. Սեղանի վերակառուցման աշխատանքները. Այս առթիվ Վեհափառ Հայրապետը իր համաձայնությունը տվեց, որ Հայկական ՍՍԹ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի կողմից կատարվեն պեղման աշխատանքներ: Պեղումները կղեկավարի ճարտարապետ Ալեքսանդր Սահինյանը:

Ս. Սեղանի վերակառուցման աշխատանքների ընթացքում սուրբ պատարագը կմատուցվի Իջման Ս. Սեղանի վրա:



ՄԱՐՏԻ 8-ԻՆ, ԳԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարի Ավագ Սեղանի վերաշինության պատճառով, սուրբ պատարագը մատուցվեց Իջման Ս. Սեղանի վրա: Պատարագեց հոգեշնորհ Տ. Ղուսիկ արեղա Սանթրոյանը և քարոզեց հոգեշնորհ Տ. Մաշտոց արեղա Թաշիրյանը՝ աչրի կնոջ երկու լումաները-ի բարության մեծ արժեքի մասին:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ՄԱՐՏԻ 9-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ժամը 3.30-ին, Հոգևոր Ճեմարանում դասախոսեց Ճեմարանի եվրոպական երաժշտության ուսուցիչ Մովսես Շարբաթյանը՝ «Կոմիտաս վարդապետը և նրա երաժշտությունը» շահեկան թեմայի շուրջ, որը լսվեց մեծ հետաքրքրությամբ:



ՄԱՐՏԻ 9-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հավաքույթ, նվիրված հոգեշնորհ Տ. Մաշտոց արեղա Թաշիրյանի քարոզի քննարկմանը:



ՄԱՐՏԻ 12-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ժամը 3.30-ին, Հոգևոր Ճեմարանում դասախոսեց ճարտարապետ Լիպարիտ Սաղոյանը «Հայերեն տպա-

գրական տառերի բարեփոխությունը» շատ այժմեական թեմայի շուրջ, որը լսվեց խորոնկ հետաքրքրությամբ:

Դասախոսության ներկա էր Վեհափառ Հայրապետը: Վերջում վերատեսուչ սրբազանը ջերմ շնորհակալություն հայտնեց շահեկան դասախոսության համար:



ՄԱՐՏԻ 13-ԻՆ, ՈՒՐԱԿՔ, թեմական գործերով Մայր Աթոռ ժամանեցին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը, Վրաստանի հայոց առաջնորդի պաշտոնակատար հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը, Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը, Բաքվի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը:

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել հոգեշնորհ վարդապետներին:

Ամսի 16-ին առաջնորդական փոխանորդ վարդապետները վերադարձան իրենց թեմերը:



ՄԱՐՏԻ 14-ԻՆ, ՇԱԲԱԿ, «Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի շարչարանացն» Փակ է Հոգևոր Ճեմարանը: Օրվա մեծ տոնի առթիվ Իջման Ս. Սեղանի առաջ հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը:



ՄԱՐՏԻ 15-ԻՆ, ԳԱՆՍՏՅԱՆ ԿԻՐԱԿԻՆ, Իջման Ս. Սեղանի առաջ պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը և քարոզեց Բաքվի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը «Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէս» քննարկումով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ՄԱՐՏԻ 16-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱՐԹԻ ԵՐԵՎԱՆ, Վեհաբանում տեղի ունեցավ միաբանական լավագույնի, նվիրված հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետի քարոզի քննարկմանը:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Մեծ պահոց օրերին Մայր Աթոռի բոլոր սարկավազները քարոզեցին մայրաքաղաքի եկեղեցիներում և էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցում:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը շինիչ ու թելադրական խրատներ տվեց սարկավազներին և խոսեց «Ինչպե՞ս պետք է քարոզել» թեմայի շուրջը:



ՄԱՐՏԻ 19-ԻՆ, ՀԻՆԳՇԱՐԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ծննդարանի ուսանողությունը հանդիսավորապես երգեց վերջին Արևազալի ժամերգության երգերը, ապրումով ու հուզումով:

Արևազալի ժամերգության ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ՄԱՐՏԻ 22-ԻՆ, ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Աթոռում ավանդական շուքով կատարվեցին Մաղկազարդի և «Դոնբայցէք»-ի եկեղեցական արարողությունները: Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Հոգևոր Ծննդարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արարհամյանը:

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզեց պատարագիչ սրբազանը՝ նկարագրելով Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ, վեր հանելով նրա բարոյական նշանակությունը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան տեղի ունեցավ հանդիսավոր «Դոնբայցէք»-ի արարողությունը:



ՄԱՐՏԻ 22-ԻՆ, ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցում, սուրբ պատարագի ընթացքում, սարկավագ ձեռնադրեց ուրարակիրներ Հովհաննես Եղիայանին (ծնված 1926 թ.) և Վարուժաճ Առաքելյանին (ծնված 1936 թ.): Հովհաննես սարկավագն ընդունվեց Մայր Աթոռի միաբանության շարքերում, իսկ Վարուժաճ սարկավագը, Թաքի հայոց եկեղեցում սպասավորելուց

հետո, Տիրոջ օգնականությամբ քահանա կանոնադրվի:

Երկու սարկավագներն էլ երիտասարդ նորուժեր են, Հայ Եկեղեցուն ծառայելու ջերմ ուխտով տոգորված:



ՄԱՐՏԻ 25-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱՐԹԻ, արձակուրդ տրվեց Հոգևոր Ծննդարանի ուսանողության զատկական տոների առթիվ: Երեկոյան ժամերգությունից հետո ուսանողությունը խոստովանվեց Մայր Տաճարում: Վերատեսուչ սրբազանը, «արձակում» տալուց առաջ, ուսանողությանը խոսեց թովանդակալից և դաստիարակչական մի խրատական, խոստովանանքի հոգևոր արժեքի և բարոյական նշանակության մասին:



ՄԱՐՏԻ 26-ԻՆ, ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱՐԹԻ, «Յիշատակ ընրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Առավոտյան ժամերգությունից հետո Մայր Տաճարում պաշտվեց սուրբ պատարագ: Պատարագիչն էր Հոգևոր Ծննդարանի փոխ տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը:

Սուրբ պատարագի ավարտին Հոգևոր Ծննդարանի ուսանողությունը ստացավ Ս. Հաղորդություն:

Երեկոյան ժամը 5-ին, գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի հանդիսարողությամբ, կատարվեց Ռտնավայի հանդիսավոր կարգը:

«Ի գիշերին հսկումն էս, ժամը 7-ին զողանջում են Մայր Տաճարի զանգերը: Հսկումի ժամն էլ, Վեհափառ Հայրապետը իջնում է Մայր Տաճար և կարդում առաջին Գիրքը: Տիրոջ մատնության գիշերն էլ, «Փառք ի բարձունս»-ից հետո քարոզում է գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը՝ «Յուզա, համբուրելի՞ր՝ մատնես զվարդապետն» ընթացքով:



ՄԱՐՏԻ 27-ԻՆ, ՈՒՐԱԱԹ, «Յիշատակ շարժաբանաց և խաչելուրեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Առավոտյան ժամը 9-ին կատարվում է հանդիսական կարգը:

Երեկոյան ժամը 5-ին Քաղման կարգն էլ նախագահում է Վեհափառ Հայրապետը:



ՄԱՐՏԻ 28-ԻՆ, ՇԱՐԱԹ, «Ըրագալույց Զասուկի»: Հարության Երագալույցի երեկոն էլ, Հոգևոր Ծննդարանի ուսանողներից շորս հոգի

հաշոդ վերստի ընթերցում են Դանիելի գիրքը, որից հետո սկսվում է սուրբ պատարագը: Պատարագին է գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը:

Ճրագալույցի սուրբ պատարագին ներկա է Վեհափառ Հայրապետը:

Հավարտ սուրբ պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափոթով, ձևյուր յարեալ շարականի երգակցությամբ, առաջնորդվում է Վեհարան:



ՄԱՐՏԻ 29-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ՎՋԱՏԻԿ ԵՐԱՐՈՒՅԹԱՆ ՏԵՄԵՆ ԴԻՍՏՐԻԿՏՐԱՆ:

Գարուն է ամեն կողմ և տոնական տրամագրություն Մայր Աթոռում:

Վեհափառ Հայրապետը, առավոտյան ժամը 11.30-ին, առաջնորդվում է Մայր Տաճար, մատուցելու Ս. Հարություն տոնի հանդիսավոր սուրբ պատարագը:

Հայրապետական պատարագի ժամանակ Ս. Սեղանին սպասարկում են Մայր Աթոռի եպիսկոպոսներն ու վարդապետները: Մայր Տաճարի երգախումբը, պր. Հրանտ Գևորգյանի ղեկավարությամբ, երգում է սուրբ պատարագը: Սուրբ պատարագին ներկա են Գերագույն Հոգևոր Խորհրդի, Վերստուգիչ հանձնախմբի անդամները, Հոգևոր Ճեմարանի

դասախոսները, Մայր Աթոռի պաշտոնեությունը և այլ հարգարժան անձնավորություններ:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհարանում, Վեհափառ Հայրապետը ընդունում է զատկական շնորհավորություններ, ապա օրհնում է և բարեմաղթություններ կատարում Մայր Աթոռի և Հայաստանյայց Եկեղեցու պայծառության, Հայրենի երկրի և ժողովրդի խաղաղ առաջընթացի և աշխարհի խաղաղության համար:

Ժամը 4-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է զատկական Իր սեղանին մասնակից դարձնել Մայր Աթոռի միաբանություն, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամներին, Ճեմարանի դասախոսներին, Մայր Աթոռի պաշտոնեության և այլ պաշտոնական անձնավորություններ:



ՄԱՐՏԻ 30-ԻՆ, ԵՐԿՐԱՆԻ ՄԱՐԿԱՐՏԻ, ՎՋԱՏԻԿ ԵՐԱՐՈՒՅԹԱՆ: Պատարագից հոգեշնորհ Տ. Մատթոս արքեպիսկոպոսը, Հավարտ սուրբ պատարագի կատարվեց Վեհափառ Վան համար էն նշեցելոցը:





Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՐՊԻՍՅԱՆ,

Գ Ր Ի Գ Ո Ր Տ Ե Թ Ե Վ Ե Ց Ի *

Ե Ր Կ Ե Ր Ը

Գրիգոր Տաթևացիի համարվը մեծ եղած է ոչ միայն ֆր սրբակրոն վարքով, ուսուցչական-մականվարժական գործունեությամբ, այլ նաև մատենագրական վաստակով:

Ան գրած է բազմաթիվ աշխատություններ, որոնցմե շատերը տակավին կկարոտին խոր և սխտեմատիկ ուսումնասիրության: Իր աշակերտը՝ Թովմա Մեծոփեցին, անոր մասին կգրե. «Վարդապետն ամենաթն հայոց, երկրորդ լուսաւորիչն և աստուածաբանն՝ զեր ի վերոյ զոլով ամենայն իմաստասիրաց և վարդապետաց հնոց և նորոց»²³, Եվ այս ձրի վերագրում մը չէ: Եվ իրապես Հին և Նոր Կտակարաններու, կրոնական երկերու գիտութենեն զատ, Տաթևացին ուսումնասիրած էր նաև ֆմաստասիրական և արտաքին աշխարհիկ գիտությունները, որոնցմով զինված՝ ան մեծ հմտությամբ վարդապետներ պատրաստեց Հայ Եկեղեցվո համար և պայքար մղեց ունիթոսական շարժման դեմ, հանդիսաւալով ջերմ պաշտպանը Հայ Եկեղեցվո ուղղափառության, խոսելու, գործելու և առաջնորդելու ինչտ պատրաստ:

Գրիգոր Տաթևացիի աշխատասիրությունները հետևյալներն են.

1. «Նորին Գրիգորի [Տաթևացու] աշակերտի, Համառոտ տեսութիւն ի Գիրս Պորփի. րի»։ Տպված 1793-ին, Մադրաս:
2. «Ծոռամեծին Յովհաննու հայոց փիլիսոփայի և վարդապետի, Հաւաքումն համառոտ վերլուծութեան Ստորոգութեանցն Արիստոտէլի, աշխատասիրեալ ի Գրիգորէ աշակերտէ»:
3. «Նորին Յովհաննու Որոտնեցույ, Համառոտ լուծումնք Պերի Արմենիասի գրոցն, հաւաքեալ ի Գրիգորէ աշակերտէ»:
4. «Նորին Գրիգորի աշակերտի Յովհաննու Մեծի, Համառոտ լուծումն Առաքինութեանցն Արիստոտէլի»:
5. «Նորին Գրիգորի, լուծումն համառոտ ի խրատ գրչութեան Գէորգեայ վարդապետի, զոր նախ խնդրեալ էր Կոստանդիոյ գրչի և ապա Դոյներիցանց Ստեփանոսի», գրված 1408-ին Մեծոփա վանքին մեջ:
6. «Նորին Գրիգորի աշակերտի Յովհաննու Որոտնեցույ, լուծումն համառոտ դժուարիմաց բանից ի գիրս գրչութեան որոյ Արիստակիսի հեռորէ», գրված 1408—1409-ին Մեծոփա վանքին մեջ, վերլուծական աշխատանք մըն է:
7. «Ոսկեփորիկ, Հաղցումն խոճայ Մասուղշայի և պատասխանիք Գրիգորի»:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1958 թվականի № 9-ից:

²³ Թովմա Մեծոփեցի. «Պատմութիւն», էջ 50:

8. Վերջին Գրիգորի [Տաթևացու], Դաւանութիւն հաստոյ շորեցտասան աստիճանաւ, զոր ժողովեալ այսպէս դաւանիմք հասարակ բանիւ և համառօտ բանիւ, կամ թագազս գաւազան տալոյ՝:

9. Երիգորի աշակերտի Յոհնաննու եռամեծի աշխատասիրեալ, Ի լուծումն պարապմանց սրբոյն Կիւրղի, ի խնդրոյ ումեմն բունասիրի Գէորգեալ նորին հարազատի, գրուած 1391-ին, Վարապմանց կկոչվի այս գիրքը, որովհետև հերձվածներու բոլոր հարցումներուն սպառիչ և անթերի պատասխաններով կպարապի:

10. Սեահմանադրութիւն դաստիարակութեան նորածնելոց մանկանց, որք հրաւիրելոց իցեն յաստիճան քահանայութեան, կրատք հարկատրք և պիտանիք, արարեալ մեծի վարժապետին Գրիգորի հետորինն (տես Վաշտոց Զեռնադրութեան, էջ 1—53):

11. Երիք հարցմանց:

12. Վնդդէմ Տաճկաց, որ Երիք հարցմանց-ի ամբողջական մեկ գլուխն է, տպագրութեան ատեն դուրս ձգված:

13. Երիք փոքր հարցմանց ի խնդրոյ Գէորգեալ Երզնկացու, գրված 1387-ին:

14. Երիք Գրիգորի Տաթևացու առ Կաթողիկոսն ի Կիլիկիա:

15. Արձակմանն աղօթք, արարեալ մեծի թարունապետին Գրիգորին:

16. Երանութիւն հաստոյ, Քարոզագիրք, կրակականայ երկու հատորներ, ա. Վեմարան, բ. Վեմերան,

17. Վասն Աթոռոյն Աղթամարայ:

18. Վեկնութիւն գովեստից, տօնից տօնականաց, ի պատիւ սրբոց, ի պատճառ գիտութեան տիմարաց, մանաւանդ Վ յաղբիրս արտասուաց՝ անձանց թախծեալ, յաւետ ի ճշմարտութիւն կարգաց ուղղափառադ, ի յեղծումն բարբանջմանց շարափառաց:

19. Վասն կազմութեան մարդոյ, Տաթևացին այս հատորին մեջ կխոսի մարդու ծագման մասին, Կառաչարտն այն տեսակետը, որ ստեղծագործութիւնը անկատարեն դեպի կատարյալը գացած է. այսպես, սնախ զոյացած վ ավելի անկատարը՝ տնկականը (բույսը), հետո զգայականը (կենդանին) և ապա բանականը (մարդը), ըստ որում ամեն ինչ կզարգանա անկատարեն դեպի կատարյալը: Սերմի նյութի մեջ Արարչի հրամանով զոյացած է ակազմողական զորութիւնը:

Տաթևացին ունի նաև բազմաթիվ լուծումներ և մեկնութիւններ. այսպես՝

20. Վեկնութիւն արտաքին Գրոց Գրիգորի Տաթևացու:

21. Վեկնութիւն Յորայ կամ Համառօտ լուծումնք դժուարիմաց բանից ի մեկնութիւն

գրոց Յորայ և ի բանս մեկնաց, որու հորինման մասին հեղինակը հետևյալը կգրի. «Ի վաղուց հետէ փափաքէի բոլոր մեկնութեան Յորայ. և ի թուականութեանս Հայոց ՊՄԷ (1408) ամի, եկեալ մեր յերկիրս Քալբերունի, և ձմերեալ ի հրեշտակարնակ վանս Մեծոփայ, ի սպասու դամբարանաց վարդապետացն սրբոց և ընթերցմանց, հաւաքեցի զգժուարարոյժ բանս Յորայ, և զմեկնողաց նորա, և այլ սակաւ ինչ լուծումն Արիստակէսի և Գէորգայ Վ խրատս գրչութեան. ընդ միւսն և զքաղուածոյ մեկնութեան Յովհաննու Աւետարանչի, և ընծայեցի ի պատիւ սուրբ տեղոյս ուսումնասէր անձանց»:

22. Երիգորի լուծումնք համառօտ ի տեսութիւն Դաւթի ներգինացու, ազգաւ հայ, իմաստութեամբ հելլենացի:

23. Վեկնութիւն Աւետարանի Մատթէոսի:

24. Նորին Գրիգորի [Տաթևացու] լուծումն համառօտ ի տեսութիւն Դաւթի, կամ Վեկնութիւնք դժուարիմաց բանից և քաղուածոյ Աղթամարաց Դաւթի, որու հորինման մասին հետևյալ տեղեկութիւնը կուտայ. «Հաւաքեցի... Վ նեղ ի ստորասուղեալ ժամանակի, տրուեմ բունակալն Թամուր, թոյլտուութեամբ վերին խնամոց, տիրեալ բազում աշխարհի և աւերեալ և կործանեալ յայսմ ամի ՊՄԳ (1405) թուի. Եւ պատճառ շարժութեան (շարժառիթ) վերստին քաղուածոյ՝ նախ մեծին Վարդանայ համառօտ և խորին տեսութիւն, որ անյայտ մնար միշտ, հոգացալ յայտնի և ընդ արձակ ցուցանելու Երկրորդ զի զառաջին քաղուածոյն կարի կարճ և պակաս թուէր»²⁴:

25. Վաղուածոյ մեկնութիւնք Վեկնաց և Վերգ Երզնցի:

26. Վաղուածոյ մեկնութիւն Մատթէոսի Աւետարանի. (6 հատոր), ուր հեղինակը հիշված է, Վարդաթուն... աշակերտ Յովհաննու Արտանեցու:

27. Վաղուածոյ մեկնութիւն Յովհաննու Աւետարանին:

28. Վաղկաքաղ մեկնութիւն Եսայայ, ի լուսաւոր բանից տեսն իմոյ և վարժապետին Յովհաննու Արտանեցու:

Ինչպես կերևի այս թվումեն, կրոնական ամբողջ մատենագրարան մըն է Տաթևացի երկասիրութիւնը: Մեկիկ-մեկիկ ներկայացնել անոնցմէ յուրաքանչյուրը՝ տարիներու աշխատանքի և խոր ուսումնասիրութեան կկարողի: Պիտի ջանանք ավելի մտտեն ծանոթանալու Վարդագիրք-ին և Երիք հարմանց-ին, որ իր գլուխ-գործոն է: Բայց նախ երկու խոսք Վեկնագիրիկի մասին, որ աստվածաբանական հավաքածո մըն է:

²⁴ Վեկնութիւն հայոց, էջ 23—24:

«Ոսկեփորիկ» կամ «Հարցումն խօճայ Մասուղչայի և պատասխանիք Փրիզորի» հավաքված է 1383-ին, և կրազկանա շորս հատորներն: Այդ առթիվ հեղինակը հետևյալ տեղեկությունը կուտա. «Հաւասքեցի զգիրս Աստուածարանութեան, որ անուանեալ կոչի Ոսկեփորիկ: Արդ՝ գրեցաւ սա ընդ հովանեալ: Ա. Առաքելոցս, Առաքելական Աթոռոյն Եւսաթէի, և այլ բազմահաւք սրբութեանց, ի նեղ և ի նուազեալ ժամանակի, թուականութեան մերոյ ազգի ՊՁԶ-երորդի (1407): Ի խնդրոյ ումեմն Բարեպաշտ խօճայ Մասուղչայի, ընկուծեալսն ի սեպուհ արանց Դարէժ քաղաքի: Զոր խնդրեաց բազում անդամ գրով և լանի: զրել յազազս Սրբոյ Երրորդութեան և յազազս լՔրիստոսի աստուածութեան: Եւ ես տկարս ոգւով և ծիրեալս մարմնով՝ գրեցի և հաւաքեցի ի սրբոց զճշմարիտն և զուզիղի կարճատարանիւք, և ի շորս հատոր բաժանեցի վասն դիրութեան ընթերցողացս»²⁵:

Փրքի անվան մասին կգրե ուրիշ տեղ մը, «որ անուանեալ կոչի Ոսկեփորիկ, զի բատիրին և զանունն եղեալ ունի, ոսկի՝ այսինքն անապական և պատուական դանձիւք աստուածային առլցեալ, որ և զստացաւ իւր և զսիրող իւր և զսիրողս աստուածութեամբ փարթամացուցանէս»²⁶:

«Ոսկեփորիկ»-ի ըրվանգակութիւնը Ա. Երրորդութեան և Քրիստոսի աստվածութեան մասին է: Հեղինակը զանոնք հավաքած է զանազան հեղինակներու գրվածքներին:

«Ոսկեփորիկ» թիվ 5118 ձեռագիր օրինակին մեջ Ռատակես Սերաստացի կգրե.

«Փանձս այս բազմալեզուն
Եւ մարգարիտ պատուելազուն,
Ցանմահական ծովէ հոգուն,
Պարզե տուաւ մեզ ի վեհոյն.
Ցեռամեծէ՛ ըսրունոյն...»:

Տաթևացու մյուս կարևոր գործն է՝ «Դաւանութիւն հաւատոյ, Քարոզագիրք», որ ավարտած է 1407-ին. Գիրքը կրազկանա երկու հատորներն՝ Ձմեռան և Ամառան: Առաջին հատորը կրնդգրկե Մնունդեն մինչև Հոգեգալուստ և կպարունակե 184 քարոզներ, իսկ երկրորդը՝ Հոգեգալուստն մինչև Ավագ տոները և կպարունակե 160 քարոզներ:

«Աստուածահաճոյս, «հոգեկարդ» և արդժաշնորհ՝ վարդապետին այս գործը կոչված է «հոգեբրուիս և աստուածախոս մատեան»: Իր քարոզներով ան հանդիսացալ մեծագոյն պաշտպանը Հայաստանյայց Եկեղեցւոյ, պաշարեցալ կորովով և գիտութեամբ

ունիթոններու ոտնձգութեանց դեմ և պաշտպանեց Հայ Եկեղեցւոյ դավանանքը խոսքով և գրով: Ընթ ըլլալով «քաջ հոնտոր» և «աստվածարան վարդապետ», զարկ տվալ հոնտորական քարոզչական արվեստին և ճոխացուց վարդապետական տեսութիւնները և հասցուց բեմբասաց քաջ վարդապետներ:

Քարոզագրքի մասին Տաթևացին երեք պատճառ կթվե. «նախ՝ հարկեցեալ յեղբարց համաշունչ աշակերտաց. երկրորդ՝ զի ոչ զոյր գիրք քարոզաց մերս վարդապետաց, բայց միայն խորին ասացուածք, և երրորդ պատճառ, զի ես տարտամ հոգւով և ծոյլ մարմնով ոչ կարացի բազմաց քարոզել, վասն որոյ հնարեցայ զգիրս քարոզաց, զի և ինձ մասն լիցի ընդ ձեզ բարեացս»²⁷:

Տաթևացին նշանավոր քարոզիչ մը եղած է: Հաճախ ան իր քարոզները արարերեն լեզվով ալ խոսած է, և պարզաբանած, թի Քրիստոս որպես Աստված քարոզած է և ալլազգիներեն շատեր հավատացած և մկրտված են: Տաթևացիի քարոզները այնքան խոր տպավորութիւն ձգած էին տաթևացիներուն վրա, որ հետագային գիտակցարար բազմաթիւ նահատակվողներ եղան իրենց կյանքին և Եկեղեցիին համար: Տեղին է հոս մեջ բերել Տաթևի ժողովրդական ասացվածքը. «Լույսը Լուսաւորչի հաւատին, վա՛յ ուրացող մարդին»²⁸:

Տաթևացիի Քարոզագիրքը շատերու համար դարձալ օգտագործելի աղբյուր և դասագիրք քարոզութեան, հոնտորական արվեստի: Ձեռագիրներու մեջ շատ բարձր կգնահատվի անոր արժեքը: 1425-ին ընդօրինակված Քարոզագրքի ձեռագրի մը կմեջբերենք հետևյալ հատվածը, որ Ստեփանոս ստացողին հիշատակարանն է.

«Ձի և ես վազուց [է] ցանկացեալ
Եւ սուրբ գրոց կարօտ մնացեալ,
Տէրն իմ Յիսուս յիս զթացեալ

27 Լ. Ա. Խաչիկյան, հիշված աշխատութիւնը, էջ 22:
28 Դավիթ ընկ երր կուգար Սյունյաց երկիրը ազատելու համար ոտարներեն, 1722-ին, Դավիթ անունով մեկը, որ մելիքն էր Տաթևի, ուրացած էր Փրիզոր Լուսավորչի հավատքը և Բաղդի կկոչվեր, հավատարմին էր պարսից կուսակալին, տաթևացիները զինելով կամբարացիք զյուշը՝ Դավիթ ընկի դեմ հանելու համար: Սակայն Դավիթ ընկ հանկարծակի կուգար կգրով և կպաշարե ամբողջ Տաթևը, «և յետ երկուց ատարց զրոտմը ամէր և զնա և զամենայն ինչս նորս կալեալ ի Շէնհայր ամէր, և հրամայէր նմա զատուրս երկուսասան ի մէջ եկեղեցույն յանդիման ամենեցուն տակ ըրարձր ձայնի զառաճն զայս ոսմկաց թէ, «Լույսն Լուսաւորչի հաւատոյն, վա՛յ ուրացող մարդին», ապա հատանէ զգլուխս նորս, և ինքն երթայ քնակի ի Տաթև (Ալիշաճ, «Սիսական», էջ 224):

25 «Նոտարք հայոց», էջ 27:
26 Լ. Ա. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1955, էջ 10:

Եւ զիմ փափագս կատարեալ,
 Տեսի Սուրբ Գիրքս զարդարեալ
 Անգին ազամբ մարգարտաշար,
 Աղօթ, զմրուխտ և ակն զօհար,
 Էոյս համասփիւտ և կառավար,
 Սա բուրաստան արփիափայլ,
 Անմահական պտղօք լցեալ,
 Ի Սուրբ Հոգւոյն շնորհիւ լցեալ՝
 Անմահական հոտ մեզ բուրեալ,
 Ընարգարէիքն է հաստատեալ
 Ի առաքելօքն է ամրացեալ,
 Հայրապետացն է ճոխարառ
 Եւ բարունեացն շահ ի վառ,
 Իմաստասէրքն են զարմացեալ,
 Քէ անշափ շնորհքն, ոյր աստ հեղեալ,
 Հերձուածողքն են կարկամեալ,
 Եւ բանսարկուն տարէկուեալս²⁹,

1424-ին գրված այլ ձեռագրի մը մեջ կկարդանք.

Քիանքս այս քաղցր, խորհիսխ մեղուի,
 Ի քիմս ուղիղ դամանողի,
 Իսկ սայ սրեալ սուր երկսայրի
 Ընդդէմ ամէն հերձուածողի,
 Որ ազգ ազգ հերձիք ի Տէր խօսի,
 Նայ և կարկիշ պիղծ բերանի
 Եւ քառաքար ի ճակատի՝
 Որք հաւանի[ն] Քաղկեդոնի
 Եւ հայհոյողք են Քրիստոսիս³⁰,

Անշուշտ բնավ զարմանալի լէ, թե ինչ
 ո՞ւր Մխիթարյաններ երբեք չեն հիշատա-
 կած Գրիգոր Տաթևացիի անունը (տե՛ս
 Զարհանելիքն, «Պատմութիւն հայ հին
 դպրութեան»)։

«Գիրք Հարցմանց»-ն վերջ Գրիգոր
 Տաթևացիի երկրորդ մեծ աշխատութիւնն է
 «Քարոզագիրք»-ը։ Երբեմն մեջ բերված են
 նաև ուրիշներու քարոզները։ Վերնագիրնե-
 րուն մեջ գրված են «Նորին» և «յայլմէ», զգի
 յատկասցին ի միմեանց, և մի՛ գողացեալ
 թուեսցին տիմարաց մտացա։ Այս քարոզ-
 ները ընդհանրապես քարոյակրթական և
 ուսուցողական ուղղութիւններ են։ Տաթևացիին
 կխոսի սիրո, խոհեմութիւն, արիութիւն,
 աշխատասիրութիւն, ծուլիբրու, անհոգներու,
 երկրագործներու, «հայալ ամուսնութեան»,
 «վասն արդար վաճառաց և կշռոց», եկեղեց-
 վո խորհուրդներու և այլ նյութերու մասին։

«Տաթևացու քարոզ»-ը, որ իբրև տեսակ
 փոխարինել է հին «Ճառ»-ին, «սնորո-
 դեան»-ին, շունի վերջիններս պերճ ու պա-
 ճուճած եռանդալից ձևը, ընդհանրապես
 սառն ու ցամաք է, պարզուկ ու հասարակ,
 խոսված լեզվին մոտ, բայց ոչ միջին հայե-
 բնով։ Իշխող տոնն է հանգիստ սովորեցնող

ուսուցչի, որ տալիս է լուրջ քացատրութիւն-
 ներ. ազատ չէ սխալաստիկ ձևերից, թվար-
 կութիւններից և մեկնութիւններից, ո-
 բոնք իր ժամանակի մարդկանց հա-
 մար անհրաժեշտ ու հաճելի են եղել։ Առա-
 քել Սյունեցին շափազանց զովելով իր «մեծ
 վարդապետ» Գրիգորին՝ անվանում է
 նրան «մեծ հոնտոր», զքաջ հոնտոր, «հոգե-
 շարժ լեզվի» տեր։ Անշուշտ, նա իր բերանա-
 ցի քարոզների մեջ ավելի հոնտորական
 շնորհք է ցույց տվել, քան գրավորների մեջ։
 Հովհաննէս Ռոտունեցու թաղման ժամանակ
 ասած նրա ներբողյանը իսկապես հարուստ
 է ճարտասանական ձևերով—հարցում, բա-
 ցականչութիւն, կրկնութիւն նման կարճա-
 թիւնք խոսքերի և այլն. կան նաև պատկի-
 րավոր և առատարան արտահայտութիւններ
 առանց ճոռոմութիւն, տրտմագին զգացմուն-
 քով և անկեղծ սիրով լի մի գեղեցիկ ներբո-
 ղեան, Սուրբ Գրքից առած նմանութիւննե-
 րով մի երախտագիտական զովեստ արժա-
 նավոր գործիչս³¹։

Տաթևացիի քարոզագրերու հետապնդած
 նպատակը գործնական, ուսուցողական և
 դաստիարակչական եղած է։ Նույն նպատա-
 կին համար հորինած է ան իր մյուս աշխա-
 տութիւնները, այսինքն՝ «Արիստոտէլի գրոց
 լուծմունս», զՄտորոզութեանցն, զՊերի
 Արմէնիասին, և զԱռաքինութեանցն, նաև
 զՊորփիրին, զՊարապմանց լուծմունքն,
 զՍաղմոսի քաղուածուն, զԱռական քաղու-
 ծուն, զԼուծմունքն Արիստակիսի, և Գէորգայ
 գրչութեանն..., զՔաղուածուն Մատթէոսի
 Աւետարանին, և զԵսայիայ քաղուածուն, և
 զՍկզբփորիկն և այլն։

«Գիրք Տեղմանց»-ի ճիշտակաւաւեր³². —
 «Արդ՝ ես վերջին ծնունդս եկեղեցւոյ և տրուպո
 բանասիրաց, Գրիգոր պիտակ անուն խնդրող
 բանին. բացայայտեցի զքանս հարցմանց ի
 լուսաւոր բանից վարդապետաց եկեղեցւոյ։
 Ի խնդրոյ ումեմն բանասիրի Ատոմի ուղղա-
 փառի։ Որ ի վաղուց հետէ բազումս թախան-
 ձէր։ Եւ վասն իմոյ տկարութեան և ժամա-
 նակիս վրդովման վսնդիրն յապաղէի։ Եւ
 ապա ի սէր անձուկ ժտելոյ նորին, ապաս-
 տանեալ ի նոյն որ զօրացոյց զտկարս, ձեռն
 ի գործ արկեալ աւարտեցաւ զազում միջո-
 ցաւ. և փախստեամբ ի տեղիս. և մեծ ջանի
 փութացեալ։

Որ և ո՛չ ժամանեաց ի կատար բանիս վե-
 րոյ ասացեալ խնդրոյն։ Այլ ի հասարակ
 գրոյս՝ հասարակեաց և նա զկեանս առա-
 րեալ. հասեալ ի գանձ իմաստից և յազրիւրն

²⁹ Լ. Ս. Խաչիկյան, Հիշված աշխատութիւնք. էջ 346—347։

³⁰ Անդ. էջ 318—319։

³¹ Մանուկ Աբեղյան, «Հայոց հին գրականութիւն» պատմութիւն, Երևան, 1946, Բ հատ., էջ 386։

³² Գրիգոր Տեղացի, «Գիրք հարցմանց», Սոս-
 տանգիւղարար, 1729, պրակ ԽԵ։

գիտութեանց: Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի ամէն:

Ա՛րդ՝ եղև գրաւ բանիս, ի շրջագալութեան Հայկազեան տօմարի, Պետ³³ թուի: Ընդ հոգանեաւ երկնահանգէտ մեծարգոյ ուխտի Սիւնեաց նահանգի:

Առաքելական Աթոռոյս սուրբ առաքելոյս. և այլ շրջակայ հրեշտակարնակ սուրբ մեծաստանեայց, Որոց խնամօք ամրացեալ փրկեսցուք յամենայն փորձութեանց ամէն:

Իսկ լուծումն հարցմանցս այսոցիկ, ոչ ամենևին օտարաձայն աւելորդս խուզեալ. և ո՛չ գեղջուկ իմն աշխարհական խօսից յարմարեալ: Այլ զպիտանիս եկեղեցւոյ և վարդապետաց ոգեշահ խնդիր հաստոյ միայն հոգատարեալ: Ուղղակի ճշգրտութեան և անըստգիտ իմացման: Բովանդակեալ ոչ զամենայն որ ամենեցունց է գիտելի: այլ զբանս բազումս որ բազմաց է պիտանի և խնդրելի:

Ա՛րդ՝ է՛ ինչ ի սմա հաւաքեալ ի լուսաւոր բանից վարդապետաց սրբոց ըստ գրոյն կամ իմացուածոյն: Եւ է՛ ինչ ի ներգործութեանց Հոգւոյն Աստուծոյ շնորհաց. որ ծածկէ յիմաստնոց և յայտնէ տղայոց յիրաքանչիւր ժամանակս ըստ կամաց իւրոց: Եւ թէ այս և թէ այն, դու ընկալ զխնդիր մտաց քոց առանց ամենայն երկբայութեանց. իբր ի միոյ կենեղուտ աղբերէ կենաց ուռճալրացեալ և պտղաւէտեալ: ի փառս և ի գովեստ նորին տնկագործի և առաջնորդի:

Ձոր և ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. կամ փունջ մի անուշահոտ բազմաբանօգ ծաղկանց. կամ շնչին թռչնոյ զխորիսխ մեղու՝ կամ որպէս զլուծայս այլուոյն տառապանս գոյիս:

Աղերս ընծայեցի և գանձանակ ճոխութեան ձերոյ մեծութեան. իմաստասէր և ճշմարտասէր Եկեղեցւոյդ Հայաստանեայց և ընթերցասէրդ մտաց:

Որ և աղաչեմ զքարեմիտ հանդիպօղսդ՝ հղբայրական սիրով հաւանիլ, զպակասն լնուկ և զաւելիսն կշռել: Եւ պիտանեացն՝ փառս վերընծայել այնմ, որ փառաւորեալն է ի պարզևս իւր: Իսկ զանպիտանսն ներել մերոյ փոքր ընկալ անօթոյ և դանդաղկոս փութոյ:

Դարձեալ, յերեսս անկեալ արտասուալի դիմօք հողս և փոշի՝ սուրբ զարշապտրաց ձերոց, աղբոսեմ ի խորոց սրտէ զհարադատ գութ հարց և եղբարց հոգևորաց: Զի կաթ մի արտասուլաց ի կաթիլ գուլէ ձե՛րոյ մաղթանաց ցօղեցցի ի գերեզման հոգւոյ իմ տառապանաց:

Եւ լուսացէ զբազմաշարաւ զաղբացեալ ոսկերս՝ մեղօք մեռելոյս: Զի թերևս վասն ձեր սիրալիր մաղթանացդ՝ գտայց ողորմութիւն յամէնողորմ Փրկչէն մերմէ:

Այլ և վարժապետին իմոյ և մեծ հետորին հայոց Յովհաննու Որոտնեցւոյ, եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց մասին օրհնութեան. և վիճակ ժառանգութեան սրբոցն ի յոյս: Զի նա՛ ծնաւ զմեզ ըստ բանի՛ բազմաշան երկօք, կրթեալ ի մամուլս վարժարանի և ի յոյսն կենդանի: Որ և ձեզ յիշողացդ և մեզ յուսողացս առ հասարակ ողորմեսցի բարեբար և բազումողորմ մարդասէրն Աստուած և Տէրն մեր Յիսուս Քրիստոս, ամէն:

Այլ և զերջանիկ զաղափարօղսդ մաղթեմ. որք ընդօրինակէք Զլիւր հարցմունցս այսորիկ. զրել և զսակաւ յիշատակս այսոցիկ. Որպէս զի և դուք լիչիք դրեալ ի գիրն կենդանեաց ամէնս:

Ե՛րբք հարցմանցս-ի հիշատակարանեն անմիջապէս վերջ գործին կցված է ճշարցմունք Գէորգ վարդապետի. և լուծմունք Գրիգորի նորին հարազատիս՝ հարցումներու շարքը: Այդ 14 հարցումները առհասարակ իմաստասիրական և աստվածաբանական ընուլթ կկրեն: Այսպես՝ մեռելոց հարութեան, նախամարդուն դրախտին արտաքսման, աշխարհի կազմութեան և այլ սուրբարկան շփոթ մնացած հարցերու վերաբերյալ:

Սակայն 14 հարցումներուն պատասխանելն ետք, Տաթևացի կանդաղառնա իր ժամանակաշրջանին, որ արհամիբրքի շրջան մը եղած է, Տաթևացի կգրէ Գևորգ վարդապետին. «Պետք եղած շփոթ չկրցա գտհացնել ձեր հարցասիրութիւնը, նախ՝ տկար արտահայտութեանս պատճառով, զոր ստիպվեցա պարզաբանել ձեր եղբայրութեան խնդրանքին վրա»:

Սեւ այս ի խոռվութեան ժամու և յանձուկ տեղուշ, Յորում պաշարեալք ի հինից նետողաց կրկին յարուցեալ հորազմ անուանեալ ազգաց, Ձոր և անբաւ բազմութեամբ ասպատակեալ աւերեաց զաշխարհս Հայոց, Պարսից, Վրաց և զամենայն արեւելեայս:

Ոմանք ի գերութիւն վարեալք արք և կանայք: Եւ կէսք առաթուր դիաթաւալ սրախողխոդ զայարեալ: Առհասարակ քահանայք և աշխարհականք դէշ անկեալ դիակամբ անթաղ ընկեցեալք: Եւ այլք ի բազմազան տանջարանս մաշեալք:

Ոմանք հրոյ կիսայրեաց տոշորեալք, և այլք ի սովոյ զազանաբեկ վտանգեալք: Կէսք խստամքեր կրիւք շարշարեալք. և այլք երկիւղիւ պակուցեալք: Որ և մեր նստելոյ իբր ի մետաղս կամաւոր դիպահոջ՝ Շահապօնս կոչեցեալ ամբողջի: Ոչ ինչ ընդհաս:

33 Պետ=846. 846 + 551 = 1397. ուրեմն Գրքը շարցմանցս-ը գրված է 1397-ին:

բերելով ի մեզ զօրինակ մեծի սաստկասարսուռն ատենիս³⁴,

«...յաւոր նոր կիրակէի սասցեայն կրկնոյ Զատկի, յանկարծահաս ժամու շարժեալ հեղեղաց ուղխից խոռվութեանց, Մաստկացին զոչմամբ և ահագնատեսիլ սուսերամերկ կորովալից նետողաց. որ պատեալ պահեալ պաշարէին զմեզ, Ասացեալն նմանապէս և աստ կատարեալ. ոչ միայն յանդ ի հեռատան, կամ աղալ յերկան, Այլ և ի դռան Կլայխս սակաւ ինչ դանդաղեալ, մինն փրկեալ և միան գերեալ, էր և տեսանել աստ ադիողորմ տեսիլ. միայն արտասուալի դիմօք և կականաբարձ հառաչմամբ. աղգք և սիրելիք. ծնողք և եղբարք»³⁵,

Այս բոլորին կհաջորդեն սովը և շատերու մահվան պատճառ կդառնա.

«Եւ այս աղէտ անգերծ տարակուսից շըրջապատեալ զմեզ շրջագալութեամբ տօմարի Հայկազեան սեռից, հարիւրից կրկնակի քառից և վեցեակ վեցից»:

«Եւ այսպես,— կգրեն Տաթևացի,— տրտմեալ սգով և թախծեալ մտօք ընծայեցի տրխեղծ մատամբ. զխոնարհոյ նուէրս բանի, իրր զլոմայս այրոյն՝ քումդ զանձարանի»³⁶,

«Գիրք հարցմանց»-ը կբաղկանա տասը հատորներե, որոնց պարունակութիւնը հետևյալն է.

«Առաջինն՝ Ընդդէմ մաքինեցուց և հրէից, Երկրորդն՝ Ընդդէմ Արիոսի և հոգեմարտից, և Նեստորի և երկարնակացն:

Երրորդն՝ ճշմարիտ աստուածաբանութեան Գիտնիսի՝ ցուցումն սակաւօք:

Չորրորդն՝ Վասն վեցօրէից և արարչութեան բոլոր աշխարհի,

Ղինգերորդն՝ Ի կազմութենէ լինելութեան մարդոյն:

Վեցերորդն՝ Ի նոյն յարարածոց սկզբանէ՝ ըստ կարգի պատմութեան և գրոցն Մովսէսի:

Եօթներորդն՝ Ցեսու և դատաւորք և Գթաւորութեաննցն համառօտեալ:

Ութերորդն՝ Ի նոր կտակաց³⁷ մարդեղութեան բանին Աստուծոյ:

Իններորդն՝ Ի նորս Եկեղեցույ հարցմունք զանազանք:

34 Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց», Կոստանդնուպոլիս, 1729, էջ 788բ:

35 Անդ՝ էջ 788ա:

36 Անդ՝ էջ 788բ:

37 Պետք է ըլլա «Կտակարանաց»:

Տասներորդն՝ Վասն փոփոխման մարդոյս և կատարածի աշխարհի, Թարութեան և Դատաստանի հատուցման»³⁸:

«Գիրք հարցմանց»-ի վերջում, որի վերնագիրն է «Հարցմունք Գէորգ վարդապետի և լուծմունք Գրիգորի նորին հարազատի», երկուսն էլ, որ Տաթևացին մանրամասն պատասխանել է նաև Հովհաննէս Որոտնեցու աշակերտ Գևորգ վարդապետ Երզնկացու տարբեր բնույթի 14 հարցերին, 1387 թվականին:

Տասը տարի հետո, 1397-ին, «գրեցաւ ծաղկազարդ, և վարդափթի՞թ, մարգարտաշար» Մեծ ճարգմանց գիրքը Աստուածունով մեկու մը խնդրանքով, որ կանխահաս մահ մը ունենալով, լկրցա՞վ վայելելու Հարցմանց գիրքը:

Մելքիսեդ անունով մեկը Տաթևացիի կենդանութիւնն իսկ կընդօրինակեն սույն գիրքը 1401—1407-ին և այդ առթիւ տաղաչափյալ կգրեն.

«Ի յովթ հարիւր Հայոց թուական Եւ յիսներորդ սկսեալ նոր ամ, Գիրքս գրեցաւ այս հրաշագան Հարցարանում և պատասխան. Ի մեծ հոնտոր վարդապետէ Գրիգոր անուն և հսկողէ. Այն որ զանճառս խորոց յայտնէ, Ճաշակ մըտաց մատուցանէ, Շինեաց զգիրքս զայս պիտանի, Որ զամենայն իմաստս ունի»:

1720-ին, Աստապատցի Պետրոս աստվածաբան մեծ վարդապետը որպէս նվիրակ Մ. Էջմիածնեն Կոստանդնուպոլիս կուգա, և կփափազի «Գիրք Հարցմանց»-ը տպագրել, Հազիվ քանի մը պրակ տպագրած, գործը կիսատ կմնա և քիչ վերջ կվախճանի գիտնական ու բարեկրոն վարդապետը Էջմիածնի մեջ, Գործի տպագրութիւնը հանձն կառնեն մահտեսի պարոն Շահնազար Արեւելցին և տիրացու Մովսէսը՝ որդի Բյուզանդացի Խոճա Դանիելին, կավարտեն տպագրութիւնը 1729 մայիսին, Տպագրողը եղած է Կոստանդնուպոլսեցի Աստվածատուր մահտեսին, որդի Խոճա Կարապետին:

Տպագրողին կողմն այսպէս մակագրված է «Գիրք հարցմանց»-ի սկիզբը.

«Մեծի հօրն Սրբոյ երանելոյն Յոհաննու Որոտնեցոյ՝ աստուածուսոյց աշակերտի, և պարզեին Լուսաւորչի, Սրբոյն Գրիգորի Տաթևացոյ, աստուածաբան վարդապետի բուն իմաստասիրի և խստակրօն ճգնաւորի արարեալ զսուրբ Գիրս հարցմանց ի հերքումն աղանդից ամենայն հարձուածողաց, Եւ ի լու-

38 Պետք է ըլլա «Հարցմանք»:

ծումն բազմազան բանից ճշմարտութեան ի փառս միոյն Աստուծոյ և յօգուտ ուղղափառ ժանկանց Կաթողիկէ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսիս:

Լատին եկեղեցւո համար ինչ արժեք որ ունի Քովմաս Ազգինացիի Somme théologique-ը, նույն արժեքը ունի նաև «Գիրք Հարցմանց»-ը Հայաստանյայց Եկեղեցւո համար: Այս մեծ գործին համար ըսված է. «բաղմադան բանից լուծումն նրբին և եղծումն ալևալլ աղգաց և ազանդից և հերձումն ամենայն հերձուածողաց շարափառաց ի փառս ճշմարտութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ և յօգուտ ուղղափառաց ժանկանց Կաթողիկէ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսիս»:

Ըստ Օրմանյանի՝ «Տաթևացին անկասկած պետք է դասել ժամանակին գիտնականներուն շարքը: «Հարցմանց գիրք»-ը թե՛ ոճով և թե՛ պարունակությամբ համահավասար կերպարան և արժեք ունի միջին դարու հռչակավոր լատին աստվածաբաններուն, Քովմաս Ազգինացիի³⁰, Ալբերտոս Ավարեցիի⁴⁰ և Ակովտոս Սրինացիի⁴¹ գործերուն հետ, հան-

դիտակչիւ առավելութիւններով և համանկան թերութիւններով: Ասկէ կհետեցնենք, թե ոչ միայն լատիններնի հմտությամբ, այլև լատիններուն ընդունած ձևերով ուզած է մարտիլ անոնց դեմ: Մինչև իսկ կրնանք ավելցնել, թե Հարցմանց գիրքին մթին բացատրութիւնները կրնան լուսարանվիլ Սկոյաստիկյաններուն լատիններն դարձվածներուն համեմատությամբս⁴²:

Հուժկու միտք մըն էր ամենայն հայոց վարդապետը, նուրբ տրամաբանող մը, հոռոգախոս ատենարան մը, համոզված ու հավատացյալ հոգևորական մը, լուրջ մտախորական մը: Իր յուրաքանչյուր խոսքին, զըրվածքին, գործին, պատճառաբանութիւն մեջ ներկա է ինք, յուրահատուկ շեշտով մը, շեշտ մը, որ տաթևացիական է: Ըստ Մեծոփեցիի՝ Գրիգոր Տաթևացին, երկրորդ աստվածաբան, Հովհան Ոսկեբիրանն էր մեր ժողովուրդին: Ան, անդադար ուսուցանելով, կրտավորե Հայաստանյայց Եկեղեցին և կմնա զայս լուսատու ի մէջ եկեղեցւոյս:


Գրիգոր Տաթևացին հոյակավոր Տաթևյան դպրոցի անխորտակելի սյուներն մեկն է: Տաթևի Դավազան սյունի կողքին ինչն ալ ուրիշ սյուն մըն է, հավերժական կոթող մը հայ մատենագրութիւն անդաստանին մէջ:

30 ԺԳ դարու ամենամեծ գիտնականն ու աստվածաբանը:

40 ԺԳ դարու սքոլաստիկ փիլիսոփա և աստվածաբան:

41 Թ դարու սքոլաստիկ դպրոցի հիմնադիրներն մեկը:

42 Մաղախա աբեղայիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում», Բ հատ., էջ 202Թ:





Ն. ՏՈՎԱՐՍԿԻ

ՀԱՅ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԶՐՎԵԺՈՒՄ

(1957 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ)

Զրվեժ գյուղը գտնվում է Հայկական ՍՍՌ Կոտայքի շրջանում, Երևանից 11 կմ. հեռավորությամբ, դեպի Գառնի տանող խճուղային ճանապարհի աջ կողմը: Այն սփռված է դեպի Երևանի հարավային արվարձաններն իջնող խորը հովիտը հյուսիսային կողմից շրջապատող ոչ բարձր բլուրների շղթայի վրա:

Առավել վաղ հիշատակություն այս տեղերի մասին կա Ղազար Փարպեցու մոտ՝ և դարում: Պատմիչի տեղեկությունը իր ժամանակ գյուղի գոյության մասին ճշտորվում է 1958 թվականի պեղումների արդյունքներով, երբ այստեղ հին գերեզմանատանը քացվեցին ոչ մեծ եկեղեցու ավերակներ, որոնց ճարտարապետական առանձնահատկությունները թույլ են տալիս այն համարել հիշյալ դարում իրականացած կառուցվածք: Շատ դարեր հետո Զրվեժը նորից երևում է Զաքարիա Սարկավազի «Պատմության» (Ժ է դար) մեջ, որտեղ 1679 թվականին ուժեղ երկրաշարժերից ավերված եկեղեցիների թվում, հիշատակվում է և Զրվեժինը:

1942 թվականին Զրվեժ այցելելիս, մենք եղանք գյուղական գերեզմանատանը և գյուղի արևելյան ծայրամասում եղած հողերում, Քոս-աղբյուրի մոտ, որտեղ թեք հարթակավոր ոչ մեծ հրվանդանի վրա հայտնաբերեցինք հին կառուցվածքների հետքեր և նրանց ճարտարապետական հարգարմանը վերաբերող քարեր:

Ուշ ժամանակ կառուցված ցանկապատում, որով շրջապատված են մի քանի հին


գերեզմաններ, գտնվեցին փորվածքներով զարդարված կամարաղեղի քարեր, զարդաքանդակված երկու բարավոր, խաչքարեր և նրանց բեկորներ, մի քանի սալեր արձանագրություններով:

Կամարաղեղներից մեկի զարդանկարը՝ բաղկացած կամարիկների երկու շարքից և նրանց միջև անցնող զլանիկից, արդեն հայտնի էր Դվինի Կաթողիկոսարանի խոյակից և Այգեջատի ու Սիսիանի եկեղեցիների պատուհանների պսակներից: Երեք քարերի վրա փորագրված է է դարում լայն տարածված զարդանկարը՝ հյուսված խաղողի տերևների ու ողկույզների հաջորդականությամբ: Նույնպես Ձ—է դարերին կարող էր վերագրվել քարերի մեջ գտնված խոյակը՝ խաղողով և խաղողի նրա միջից կախված ողկույզով: (1958 թվականի պեղումների ժամանակ հայտնաբերվեց երկրորդ այսպիսի խոյակ, սակայն ոչ խաղողի ողկույզով, այլ տերևով):

Ցանկապատի մուտքի կողքերին կանգնած էին երկու հին որմնասյուներ զույգ կիսասյուներով, իսկ շեմքի մոտ ընկած էր քարի մի մեծ կտոր՝ դռան երեսակալով: Այդ բոլոր քարերը այն ժամանակ մենք վերագրեցինք ԺԹ—ԺԳ դարերին: Ցանկապատի անկանոն շարվածքի մեջ ալքի էր ընկնում կամարաղեղի վերաբերող և կողովահյուս զարդաքանդակով պատած մի քար: Քարերի զարդաքանդակների քնույթը և նրանցից մի քանիսի ձևերը հիմք տվին ենթադրելու, որ այստեղ գետնի տակ թաղված են է և ԺԹ—ԺԳ դարերի եկեղեցական շենքերի ավերակներ:

Ավելի ուշ նույն տեղում գտնվեցին կամարիկներով զարդարված քիվի քարեր, իսկ հետո՝ մի քար ութանկյուն թմբուկի արտաքին երեսայատումից, որի վրա վարպետի նշան՝ աստղի ձևով և «ՅՈՒՀԱՆ» անվան սկզբի հրեք

ցիններից մեկը տեղավորել նշված դարի առաջին կիսում: Արձանագրություն ունեցող քարը հիմք տվեց այս եկեղեցու կառուցման ժամանակի հետագա ճշտման համար: «ՅՈՒՀԱՆ» անունը փողազրված է նաև Զրվեծից



ԶՐՎԵՑԻ Է ԳԱՐԻ ԿԵՂԵՑՈՒ ՆՎ ՄԱՏՈԱՆ ԱՐԵՎՄՅԱՆ ՃԱԿԱՍԸ
(Վաղաղագմուրյուն)

մեծ գլխատառերը (Յ Ո Ղ . .). անվան շարունակությունը փորագրված էր կողքի, այժմ կորած քարի վրա:
Կամարիկավոր քիվը լայն տարածված էր է դարի կեսի Հայաստանի եկեղեցիներում, և հյտնասյխ կարելի էր կործանված եկեղե-

4 կմ. հեռու գտնվող Ավանի Միրանավոր կեղեցու արձանագրության մեջ, եթե ընդունենք, որ երկու արձանագրությունների մեջ, որոնց տառերի գծագրերը շատ նման են իրար, հիշատակվում է նույն անձնավորությունը, Ավանի եկեղեցու կառուցող «ՅՈՒՎ-

հանա կաթողիկոսը, որը ինչպես Սերեոսն է հայտնում, մահացել է 608/9 թվականին, ապա Զրվեծի եկեղեցին, ինչպես Ավանինը կարելի է կառուցած համարել Զ դարի վերջում կամ է դարի առաջին տարիներին:

1957 թվականի աշնանը Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ծարտարապետական գործերի և հուշարձանների պահպանության վարչությունը մեր առաջար-

քեթով, որը հանդուս էր բարեկեց ութանկյուն թմբուկի վրա, Արտաքուստ եկեղեցու բոլոր շորս թևերը ունեին պատերի ուղղապիծ պարագիծ: Արևելյան արսիդում ստեղծված էր բարձրադիր հարթակ, որի վրա բարձրանում էին կենտրոնում տեղավորված նեղ աստիճաններով: Պատերը և գմբեթը պսակվում էին հիանալիորեն մշակված քիվերով: Սրանց վերին մասը զարգարում էին կամարիկներ, առաջացնելով ատամիկներ:



ՔՈՎԻ ԱՆՆՅՈՒՆՔՆԵՐՆ ՔԱՐ
(է դարի եկեղեցի)

կություններ կազմակերպեցին պեղումներ հիշյալ Քոս-աղբյուրի շրջակայքում: այդ պեղումները հաստատեցին նախնական ենթադրությունները: Այստեղ հորի անկմետրանոց շերտի տակից բացվեցին Զ— է դարերի ավերակներ, սրանք գտնվում են մի շարքի վրա՝ հյուսիսից դեպի հարավ և միմյանց կից են:

Ոչ մեծ գմբեթավոր եկեղեցին հատակագծում խաչաձև է, արևմուտքից դեպի արևելք փոքր ինչ երկարացված: Խաչը կազմված է երեք կիսաշրջան և արևմտյան թևի ուղղանկյուն մասով (եռանկյունի): Ենթի կենտրոնական տարածությունը պսակվում էր գրմ-

որոնք հարստանում էին հարավային առևի լույս ու ստվերով: Քիվերին վերաբերող մեծ քանակությամբ քարեր գտնվեցին ավերակներից ծածկող հողի մեջ:

Եկեղեցու արևմտյան մասը ծածկող հողը և մեծ քարերը հեռացնելուց հետո, երևաց լայն մի դուռ (1,54 մ.) և նրա կողքերին, իրենց նախնական տեղում գտնվող որմնասյուները՝ զույգ կիսասյուներով: Այստեղ գտնվեցին նաև կամարների վերաբերող երկու քարեր, նույնպես զարդաքանդակներով, ինչպես և այն քարերը, որոնք առիթ ծառայեցին պեղումներ կատարելու: Նրանցից մեկի վրա փորագրված է խաղողի մուտի-

վր, Չվարթնոցին մոտ ձևերով: Մյուսի վրա՝
 զարդաքանդակ, կապված երկու շարք մի-
 մյանց հակադիր դասավորված կամարիկներ:
 Ինչպես ցույց են տալիս այդ գլուտերը, դու-
 ուր տեղավորված էր շքամուտքի մեջ, որը
 կազմված էր պատից դուրս շնչտված որմ-
 նասյուներով, նրանց միացնող երկաստի-
 ձան զարդաքանդակված կամարով՝ պսակ-
 ված կամարային ձև ունեցող ընդհատված

որի վրայի զարդաքանդակը չարնի է տես-
 նել կմբատի Ս. Ստեփանոսի (Զ—է դարերի)
 և Եղվարդի (Իշխան Գրիգոր Մամիկոնյանի
 կողմից է դարի երկրորդ կեսում կառուցված):
 Էկեղնցիների վրա: Եկեղնցին կառուցված էր
 տեղական լավ մշակված ան և կարմրավուն
 տուֆով և ծածկված էր կղմինդրներով, ո-
 ռոնց բաղմաթիվ կտորները գտնվեցին պե-
 դումների ժամանակ: Շենքից տեղում մնա-



ԳՐԱՆ ՎՐԱՆՈՒ ՊԵՐՄԵՐ
 (է դասի եկեղեցի)

Ֆրոնտոնով: Եքամուտքի կամարի տակ պա-
 տերի հարթուիլյան հավասար երկրորդ կա-
 մարն էր (խաղողի զարդաքանդակներով),
 որն իր կրունկներում հենվում էր դռան բաց-
 վածքը ծածկող քարե ճղար մի հեծանի վրա:
 Այդ կամարը իր մեջ էր ամփոփում դռնից վեր
 տեղավորված կիսաշրջան պատուհանը՝ լյու-
 նետը, այնպես ինչպես Ավանի Միրանավոր
 եկեղեցում:

Եկեղեցու արևմտյան ճակատի մոտ կա-
 տարված պեղումները հայտնաբերեցին նախ-
 նական շքամուտքը ծածկող ուշ կցակառուց-
 ման հետքեր: Լուսանկարի վրա հրեում են
 շքամուտքի որմնասյուները ծածկող երկու
 պատերի ներքին քարերը: Նրանց վրա հանդ-
 լում էր երկթեք կտուրով ծածկված թաղը:
 Այս կցակառուցման ժամանակը հայտնի չէ:
 Պատուհանների հարդարմանը վերա-
 բերող զծրախտաբար, մի բեկոր է գտնվիլ,

ցել են միայն պատերի ստորին մասերը
 (արեելյան արսիդում՝ ներքին երեսապատ-
 ման երեք շարքեր): Սակայն հողում գտնված
 և ավերակները ծածկող մեծ թվով ճարտա-
 րապետական բեկորները հնարավորություն
 են ընձևում միանգամայն ճշմարտացի կեր-
 պով վերարտադրել պծագրի ավերված կա-
 ուուցվածքի նախնական տեսքը: Այս դեպ-
 քում մենք էլյակետ ենք ընդունում նաև
 ժամանակի ընթացքում և մարդկանց ձևո-
 քրից համեմատաբար լավ պահպանված
 նույն տիպի կմբատի և Աշտարակի եկեղեցի-
 ների ձևերն ու համայնափոխությունները: Կա-
 րող է անսովոր թվալ զմբեթի ծածկի կոր և
 ոչ սրածայր ձևը: Այդպիսի ծածկեր հնում
 հայտնի են այն դեպքերում, երբ ծածկի հա-
 մար կիրառվում էր կղմինդր (Աշտարակ, է
 դարի Կարմրավոր եկեղեցի): Այդ պատճա-

ողով մեր վերակազմութիան մեջ ևս գմբեթի ծածկը ցույց է տրված կոր ձևով:

Բրգաձև կամ կոնաձև սրածայր ծածկերը գմբեթի վրա ըստ երևույթին երևացին կողմինդրի գործածությունը սահմանափակելու և մեծ քարե սալերով ծածկելու կապակցությամբ:

Եկեղեցու հարավային թևին կից ԺԳ դարում կառուցվել է ուղղանկյուն հատակազօղով

զարդված խոյակներով: Նրանց վրա հանդչում էր այն կամարը, որը եզրում էր մուտքի բացվածքը վերից ծածկող կիսաշրջան բարավորը: Մուտքի կողքերից և վերևից անցնում էր մի լայն երեսակալ՝ քանդակազարդված միմյանց հետ հյուսվող երկու լայն ժայավենների մոտիվով: Բուրբ այս քարերը ժամանակի ընթացքում օգտագործվել են գյուղի բնակիչների կողմից այստեղ գտնվող



ՄԻՑ ԶԱՆԳԱԿԱՆՍԱՆ Ի ԳԱՐԻ ՃԱՐՏԱՐԱԳԵՏԱԿԱՆ ԲԵԿՈՐՆԵՐ ՇԱՐՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

մի մատուռ ներսից այն ներկայացնում էր ուղղանկյուն ոչ մեծ մի սենյակ աղոթողների համար և կիսաշրջան բեմ: Այն գմբեթ շուներ, ծածկված էր կիսաշրջանակաձև թաղով և գմբեթարթով՝ բեմի վրա, որոնց վրա դրսից տանիքը իրականացված էր երկթեք (մեծ թեքությամբ) և սալարկված էր քարե սալերով: Տանիքի թեքությունը ճշտությամբ որոշվում է պեղումների ժամանակ գտնված անկյունային քիվի բեկորի և կտուրի գագաթի (վրան քանդակված գմբեթավոր մի եկեղեցու մոդել) քարի օգնությամբ:

Մատուռի հատակը գետնի համեմատությամբ բարձրացված է մեկ մետրով, որպեսզի այն հավասար լինի կողքի եկեղեցու հատակին: Այդ պատճառով վէլ դեպի մատուռի դուռը տանում էին երեք շատ բարձր աստիճաններ: Մուտքի կողքերին պատից զգալիորեն առաջակարկառ էին լինում զույգ կիսասյուններով մշակված որմնամուկթերը՝ պսակված երկրաչափական նուրբ քանդակա-

զերիզմանների շուրջը ցանկապատ և մի պարզ շենք շարելու համար:

Մի քիչ այն կողմ, դեպի հարավ, մեծ մատուռի հարավային պատին անմիջապես մոտ, կառուցվել է մի շենք, որն իր մեջ ամփոփում էր երկու փոքր, արևելյան կողմից կիսաշրջան արսիղներ (որոնք համարյա ամբողջապես զբաղեցված են վեմ քարերով) ունեցող մատուռներ: Վեմ քարերը ներկայացնում են քառակողմ սյունների վրա հենվող քարե սալեր: Այս շենքի արևմտյան պատը ծածկված է գերեզմանների վրա կառուցված նոր շենքի պատերով, որն առայժմ հնարավորություն չի տալիս վերականգնելու զույգ մատուռների շենքի նախնական տեսքը: Մեծ մատուռի վերակազմությունը կատարված է եկեղեցու հետ միասին:

Մեծ մատուռի ճարտարապետական ձևերը և նրա ճարտարապետական մանրամասների բնույթը հիմք տվեցին ենթադրելու, որ նրանք, հետևապես և հարավակողմի ամբողջ

կցակառուցվածքը, իրականացված են ԺԳ դարում: Այդպիսի թվագրությունը այժմ ճշտված է նաև մատուռի դռան առաջ 1958 թվականին բացված մի գերեզմանաքարի արձանագրությամբ: Այստեղ 1277 թվականին թագվել է ոմն Աբրահամ, որն արձանագրության մեջ անվանվում է այս մենաստանի կառուցողը:

Այսպես, Ջրվեժի զեղատեսիլ հովտի մի առանձնացված մասում ստեղծված էր ճար-

1957 թվականին պեղված խաչաձև եկեղեցին կառուցված է Ջ և է դարերի սահմանագլխին, որը հայ ճարտարապետության համար հանդիսացել է աշխույժ շինարարության մի ժամանակաշրջան: Այդ ժամանակ են ստեղծվել Հայաստանի զվերավոր եկեղեցական շենքերի հիմնական տիպերը: Իրանցից մի քանիսը իրենց կենսունակությունը ամուր կերպով պահպանեցին նաև հետագա դարերի եկեղեցական ճարտարա-



ՔԻՎԻ ՋՆՎԵՋԻՐ ՓԱՐ
(Է դարի երկրորդ կեսի եկեղեցի)

տարապետական մի անսամբլ, որի կառուցվածքներում արտացոլված են հայ ժողովրդի պատմական տարբեր շրջանների միջնադարյան ճարտարապետության ընդհանուր առանձնահատկությունները:

Պեղումներով բացվել է երբեմնի կառուցապատված հրապարակի մի մասը: Կարելի է ենթադրել, որ այստեղ ճեղքված քարի և հողի հաստ շերտի տակ ժածկված են և ուրիշ մոնումենտալ կառուցվածքների, ինչպես և տարբեր տնտեսական շենքերի ավերակներ:

պետության մեջ: Քննվող ժամանակաշրջանում շինարարությունն ընթանում էր ոչ միայն մեծ կենտրոններում, այլև հրկրի բազմաթիվ գյուղերում, նույն թվում և Հայկական ՍՍՌ այժմյան Կոտայքի շրջանի տերիտորիայի վրա: Այստեղ Ավանում, որը շուրջ հաննես կաթողիկոսի աթոռանիստն էր և հարևան Արամուս գյուղում կառուցվել էին երկու տիպով միմյանց նման եկեղեցիներ, որոնք մի քանի տասնամյակ հետո օրինակ հանդիսացան նման կառուցվածքների համար: Դրանց թվում կարելի է դասել նաև

Հոփսիմեքի տաճարը (Յ18 թ.) էջմիածնում (Վաղարշապատում): Ավանից և Արամուհից ոչ հեռու, Պտղնի գյուղում գտնվում են հիանալիորեն մշակված եկեղեցական, ընդարձակ դահլիճով մի շենքի ավերակները: Մապակվում էր զմբեթով, որը հենվում էր չորս հզոր որմնամույթների վրա: Եկեղեցու այս տիպը, սկսած ԺԱ դարից, դառնում է ամենատարածվածը հայկական ճարտարապետության մեջ: Ձի կարելի պնդել, որ հենց Ավանում և Պտղնիում են առաջին անգամ ստեղծված եկեղեցիների այս նոր տիպերը, սակայն անտարակույս է, որ այս հուշարձանները, որոնք կանգնած են նշված գյուղերում, ներկայումս հանդիսանում են վաղագույններից: Նրանք վկայում են, որ այստեղ աշխատել են անվանի վարպետներ, որոնք իրենց գեղարվեստական շնորհքը և ինժեներական փորձը ուղղել են զմբեթավոր եկեղեցու թեմայի բազմազան լուծումների վրա: Գրանցից մեկն էլ իր մարմնավորումն է գտել Զրվեծի Քոս-աղբյուրի մոտի համեստ կառուցվածքում:

Զրվեծի եկեղեցին զարմանք չէր առաջացնում իր լավերով կամ հարդարման ցոփությունը: Նրա արժանիքներն են՝ բարեկեց ձևերի ազնիվ պարզությունը, կոնստրուկցիաների հստակությունը և սակավաթիվ, բայց լավ նկարված մանրամասների նուրբ կատարումը:

Առաջին տարվա պեղումների արդյունքները հիմք տվեցին ենթադրելու, որ շինարարությունը այստեղ շարունակվել է է դարի նաև երկրորդ կեսում: Այն հողում, որը ծածկում էր ավերակները, գտնվել են քիվի և կամարաղեղի քարեր, երկուսն էլ կողովաճյուղա կարգաքանդակներով ծածկված: Զարդաքանդակի այս մոտիվը սկսում ենք հանդիպել Զվարթնոցում և է դարի երկրորդ կեսի եկեղեցիներում (Արուճ, Թալինի մեծ եկեղեցի, Եղվարդի Զորավարի): Այս քարերը, ինչպես և խոյակների ու խաղողի ողկուլների զարդով պատած խոյակները, տեղ չեն գտնում պեղված եկեղեցու վրա, ոչ էլ նրա կողքի մատուռի: Այդ բոլորը մղում է այն մտքին, որ պեղումներին մոտ ինչ-որ տեղում պետք է գոյություն ունենար մեծ շափերի մի եկեղեցի՝ կառուցված է դարի կեսից ոչ շուտ:

1958 թվականին պեղումները շարունակվեցին հյուսիսային ուղղությամբ և թեև այս-

տեղ եկեղեցու փոխարեն բացվեցին ուշ ժամանակաշրջանի տնտեսական կառուցվածքներ, մեր համոզմունքը նրա գոյության մասին մնաց անհողողողելի: քանի որ հողի տակից գտնվեցին քիվի և կամարաղեղի նոր քարեր, հար և նման 1957 թվականի գրտնրվածներին:

Առանձին հետաքրքրություն առաջացրին քիվի երկու քարերը՝ պատած հարթաքանդակներով: Գրանցից մեկը պատկերում է դեպի աջ տարածված տղամարդու մի ֆիգուր: Ցավոք, գլուխը, ուսերը և ձեռքերը՝ կտրված են: Մյուս քարի վրա քանդակված է աղոթքի համար տարածված կանացի ֆիգուր առանց լուսապսակի, ձեռքերը վեր բարձրացրած դեպի ձախ գտնվող ուլիթ խաչը: Միանգամայն հնարավոր է, որ երկու հարթաքանդակները իր ժամանակ կազմում էին ընդհանուր մի խումբ՝ բաղկացած մարդկային երկու ֆիգուրներից և նրանց միջև զրտնրվող խաչից: Կանացի ֆիգուրից բարձր, քիվի վերին մասի վրա խորր փորագրված է «ՄԱՐԻԱՄ» արձանագրությունը:

Պեղումներով չի հայտնարված Բագրատունյաց ժամանակաշրջանի (որ նույնպես հայտնի էր աշխույժ շինարարությամբ) ոչ մի շենք, և սակայն համենայն դեպս ԺԿ դրում պեղվող հրապարակը արդեն ըստ երևույթին այնքան էր պատած կառուցումներով, որ նրա վրա կառուցել են միայն մատուռներ, իսկ զմբեթավոր եկեղեցու կառուցման համար տեղ ընտրել քիլ դեպի արևմուտք գտնվող բլրի վրա:

Այս եկեղեցին այնքան է քանդվել, որ նրա հատակագծի ձևի մասին կարելի է միայն ենթադրություն անել: Արտաքին պատերը կազմում են ուղղանկյունի, որի արևելյան կողմում ծածկված է եկեղեցու սեղանը՝ կողքերին երկու երկարավուն խորաններ: Եկեղեցու արևմտյան մասը կարող էր լուծված լինել երկու ձևով Ժ դարից սկսած, առավել տարածված եկեղեցիների տիպարի նմանությամբ: Այստեղ կամ երկայնական պատերի ուղղությամբ կանգնած էին մույթեր, որոնք արսիդի անկյունների հետ միասին կրում էին զմբեթը, կամ անկյուններում տեղավորված էին խորաններ:

Այս դեպքում եկեղեցու հիմնական տարածությունը հատակագծում ներկայացնում էր խաչ կիսաշրջան արսիդով արևելյան թեվում: Հիշատակված որևիցե տիպի շենքի վերին մասը խաչաձև էր և կենտրոնում պսակվում էր զմբեթով՝ շրջանակ կամ բազմա-

Նիստ թմբուկի վրա, սրածայր վերջավորու-
թյուն ունեցող ծածկով: Պետք է նշել տե-
ղի բացառիկ հաջող ընտրութիւնը բլրի վրա,
հեռվից, բոլոր կողմերից լավ տեսանելի:

Այս եկեղեցու կառուցումը ԺԲ—ԺԳ դա-
րերում չի առաջացնում ոչ մի կասկած, քա-
նի որ նրա ճարտարապետական հարդարման
ոչ շատ մնացորդներում կան քարեր, որոնք
թույլ են տալիս բավականաչափ որոշակիու-

րեն վերակազմել այդ ժամանակաշրջանի
համար բնորոշ արևմտյան դրան շքամուտ-
քը՝ շատ նման Կնչարիսի վանքի գավթի
(ԺԲ—ԺԿ դ. դ.) շքամուտքին:

Ջրվեժի պեղումները կշարունակվեն 1959
թվականին և հավանական է կտան նոր պա-
տասխաններ այն հարցերին, որոնք առայժմ
մնում են լպարզված:





ՍՈՒՐԲ ՀՌԻՓՄԻՄԵՒ ԵՎ ՍՈՒՐԲ ԳՍՏՆԵՑԻ ՎՃԵՔԵՐԻ ԵՐԿԼԵԶՎՅԱՆ ԶՆՓԸՆՈ ՏՆՊՆԵՐԻՐԸ



այ-վրացական փոխհարաբերութիւնների պատմութիւն մեզ ժ՛՛ղ դարի երկրորդ կեսին և ժ՛՛թ դարի սկզբներին որոշ դեր են խաղացել, ինչպե՛ս հայտնի է, այլևայլ պատմական դեմքեր թե՛ հայերից և թե՛ վրացիներից: Դրանցից ոմանց գործունեութիւնը, չհաշված Սայաթ-Նովային և Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանին, անմիջապէս ընթացել է Հայաստանում՝ պարսից տիրապետութիւն օրոք: Մենք ի նկատի ունենք, մի կողմից՝ Դավիթ վարդապետ Ղորղանյան-էնագեթցուն (հետագայում Դավիթ հակաթոռ կաթողիկոսը, 1801—1804 թ. թ.) և մյուս կողմից՝ Ալեքսանդր Հերակլի (էրեկլի) որդի, վրաց արքայազնին:



Դավիթ վարդապետ էնագեթցուն էջմիածնում գործելու ժամանակաշրջանին է համընկնում 1784 թվականի սեպտեմբերի 22-ին վախճանված նրա մոր՝ Աննայի տապալակազիրը Ս. Հռիփսիմեի վանքի արևելյան պարսպից դուրս գտնվող գերեզմանատանը, երկու լեզվով. մեկն ընդարձակ և շափածո՝ հայերեն, և մյուսն համառոտ և արձակ՝ վրացերեն:

Տապանաքարը, որի արձանագրութիւնը մենք ընդօրինակել էինք դեռևս 1924 թվականին և հրատարակել 1930 թվականին¹,

¹ Լ. Մելիքսեթ-Քեկ, «Սայաթ-Նովա», Քրիստի, 1930, էջ 14—15 (վրացերեն):

ինչպես նորերս ստուգեցինք, իր տեղում այլևս չի գտնվում²:

Ըստ մեր ընդօրինակման՝ այն կարգացվում էր այսպես.

«Այս է տապան դամբարանի Աննա անուն կնոջ բարի, կողակցի Դաւթեան Բէրոյի և մայր երկուց հարազատի, նախկնտյն՝ Դաւիթ վարդապետի, նաև կրտսերագոյն՝ Բարսեղի էր սա երկրաւ վրաստանցի, բնիկ տեղեաւ էնագեթցի, Խնդրէ ի ձէնջ, եղբարք բարի, որք հանդիպիք, տալ ողորմի. Որ վախճանի ի ՌՄԼԳ թուոյ ի սեպտեմբերի] ԻԲ»:

Վրացերեն արձանագրութիւնը կարգացվում էր այսպես.

«+էս սամիլավի էնագէլի Բէրոաս մէուղլէ Անասիա. շէնդորա րձանէթ»:
Նույնը մեր հայերեն թարգմանութիւնը. «Այս դամբարանը էնագեթցի Բերոյի ամուսին Աննայինն է, ողորմի հրամայե՛ք»:



Վրաց արքայազն Հերակլի (էրեկլի) որդու գործունեութիւն հետ, որի մասին հայ ընթերցողը որոշ գաղափար ունի և. Արքով-

² Ինչպես այս փաստի ստուգման, նույնպես և Ս. Գայանեի վանքում մեր կատարած աշխատանքների մասնակցեցին պատմական գիտութիւնների թեկնածուներ Ս. Բարխուդարյանն ու Վ. Գրիգորյանը:

յանի³, Բաֆֆու⁴ և Աղ. Երիցյանի⁵ գործերից, կարծես թե առնչվում է Ս. Պայաննի վանքի բակում, տաճարի հարավ-արևելյան անկյունում, գտնվող 1822 թ. երկլեզվյան շափածո տապանագիրը, որը միաժամանակ բավականին հետաքրքիր նմուշ է հայ-վրացական ֆոնկլորային ստեղծագործության:

Տապանաքարը ներկայացնում է իրենից

1. Ի ՍՄԻ Ն Տ Ա ՊԱՆԻ
2. Դ ՆԻ ՄԱՐ ՄԻ Ն ՄԱ
3. ԹԻ ՆԱ ԹԻ ՆԻ Ո Ր
4. ՊԱՐ Ո Ն ԳՐԻ Գ ՈՐԻ
5. Ե ԱՆ Ա Ջ Գ Է ԱՆ ՈՒ
6. Ք ԱՆ Չ Ա Ղ Ա Լ Օ
7. ԾՐԲ Ա Ս Է Ր ԳԵ Օ Չ
8. Ն Թ Ե Ր Յ Օ Ղ Յ
9. ԱՐ Ժ ԱՆԻ Չ Ի Լ Ի
10. Ր Կ Ն Ի Յ Կ Ա Յ ԱՆ Ի

սովորական մեծությամբ ղեղնադուլի հղեղաքար (սնիկս), որը ԺԸ դարի վերջերի⁶ և ԺԹ դարի սկզբներին⁷ օգտագործվում էր թե՛ Հայաստանում և թե՛ Վրաստանում, մասնավորապես էջմիածնի և Քրիլիսիի գերեզմանատներում⁸:

Հայերեն արձանագրությունը, որը զխատառով է փորագրված, գրաված ունի 10 տող երկսյուն դասավորությամբ.

- Հ ԱՆ Գ ՈՒ Յ Ե Ա Լ
- Հ Տ Ե ՍԻ Ա Յ Ն
- Է Ր Կ Ո Ղ Ա ԿԻ Յ
- Ի Յ Ա Լ ԹԻ Բ Է Շ
- ԱՆԻ ՆԱ ԵԻ Է Ր Չ Ո
- Բ Է Կ Ի ԵԻ ՄԱ Յ Ր
- Ա Լ Խ ԱՆ ՈՒ ՄԻ Ը
- Ի Շ ՄԱ Ն ԱՐ Ա
- Յ Ի Բ ՆԱ Կ Օ Ղ Յ Ե
- Ի 1822 Օ Գ Ո Ս Տ Ո ՍԻ

Սույն արձանագրությունը շափածոյի վերածված ընթերցանությամբ տալիս է 9

տող (յուրաքանչյուրը 5+5 վանկ)՝ ի հանգրվ.

- ա. Ի սմին տապանի | հանգուցեալ || Գ<Ը>նի
- Մարմին մա | հտեռի այն || Թինաթինի⁷,
- Որ | էր կողակից || պարուն Գրիգորի |
- Ի Յալթիբէշ || եան ազգէ անու | անի.
- բ. Նա եւ էր զ« || քանչ Աղալօ | բէկի
- Եւ մայր || ս<Ը>րբասէր Գեօզ | ալ խանուսի.
- Ը || նթերցօղ, յ | իշման արն || արժանի.
- Ջի լի | ցի բնակող յե || ըկնից կայանի |
- Ի 1822 օգոստոսի 6.

³ Խ. Արովյան, «Երկերի լիակատար ժողովածու», ութ հատորով, հատ. Գ, Երևան, 1948, էջ 121.— 2-մաս. մեր հողվածը՝ «Գրական հանդես», Քրիլիսի, 1941, № 1, էջ 34—35.

⁴ «Վրաց իշխան արքայազն Ալեքսանդրի կյանքից Պարսկաստանում», «Մշակ», 1872, № 25.— Բաֆֆի. «Երկերի ժողովածու», հատ. Բ, Երևան, 1956, էջ 32—34.— Նույնը վրացերեն՝ «Գրուէրա», 1872, 21. VII, № 26.

⁵ «Վրաց թագավորական տան վերջին շառավիղը», «Արձագանք», 1882, № 12, էջ 177—180.

⁶ Մ. Ս. Бетлов, «О Кавказском мраморном ониксе», Тифлис, 1901, стр. 16—17.

⁷ Այս երկտող մի տեսակ տրաֆարետ է, որի նմանը կարդացվում է շատ տեղերում, օրինակ, Քրիլիսիի վանքի մայր եկեղեցու բակի 1812 թվականի հոկտեմբերի 22-ի երկլեզվյան տապանագրում. «Ի սմին տապանի ամփոփեալ զնի մարմին Աւետիսի Թեթխուզեանց տոհմիչ և այլի».

Վրացերեն արձանագրութիւնը ամխեղ-
րուպիս (փոքրատառ բոլորագիր) միասուն
5 տողանի է և կարգազվում է այսպես.

1. + ազվէսրուպէ զՎապիլի մոսուպի խորցի
մկուզրիսա արա թու սուպի ար մզ՝վանդա
ձմանի խուր սասուպի:

2. մէ վիդ՝ա՛վ էզրէթ նաթէլ նախուպի սա-
խէլ մէծողա միդդիս Թինաթին սոփլադ վի-
ցոցիսէ սամոցի ծլամդին:

3. միզուվէթ էրնո դա ուցխո թէմնո ազ-
րէթվէ տոմնո դա նաթէսա՛վնո մքոնդա պա-
տիվի կէթիվնորանի:

4. Թքվէնց շէթխուդէրիս դրո էսրէթ ժամ-
նի էրից գիխսնիս Թքվէն դա էրթ ձմանի ած
դավիթէց միծադ միծանի:

5. Հո ազվէսրուպէ ազվիստոս վ՛սա ծէլսա
քրիստէսիթ Հզ՛կբ.

Արձանագրութիւնը շափածոյի վերածված
ընթերցանութիւմը տալիս է 14 տող (յու-
րաքանչյուրը 5+5 վանկ), այսպիսի հան-
գավորումով. 1—4 տողերը՝ ուլի, 5—6 տո-
ղերը՝ ին, 7—8 տողերը՝ նս, 9—12 տողե-
րը՝ եի, 13—14 տողերը՝ սա:

ա. <ան> աղվէսրուպէ զՎապիլի
մոսուպի,
խորցի մկուզրիսա, արա թու սուպի.
ար մզ՝վանդա ձմանի, [մ]խուրոգ
ասուպի.
մէ վիդ՝ա՛վ էզրէթ նաթէլնախուպի:

բ. սախէլ մէծողա միդդիս Թինաթին,
սոփլադ վիցոցիսէ սամոցի ծլամդին.
միզուվէթ, էրնո գա ուցխոթէմնո,
ազրէթվէ տոմնո գա նաթէսա՛վնո:

գ. մքոնդա պատիվի կէթիվնորանի,
Թքվէնց շէթխուդէրիս դրո էսրէթ,
ժամնի,
էրից գիխսնիս Թքվէն դա էրթձմանի,
ած գավիթէց միծադ միծանի:

դ. Հո, ազվէսրուպէ ազվիստոս վ<ին>սա
ծէլսա քրիստէսիթ շ<ին>զ՛<ար>
կ<ան> բ<ան>սա:
նույնը մեր հայերեն թարգմանութիւմը.

ա. Վախճանվեցի ծաղկազարդվածս՝
Մարմին մեռյալի և ոչ թե ոգի,
Չունեի եղբայրներ, ունեի միայն մի
դուստր,
Այսպես էի լուսատեսս:

բ. Անունս էր միդդիս Թինաթին,
Աշխարհումս կացի մինչ վաթսուն
տարի.
Ողբացե՛ք, ազինք և այլազգիք,
նույնպես և ցեղք ու ազգակիցք:

գ. Ունեի պատիվ պարկեշտի.
Դուք էլ կհանդիպեք այսպիսի պահին,
Ձեզ կփրկեն ազգն ու հարազատները.
Ահա վայր ընկա գետնին հողածինս:

դ. Վախճանվեցի օգոստոսի 6-ին,
Քրիստոնեական թվականի 1822-ին:

Տապանագրի ինչպես հայկական, նույն-
պես և վրացական մասում հիշված ննչեցյալ-
ը մահտեսի (միդդիս) Թինաթինն է, որը
1822 թվականի օգոստոսի 6-ին վախճանվել
է 60 տարեկան հասակում. հետևապես ծնված
պիտի լինի 1762 թվականին:

Բացի դրանից, հայերեն արձանագրու-
թիւնը, որը լիովին վրացերենին չի համընկ-
նում (և ոչ էլ վրացերենը հայերենին), ի վի-
ճակի է հազորդի նաև տվյալներ հիշյալ
Թինաթինի ազգականների՝ հարազատների
մասին, որոնցից ոմանք պատմական դեմքեր
են՝ կապված իրենց գործունեութիւնն այլևայլ
Քելեբով Ալեքսանդր վրաց արքայազնի և
Ա. Ս. Գրիբոեդովի հետ:

Այսպես, օրինակ, պարզվում է, որ մահ-
տեսի կամ միդդիս Թինաթինը եղել է ամու-
սին ապարոն Գրիբորիս՝ Յալթիբեշյան աս-
վանի ազգից և զոքանչ Աղալո բեկի:

Յալթիբեշյանը, համանական է, նույն Ալ-
թի-բեշյանը լինի, որ հիշված է ԺԹ դարի
20-ական թվականներին մի վրացերեն վա-
վերագրում իրրև Քրիլիսիի առևտրական, ու-
րը խանութ (գուլան) է ունեցել⁸:

Թինաթինը ունեցել է մի զավակ, այն է
դուստր՝ Գյուզալ-խանում կամ Գյուզալ-խա-
թուն անունով, որն ամուսնացած է եղել Աղա-
լո բեկի հետ:

Աղալո բեկ անունով հայտնի են 2 անձ-
նավորութիւն ԺԸ դարի վերջերին և ԺԹ դա-
րի սկզբներին: Դրանցից մեկը Ղորղանյան-
ենագեթցին է, որը միջնորդի դեր է խաղում
վրաց արքունիքի և ռուս զննորդների, ինչ-
պես նաև նույն արքունիքի և էշմիածնի, ասել
է ամենայն հայոց կաթողիկոսների հարա-
բերութիւնների մեջ, հաճախ իրրև լոկ նա-
մակատար, երբեմն էլ իրրև վրաց արքունի
գուլթի ցուցակագրող⁹, իսկ մյուս Աղալո բե-

⁸ Ն. Քերճեքիշվիլի, «Նյութեր վրաստանի տնտեսա-
կան պատմութիւն համար», III, Քրիլիսի, 1955, էջ
510—511 (վրացերեն):— Մամիսա Քերճեքիշվիլի,
«Նյութեր վրաստանի տնտեսական պատմութիւն հա-
մար», հավելված. I, II, III գրքերի բառարան և ցան-
կերը, Քրիլիսի, 1958 (վրացերեն):

⁹ Ն. Քերճեքիշվիլի, «Հիշված աշխատութիւնը», I,
Քրիլիսի, 1938, էջ 160, 289—290 (վրացերեն), նույնը,
II, 1955, էջ 102, 275—281, 435—443, 468—469,
510—511, 530—532:— Գյուտ ավագ Զահեան Աղան-
յան, «Դիվան հայոց պատմութիւն» Գ, 139, 181, 545,
Գ, 748—750, Զ, 436—447, Ը, 34, 97, Թ. 287, ԺԱ,
377:

կը, հավանական է, նույն Աղալար-խանը լինի՝ էնիկոլոպիան ազգատոհմից, որը կապված էր, մի կողմից, Ալեքսանդր արքայազնի հետ (որն ամուսնացած էր երևանցի Մելիք-Աղամալյան Սահակի գստեր՝ Մարիամի հետ) և մյուս կողմից՝ Ա. Ս. Գրիբոեդովի հետ¹⁰ (որն ամուսնացած էր ռուսական մարզի առաջին պետ՝ գեներալ Ալեքսանդր Ծավճալաձեի գստեր՝ Նինոյի հետ)։

Ահա այս երկրորդ Աղալուն պիտի լինի, անկասկած, այն անձը, որին հասցնազրված են Ատրպատականի հայոց առաջնորդ Բարսեղ արքեպիսկոպոսի նամակները, որոնցից մեկում, 1829 թվականի մոտերքում գրվածում, նա հիշված է իբրև «գերապատիւ որհնեալ Աղալոյ թէկ միրգալ Գուրգինեան Ենախոսիտով»¹¹։

Նույն Բարսեղ արքեպիսկոպոսի այլ նամակներից պարզվում է նաև, որ «Մանուչար-խանի և Աղալո բեկի մայրը» եղել է «Ռսկեայ մեծ խանումն», որ ժող Աստուած փոխեալ է ի թեհրանն Պարսից», նմանապես և՛ որ «Աղալոյ թէկի քրոջ որդի միրգա Սողոմոնն սպանեալ էին ընդ դեսպանին [Գրիբոեդով]» և ստացա նրկոցունց զիակացիայ մարմիննս հրամանա Մանուչար-խանին եկն ի նախիջևան և աստևն մեծալ յուղարկաւորեալ հանդիսի ի ճանապարհս եղաք զէպ ի Սուրբ էջմիածին, զի ընդ քարեպաշտեալ կտակի Ռսկեայ խանումին անդ ի Ս. էջմիածին ի սիրտ երկրի թաղեսցի, ուր ուրեք շիրմանցն մերձ արծանաւոր համարիցի սրբազան հոգևոր կառավարութիւնս»¹²։

Ծարական կառավարության պաշտոնական վավերագրերում Աղալուն հիշվում է իբրև ազնվական (Дворянин Агало Епико-лопов), որը 1804 թվականին մտադիր է եղել փախչել Պարսկաստան¹³, որին ընդդիմադրել է գեներալ Գուրգովիչը. ապա նա հիշվում է իբրև օսմանյան զործերի հետախուզող 1806 թվականին¹⁴, Մի վավերագրում ևս Աղալուն կոչված է կալվածատեր, որն ունեցել է ճորտ գյուղացիներ¹⁵։

Աղալոյին հատուկ գլուխ ունի նշիրված ևս. Արոժյանի ընկերակից Գալուստ Երմա-

զան-Վարդանյանն իր հանրածանոթ գրքի մեջ¹⁶, «Աղալո-աղալ, որ և Աղալար-խան էնիկոլոպիանց» ենթավերնագրի տակ։

Ըստ այս զխի տեսության, Աղալուն մանկութունից սովորել և տիրապետել է հայերենին, վրացերենին, արաբերենին, պարսկերենին և թաթարերենին և յափահաս լինելուց հետո նշանակում է Գիորգի վրաց թագածառանդի դասը թարգման¹⁷։ Մի ժամանակ նա լինում է Ախալցխի ռեպուբլիկայի մաս թարգման հայոց, վրաց և պարսից լեզուներին¹⁸, ապա նաև ուսուցիչի Գեներալ Նևսկիեանի հանձնարարությամբ 1806 թվականին նա քանակցում է Ախալցխի Սեյիմ փաշայի հետ 1808 թվականին նա փախչում է էջմիածին և այնտեղից թափվել, որ ծառայում է պարսից թագածառանդ Առաս-միրզայի մոտ, երբ և վերակոչվում է Աղալար-խան¹⁹։

Գ. Երմազան-Վարդանյանը վկայում է, որ «Աղալար-խանը վախճանեցաւ 1846 թուականի յուլիսի 26-ին և թաղուեցաւ Քարիպի բերդի մէջ եղած Ս. Աստուածածնի եկեղեցու գաւթի հին պարտէզի հիւսիսային կողմում, հին առաջնորդարանի առջև»²⁰։

Ինչ վերաբերում է Գյոզալ-խանումին, նա, ըստ նույն Գ. Երմազան-Վարդանյանի, «մեծ օժանդակ եղաւ իւր մուսնոյ վարկն ու կարգը քարձրացնելու մասին, նամանաւանդ, որ Գյոզալ-խանումը խելացի, ճարտարախօս և երեւի տանտիկին էր, վասն որոյ և Արաս-միրզան հրամայեց նրան արծակ-համարձակ ելնմուտ առնել իւր կանանոցը, ուր և տիկինները կ'ընդունէին շատ պատուով և յարգանքով. վասն զի ոչ միայն լաւ ձեռագործեր կաներ, այլև շատ լաւ քաղցրաւենիք պատրաստելի գիտէր, զորս կը սովորեցնէր տիկիններին»²¹։

Այս Գյոզալ-խանումը, ըստ նույն պատմիչի, «խոյնեայից վախճանեցաւ 1846 թվականի սեպտեմբերի 26-ին»²²։

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչու է տապանագրի թինաթիւը «մահտեսի» (հայերենում) և «միզգիս» (վրացերենում) կոչված, դա, հավանական է, կապված լինի այն հանգամանքի հետ, որ նա իբրև ամուսին մեծատուն վաճառական Գրիգոր Ալթի-

¹⁰ Վ. Պարսամյան, «Ա. Ս. Գրիբոեդովը և Հայ-առաջարկութիւնները», Երևան, 1947, էջ 23 և այլն, ՀմՃա. Ս. К. Ениколопов, «Грибоедов и Восток», Ереван, 1954, стр. 179, прим. 2.

¹¹ Վ. Պարսամյան, հիշյալ գիրքը, էջ 217.

¹² Նույն տեղում, էջ 219—220 (ընդգծումը մեյրբումի մեջ մերս է—Վ. Մ.—Ք.)։

¹³ «Акты Кавказской Археографической комиссии», т. II, стр. 332.

¹⁴ Նույն տեղում, III, էջ 577—578.

¹⁵ Центральный Государственный исторический архив Грузии. Путеводитель, под редакцией А. Иовидзе, Тбилиси, 1947, стр. 33.

¹⁶ «Երեթեր ազգային պատմութեան համար, երեւի Հայկազունք ի Պարսկաստան», աշխատասիրութեամբ Գալուստ Երմազանեանի. Ռոստով (Գոնի վերայ), 1890, էջ 311—323.

¹⁷ Նույն տեղում, էջ 311.

¹⁸ Նույն տեղում, էջ 312.

¹⁹ Նույն տեղում, էջ 313.

²⁰ Նույն տեղում, էջ 323.

²¹ Նույն տեղում, էջ 315.

²² Նույն տեղում, էջ 323.

քեշյանի (որին վիճակվում էր առևտրական գործերով լինելու այլևայլ երկրներում), գոնե մի անգամ եղած լինելու ուխտի Երուսաղեմ, որի այցելուներն էին սովորաբար կոչվում «մահտեսի» — մղզաի (այսինքն Քրիստոսի գերեզմանն այցելողներ):


Անորոշ է միայն, թե ինչո՞ւ այս Քինաթի-նը թաղվել է Ս. Գայանեի վանքի բակում 1822 թվականի օգոստոսի 6-ից հետո²³, ինչպես և անորոշ են 1829 թվականին սպան-

ված Աղալույի քրոջ որդու՝ Սողոմոնի և նույն Աղալույի մոր՝ Ոսկյա-խանումի դամբարանների տեղերը էշմիածնում:

Սակայն անկախ այս բնութից, «մահտեսի Քինաթի» տապանագրի մշակումը երկու լիզվով՝ հայերեն և վրացերեն, այն էլ լափածո ձևով, ինքնին վկայում է գրական որոշ ճաշակ ունեցող արվեստագետների մասնակցության մասին այդ գործում ինչպես Հայաստանից, նույնպես և Վրաստանից:

Հ Ա Վ Ե Լ Կ Ա Ց


Մ Ն Ն Դ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն Տ Ա Ն Տ Ա Կ



Պայմանական նշաններ
← → — մասնաճյուղ
| — սեբանյ

²³ Օգտվում ենք առիթից արպեսդի Նշենց, որ այս Քինաթիի դամբարանի հենց կողքին, արևելքից, ամփոփված է 1955 թվականի 9 հոկտեմբերին վախճանված Մայր Աթոռ Ս. էշմիածնի Գերագույն Հոգևոր

եռբրդի պատվաճար անգամ Ստեփան Օհանջանի կամաարականի մարմինը, որի հողակալտը պսակված է այժմ համապատասխան հուշարձանով և տապալա-գրով:





Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.

(Ճարտարագիտական
գիտությունների զոցկետ)

ԹՈՐԱՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

(Բազմավաստակ հետազոտողի հիշատակին. մահվան 25-ամյակի առթիվ)

1934 թվականի մարտի 1-ին ընդմիջտ հեռացավ իր ժողովրդից հայ մշակույթի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը՝ Քորոս Քորամանյանը: Նա հեռացավ կյանքից վաստակած, թողնելով սերունդներին ավելի քան երեսուն տարիների իր տքնաչան աշխատանքի հարուստ պատույնները, մի անզնահատելի գիտական ժառանգություն, որը հանդիսացավ պատմական հայ ճարտարապետության ուսումնասիրության ամուր հիմնաքարը: Այնքան է մերվել Քորամանյանի անունը հայ ճարտարապետության հետ, որ երբ ասում ենք Քորամանյան, հասկանում ենք հայ ճարտարապետություն, կամ ասում հայ ճարտարապետություն, իսկույն մտաբերում ենք նրա իսկական հանրագիտարան՝ Քորոս Քորամանյանին: Ահա թե ինչու և միանգամայն իրավացի էր մեր սիրելի Վարպետ Ավետիք Իսահակյանը, երբ ասում էր. «Նա մեր հոյակապ ավերակների ու հուշարձանների նույնքան հոյակապ երգիչն էր»:

Անիում և Շիրակի այլ մասերում, Արագած լեռան փեշերին թե Արարատյան դաշտավայրում հայ ճարտարապետության անխոնջ հետազոտողը անցնում էր հուշարձանից հուշարձան, ավերակից ավերակ, լուսանկարում, շափազրում և ուսումնասիրում էր, կուտակելով հսկայական գիտական նյութ, որի մանրակրկիտ և ուշադիր քննումը հնարավորություն տվեց նրան անսասան քնորոշումներ ձևակերպել հայ ճարտարապետության կազմավորման, զարգացման ու սկզբունքների մասին: Այդ նյութերը հիմք ծառայեցին ոչ միայն իրեն թաղմաթիվ հե-

տազոտությունների համար, այլև այնպիսի նշանավոր եվրոպացի գիտնականների, ինչպիսին Հովսեփ Ստրոկկովսկին էր, որը հիմնրվելով Քորամանյանի գիտական հարուստ նյութերի ու ընդհանրացումների վրա, հրատարակեց նշանավոր «Die Baukunst de Armenier und Europe» երկհատոր մեծածավալ աշխատությունը:

Այսպիսով, ինչպես Կոմիտասը հավաքելով ու մշակելով գեղջկական երգերը, կարողացավ քաղաքակիրթ աշխարհին ներկայացնել հայկական երաժշտությունը, այնպես էլ Քորամանյանը կարողացավ գիտական աշխարհին ներկայացնել հայ ժողովրդի թաղմադարյան ժառանգության հարուստ դանձարաններից մեկը՝ ճարտարապետությունը:

Ք. Քորամանյանը ծնվել է 1864 թվականին Քուրքիայի Շապին-Գարահիսար գյուղում: Իր կրթությունը նա ստացել է Կոստանդնուպոլսում 1893 թվականին, ավարտելով Գեղարվեստից ճեմարանի ճարտարապետական բաժանմունքը, Մինչև 1900 թվականը աշխատել է Կոստանդնուպոլսում և Բուլղարիայի մի շարք քաղաքներում: Այնուհետև, նպատակ ունենալով գրադվել հետադոտական աշխատանքով, նա ձեռնարկում է ճանապարհորդությունների ճարտարապետության դասական երկրներում, Փարիզում ունկրնդրում է ճարտարապետության և արվեստի նշանավոր պատմաբանների ու տեսարանների դասախոսությունները:

1903 թվականին բանասեր Կարապետ Բասմաճյանի հետ Փարիզից Հայաստան գալով, Քորամանյանը որոշում է մնալ այս-

տեղ և իր ուժերը նվիրաբերել հայ ճարտարապետութեան ուսումնասիրութեանը, «Ուրտեղի մնալ այնտեղ, — գրում է նա, — աշխատել, տեսնել... մեր ժողովրդի հանճարեղ շնաշխարհիկ բեկորները՝ փլատակներու և գերեզմանական տխուր հողակույտերուն տակեն ազատել և ցույց տալ ամբողջ գիտական աշխարհին»:

Զուրկ լինելով նյութական և բարոյական «ժանդակութունից, հաղթահարելով բազմաթիվ դժվարութիւններ, Քորամանյանը ձեռնարկում է մի բեղմնավոր ու շնորհակալ աշխատանք, որը շատ տարիներ հետո է միայն նրան հանրահայտ դարձնում ու զնահատանքի արժանացնում:

Առաջին հետազոտական աշխատանքները սկսեց նա Անիում, ուր դաժան պայմաններում անցկացրեց ձմռան ամիսները: Հիշելով այդ մասին, նշանավոր հայագետ պրոֆ. Ն. Մառը գրում էր. «Ապրելով ցուրտ, լտաքացվող և մինչև ծնկները անձրևաջրով լցված սենյակում, Քորոս Քորամանյանը հասավ ծայրահեղ աղքատութեան, նա օրերով սովի էր մատնված, ծածկված էր ցնցոտիներով»:

1904 թվականի վարնանը Քորամանյանը էջմիածին է գալիս, հույս ունենալով օգնութիւն ստանալ իր կարևոր գործն առաջ տանելու համար: Սակայն արժանանալով անտարբեր վերաբերմունքի, խիստ վշտանում է գիտութեան մշակը:

Այդ ժամանակ խաչիկ վարդապետ Դատանը, որ մի քանի տարի առաջ ձեռնարկի էր Զվարթնոցի պեղումները, իմանալով, որ Քորամանյանը ճարտարապետ է, հրափրում է նրան մասնակից լինելու պեղումներին և կազմելու բացված տաճարի հատակագիծը: Քորամանյանի մասնակցութիւնը Զվարթնոցի պեղումներին ճակատագրական նշանակութիւն է ունենում այս հուշարձանի համար: «...Նի՞ն ես պատահաբար վրա չհասնեի, և ըստ կանոնի չհետևեի յուրաքանչյուր բեկորի ընկած տեղին, դիրքին և շափերին, — գրում է Քորամանյանը, — և մնար խաչիկ վարդապետի հասկացողութեան և ամեն ինչ ոչնչացնելու ուղղութեամբ տարվեին մնացած պեղումները, պարզապես պետք է միանգամայն կորած լինէր Զվարթնոցի ընդհանուր կառուցվածքն ու ներքին և արտաքին ձևերը»:

Անվանի գիտնականի Զվարթնոցում կատարած բեղմնավոր աշխատանքի փայլուն պսակը հանդիսացավ տաճարի վերակազմութեան նախագիծը: Քեն եղան սուսայա մասնագետներ, որոնք ցանկացան հերքել տաճարի վերակազմութիւնը, սակայն ստիպված եղան համոզվել այն անհերքելի փաստերի շնորհիվ, որ նրանց ներկայացրեց Քորա-

մանյանը: Մնացած թերահավատներն էլ հրաժարվեցին իրենց դիրքերից, երբ երկու տարի հետո Անիում Զվարթնոցի օրինակով կառուցված Գազկաշին տաճարի պեղումների ժամանակ գտնվեց Գազիկ թագավորի արձանը իր կառուցած եկեղեցու մոզելի հետ: Մողելում եկեղեցին եռահարկ էր, ինչպես առաջուց իր վերակազմութեան մեջ ցույց էր




ՔՈՐՈՍ ՔՈՐԱՄԱՆՅԱՆԸ ԱՆԻՈՒՄ


տվել Քորամանյանը: Այս հանգամանքը զգալիորեն բարձրացնում է նրա հեղինակութիւնը գիտական աշխարհում, ճանաչել տալիս որպես հայկական ճարտարապետութեան լավագույն գիտակ:

1904—1912 թվականներին նա մասնակցում է Անիի պրոֆ. Ն. Մառի կողմից գլխավորվող հնագիտական արշավախմբերի աշխատանքներին: Այդ տարիների ընթացքում Քորամանյանը մանրակրկիտ ուսումնասիրութեան ենթարկեց Անիի ինչպես եկեղեցական, այնպես էլ քաղաքացիական ճարտարապետութեան շատ հուշարձաններ, կազմեց նրանց շափագրութիւնները և վերակազմութեան նախագծերը: Գրանցից կա-

րելի է հիշատակել Մայր Տաճարը, Փրկչի, Արուզամբնեց, Առաքելոց և այլ եկեղեցիները: Առանձին վարպետություններ են իրականացված հատկապես Գազկաշեն և Բախտարեկի եկեղեցիների, Անիի հյուրանոցի և Ախուրյանի վրա կառուցված կամուրջի վերակազմությունները: Չսահմանափակվելով Բագրատունյաց հույակալ մայրաքաղաքի ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությունը, նա իր հետազոտության շրջանակներն ընդարձակեց, ընդգրկելով ողջ Շիրակի քարձրավանդակի, Արաղածոտնի և Արարատյան դաշտավայրի հուշարձանները: Սկսած 1905 թվականից Քորամանյան պարբերական մամուլում հանդես է գալիս բազմաթիվ նամակներով ու հոդվածներով, Հայրենի երկրի հույությունների վերաբերյալ: Հետաքրքրական են նրա «նամակներ Անիից» հոդվածաշարը, «Զվարթնոցի եկեղեցին» և «Էջմիածնի Տաճարը» հետազոտությունները: Ավելի ուշ, 1911 թվականին նա հրատարակում է «Տեկորի տաճարը» նշանավոր մենագրությունը: Երի մեջ ոչ



ԶՎԱՐԹՆՈՑ ԵՆԵՂԵՑՈՒ ՀԱՏԱԿԱԳԻՆԸ
(Չափագրություն Ք. Քորամանյանի)



ԶՎԱՐԹՆՈՑ ԵՆԵՂԵՑՈՒ
(Վերակազմություն Ք. Քորամանյանի)


միայն հանգամանորեն ծննում է այս հուշարձանի ճարտարապետությունն ու կրթատնտեսությունները, այլև շարագրում հայ ճարտարապետության կազմավորման մի շարք սկզբունքային հարցեր: Հանդես գալով հայ ճարտարապետության զնահատման հարցում եվրոպական մի շարք գիտնականների սխալ կարծիքների ըննադատությամբ, Քորամանյանը բազմաթիվ փաստերով հիմնավորում է հայկական ճարտարապետության ինքնուրույնությունը, ցույց է տալիս, որ այն ոչ թե հանդիսանում է բյուզանդական ճարտարապետության մի ճյուղը, ինչպես ջանում էին ապացուցել զեպի փոքր ազդությունների ստեղծած մշակույթի նկատմամբ արհամարհական վերաբերմունք ունեցող եվրոպական մի քանի գիտնականներ, այլ արգասիք է հայ ժողովրդի բազմադարյան շինարարական գործունեության և տաղանդավոր ճարտարապետների ստեղծագործական մտքի: Դրա հետ միասին Քորամանյանը հայ ճարտարապետության կազմավորման և զարգացման հարցերը չէր քննում մեկուսացված: Նա ցույց էր տալիս նաև այն փոխազդեցությունները, որոնք տեղի ունեին ժողովրդի պատմության տարրեր ժամանակաշրջաններում:

Խիստ բարենպաստ նշանակություն ունեցավ Քորամանյանի համար նրա գործունեությունը պրոֆ. Ն. Մառի հետ ս...որուն հովանավորության տակ, — ինչպես նշում է


ինքը,— խաղաղ և ապահով կատարեցի ոչ միայն ինձի, այլև համայն գիտական աշխարհի համար շահեկան մի մեծ գործ»:

Պրոֆ. Ն. Մառը բարձր գնահատելով Քորամանյանի արժանիքները, ստեղծեց հնարավոր բարենպաստ պայմանները նրա աշխատանքի համար, հովանավորեց նրան նյութապես և բարոյապես: Դրա հետ միասին նա ներկայացրեց Քորամանյանին ուսական գիտական շրջաններին, Գիտությունների կայսերական ակադեմիայում քըննարկման ղեկավար Անիում կատարած նրա չափազորոթյուններն յու վերակազմութունները, ինչպես և հայերենից անձամբ ուսերեն թարգմանելով ու հրատարակելով «Էջմիածնի տաճարի հնագույն ձևերը» ուսումնասիրությունը:

Հայաստանում Սովետական կարգեր հաստատվելուց հետո, Քորամանյանը մեծ եռանդով մասնակցեց հայ ժողովրդի նվիրական հուշարձանների պահպանության և ուսումնասիրության աշխատանքին: Նրա, ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի, ճարտարապետ Ալեքսանդր Քամանյանի և



ԱՆԻԻ ՀՈՎՎԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅԱԿԱԳԻՍԸ
(Ձափազորոթյուն Ք. Քորամանյանի)



ԱՆԻԻ ՀՈՎՎԻ ԵԿԵՂԵՑՈՒ
(Վերակազմություն Ք. Քորամանյանի)

ուրիշների նախաձեռնությամբ կազմակերպվեալ երիտասարդ ուսպուրչիկայի Հուշարձանների պահպանության կոմիտեն, որի անդամն էր նա և բոլոր միջոցառումների գործոն մասնակիցը: Հանդիսանալով Հայաստանի Պատմության և արվեստի ինստիտուտի գիտական աշխատակիցը, Քորամանյանը, շնայած իր ալևոր հասակին, գլխավորեց հնագիտական պեղումները հին Վաղարշապատում և Գեղարդաձորում: Նա մեծ ջանքեր ու գիտելիքներ գործադրեց Վայաստանի Պետական թանգարանի ճարտարապետական բաժնի կազմավորման համար:

Քորամանյանն ապրեց իր ժողովրդի ազատագրման երջանկությունն ու վայելեց նրա անսահման հոգատարությունը, ստացավ հետազոտական աշխատանքներ կատարելու յայն հնարավորությունները: Կյանքի վերջին տարիների ընթացքում նա մեծ շանասիրությամբ աշխատում էր հրատարակության պատրաստել իր «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» մեծածավալ գիրքը, որի մեջ պիտի ամփոփվեին իր 30-ամյա հետազոտական աշխատանքների արդյունքները: Սակայն այդ գրքի համար գրված մի քանի գլուխները այդպես էլ չամբողջացվեցին, կիսատ մնացին: Սա նր հիվանդության հետևանքով զամված անկողնին, նա ապրում էր իր փայփայած ուսումնասիրության ավարտման տենչով, որը այդպես էլ նրան չլիճակվեց հրատարակված տեսնել:

Հիվանդության ընթացքը զնալով այնքան բարդացավ, որ երբ 1934 թվականը

փետրվարին, մահվանից առաջ, նշվում էր նրա գիտա-հետազոտական գործունեության 30-ամյակը, Թորամանյանը հնարավորություն չունեցավ մասնակցելու իր մեծարման երեկոյին: Հայաստանի կառավարությունը, բարձր գնահատելով անխոնջ գիտնականի ծառայությունները հայկական ճարտարապետության ուսումնասիրության ասպարեզում, շնորհեց նրան գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչումը:

Նրա մահվանից հետո, 1942 թվականին, լույս տեսան սնյութներ հայ ճարտարապետության պատմության» գրքի առաջին, իսկ 1948 թվականին նաև երկրորդ հատորը, որոնց մեջ ի մի են հավաքված նախասովետական և սովետական շրջաններում բազմաթիվ պարբերականներում հրատարակված

նրա հոդվածները, առանձին գրքերը և անտիպ աշխատությունները: Երկհատոր աչոստվար ժողովածուի հրատարակումը հանդիսացավ Թորամանյանի պայծառ հիշատակի լավագույն հավերժացումը, միևնույն ժամանակ խոշոր լավով նպաստեց հայ ճարտարապետության պատմության հետագա ուսումնասիրության գործին:

Վերջին տարիների ընթացքում լույս են տեսել բազմաթիվ նոր ուսումնասիրություններ՝ նվիրված հայ ճարտարապետության պատմությանը, որոնք հիմնականում խարըսխըվելով բազմապատակ հետազոտողի գիտական հարուստ ժառանգության վրա, շարունակում են այն նվիրական գործը, որին անպայման ազնիվ կերպով ծառայեց իր ամբողջ կյանքում ճարտարապետ Թորոս Թորամանյանը:





Հ. Գ. ԽԱՎՓԱԽԶՅԱՆ

(Ճարտարագիտական գիտությունների
բեկնածու)

ՆՐՁԱՆՆԵՐԻ ԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՍՏԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՍՏՆՂԺԱԳՈՐԺՈՒԹՅԱՆ ԿՈՄՊՈԶԻՏԻՎՈՒԹՅԱՆ

Հազվագյուտ օրինակների թվին է պատկանում Նորավանքի Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման ժամանակը նշող արձանագրությունը: Նա զետեղված է առաջին հարկի արևմտյան մուտքի պորտալը երիզող շրջանակի վրա: Ուռուցիկ ռելիեֆով խոշոր տառերը կրկնում են նույն ուռուցիկագոգավոր կոր ձևը, ինչ որ ունի պորտալի շրջանակի պորֆիրը: Տառերի մակերևույթը հավասար չէ պատի մակերևույթին, ինչպես առհասարակ արվում էր Հայաստանի ուռուցիկ արձանագրություններում, այլ լինվին դուրս են պրծած, որով և ընդգծված է արձանագրության գեղարվեստական նշանակությունը, պորտալի ճարտարապետական հարդարման մեջ:

Նորավանքի զավթի մուտքի պորտալի կամարի բարավորի վրայի 1321 թվականի արձանագրությունը կատարված է ինչպես խորացված, նույնպես բարձրացված ռելիեֆով (ճկառ 17): Խորացված ռելիեֆը կիրառված է արձանագրության հիմնական տեքստի համար, որը դասավորված է կամարի երիզով և բարավորի ներքևի գծով: Պատելով հարթ մակերևույթները՝ խորացված արձանագրությունները լիախտելով զբաղեցրած մակերևույթի տեկտոնիկությունը, միացնում են եռատերև պատկերով երկու շարքով քանդակված աղեղնակալը բարավորի զարդաքանդակի հետ: Ուռուցիկ տառերով քանդակված է ըստ երևույթին փորագրող վարպետի կամ ճարտարապետի անունը: Նրա տառերը հմտորեն հյուսված են փարթամ բուսական

զարդաքանդակի մեջ, որը ֆոն է ծառայում գորգի վրա Հիսուս Մանկան հետ նստած Աստվածամոր բարձրաքանդակ պատկերի համար: Տառերը և զարդաքանդակը իրարից զատել զժվար է: Փոխարինելով զարդաքանդակին, արձանագրությունը կատարում է բացառապես գեղարվեստական դեր:

Ուռուցիկ և խորացված տառերի գեղարվեստական դերի և նշանակության առավել պարզ օրինակ կարելի է տեսնել Բասարգեղարի մի տապանաքարի կողքի նիստի ձևավորման մեջ (1666 թ.): Հիմնական մակագրությունը, որը երեք կողմից պարուրում է երկու հեծյալների կողմից եղջերուի վրա կատարվող որսի տեսարան, կատարված է խորացված ռելիեֆով: Այս հանգամանքը ուժեղացրել է շրջանակի ձևը և նուրբ անցում է ստեղծել զարդարված մասից դեպի հուշարձանի կողային կողմերի հարթ մակերևույթները, իսկ ուղղանկյան մեջ դասավորված թվակիր արձանագրությունը, շնորհիվ իր ուռուցիկ ռելիեֆի, մեկնաբանված է որպես դեկոր, այդպես էլ նա ընկալվում է:

Առաջելոց վանքի Կարապետի խաչքարում ընդարձակ արձանագրությանը հատկացված է երկրորդական տեղ, որով և պայմանավորված է տառերի խորացված հատվածքը: Ժապավենի նման երիզելով խաչի պատկերը, արձանագրությունում ոչ միայն ուժեղացնում է նրա ձևը, այլև կատարում է շաղկապի դեր բարձրացված և խորացված մակերևույթների միջև, իսկ խաչքարը պսակող սալի ձախ կողմի վրա գտնվող ուռուցիկ մակագրությունը ուժեղացնելով և հարրտացնելով զարդաքանդակը, միայն դեկորատիվ նշանակություն ունի:

* Ետբովանդակված «էլիտեթին» ամսագրի 1959 թվականի Մ Մ Բ-ից և Գ-ից:

Ղնդհանրապես արձանագրությունները մեծ մասամբ հուշարձանին ժամանակակից լին, նրանցից մեծագույն մասը կատարված է զգալիորեն ուշ, հաճախ հուշարձանի կառուցումից մի քանի հարյուր տարի հետո: Առվորարար արձանագրությունները փորապրվում էին պատի արդեն պատրաստի հարթ մակերևույթի, թաղի կամ որևէ ճարտարապետական մանրամասի վրա, ինչպես օրինակ՝ սյան ընդե և արակի, կամարի կողքի,

զարդի Ս. Աստվածածին եկեղեցու 1855 թվականի Չամոյենց Միքայելի արձանագրությունը, որը փորագրվել է առանձին սալի վրա և հետո ազուցվել պատի մեջ, կենտրոնական դիրքը, և երիզող պրոֆիլացված շրջանակը, որն իր շափերի հարարերություններով ներգաշնակության մեջ է պորտալի ուղղանկյուն եզրակալի հետ՝ օրգանական կապ են ստեղծել արձանագրության և ճակատի դեկորատիվ հարդարանքի միջև:



Նկար 17

ՆՈՐԱՎԱՆՔԻ ԳԱՎԹԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԿԱՐԱՐԻ ՈՐԱՎՈՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

զրան եզրակալի եայլն: Այսպիսի զեպքերում փորագրիչի հնարավորությունները սահմանափակ էին: Շատ հաճախ արձանագրության համար հատկացված մակերևույթի վրա որևէ բան փոխելու իրավունքից զուրկ լինելով, փորագրողը նրան անհրաժեշտ ճարտարապետական ձևավորում տալու հնարավորություն չունեի: Այդպիսի արձանագրությունները դառնում էին պատահական և շատ հաճախ էլ խախտում էին ճարտարապետական դետալի և ղնդհանրապես ճակատի կոմպոզիցիայի միասնությունը: Բացառություն են կազմում միայն մի քանի արձանագրություններ, ինչպես օրինակ՝ Գի-

Ավելի ուշ, ներսում կատարվող արձանագրությունների համար փորագրիչ վարպետները շատ հաճախ պատերը ներկում էին զանազան ներկերով: Նոր-Գետիկի Ս. Աստվածածին եկեղեցու սեղանի արսիդի հարավային կեսի վրա գտնվող արձանագրությունը, որը կաղապարի օգնությամբ ներկվել է փորագրվելու համար, փորագրությունը հետո պատը նորից ծածկվել է կարմիր գույնով²⁶:

Մեծ դեկորատիվ նշանակություն է տրրված կարմիր գույնով ներկված և այստեղ

²⁶ Լ. Ջանփոյաղյան, «Մխիթար Գոշր և նոր-Գետիկ վանքը», էջ 153:

դասավորված ընդարձակ արձանագրութիւնը (1260—1266 թ. թ.)։ Նրա տառերը աչքի էին ընկնում իրենց կատարման նրբութիւնով։ Բառերի մի մասը գրված է խոշոր, մինչև 60 սմ. բարձրութեան հասնող տառերով։

Մի փոքր այլ կերպ է լուծված Հովհաննաս վանքի գլխավոր տաճարի սեղանի արսիդի 1427 թվականի արձանագրութեան ձևավորումը։ Տառերը դատելու համար պատի դաշտը ներկված է սպիտակ գույնով (նկար

արձանագրութիւնը աչքի է ընկնում սպիտակ ֆոնի շնորհիվ, որի վրա նա տեղավորված է։ Այս կապակցութեամբ կիսախավար ներքին տարածութեան ղեկորատիվ ձևավորման մեջ արձանագրութիւնը ավելի մեծ նշանակութիւն է ստացել, քան ցածր դասավորված, զարդաքանդակով հարդարված խորշերը։

Արձանագրութիւնները արվում էին ոչ միայն կառուցվածքի քարի մասերի վրա։



Նկար 18
ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՏԱՃԱՐԻ ԿԱՊԱՆԻ ԱՐՄԻՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

18)։ Անմիջապես վերը փորագրված է ներքաջանդակ մի խաչքար, որի կողմերում սպիտակներով նկարված են միմյանց ուղղորված պարզ նախշեր²⁷, Գեղարդի քարայրի միջի սևվազանս կոչվող տաճարի ներսի հարավային պատի վրա գտնվող Պռոշ կաղաթակյանցի արձանագրութեան և նրա պարագիծը զարդարող նախշը նույնպես ներկված են սպիտակ գույնով (նկար 14)։ Շրջապատի բաց մոխրագույն ֆոնի վրա, որը վերի մասում փոխանցվում է դեղնավուն երանգների,

Հայ արվեստի պատմության մեջ թեև հատուկ են, քայց կան օրինակներ, որոնցից երևում է, որ արձանագրութիւնները փորվել են նաև խճանկարի և ներդարգրումների մեջ, ինչպես նաև շենքի փայտյա մասերի վրա։

Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարի դասի հատակի խճանկարի վրայի առավել հին արձանագրութիւնը հասնում է մինչև 9— է դարերը²⁸, Կենտրոնական տեղ է գրավում խճանկարների կոմպոզիցիայում յոթ տողանի ար-

²⁷ Գտնեցին արժեպիսկոպոս Հովսեփյան, շրջութեան արվեստը հայոց մեջ, էջ 8, աղյուսակ 1։

²⁸ Նույն տեղում։



Նկար 19

ՍԵՎԱԼԻ ՎԱՆՔԻ Ս. ԱՌԱՔԵԼՈՅ ԵԿԵՂԵՑՈՒ
ՔԱՅՏՅԱ ՔՈՐԱԳՐՎԱԾ ԴՈՒՌԸ

ձանագրութիւնը, որը և շեշտված է մուգ գույնով՝ բաց ֆոնի վրա: Ներքևում, մակագրութեան տակ գտնվող դասավորված քառակուսիներից բաղկացած երկրաչափական զարդանկարի շերտը լրացնում է արձանագրութեամբ զբաղեցված քառակուսի ձև ունեցող մակերեսը: Սրա շուրջը հուստանալով հյուսվածքի մի շրջանակ կա՝ երիզված սպիտակ գծերով:

Ավելի ուշ շրջանին է վերաբերում էջմիածնի Մայր Տաճարի սեղանի պատկերակալի դրան փեղկի ներդրագրված մակագրութիւնը: Դրան փեղկի կենտրոնը մի բնանրկար է սազափյա ներզարդումով: 1720 թվականի ժամանակը նշող, նկարի վերևում և ներքևում դասավորված արձանագրութիւնը սահմանափակում է նրա զարգացումը դեպի վեր և վար և դատում է բնանկարը՝ իրեն պարուրող հուշերու բուսա-երկրաչափական օգնամենտից:

Արձանագրութիւնները փորագրվում էին նաև փայտի մեջ, զարդաքանդակների հետ միաժամանակ: Մեծ մասամբ դրանք տեղավորում էին շինանյութերի կարևոր մասերի՝ սյունագլուխների, դրան փեղկեղի և այլ մասերի մեջ:

Նետաքրքրական է Հաղարտի ժողովրդական բնակելի տան «գլխատան», ներսի սյունագլուխը: Շինարարութեան ժամանակը նշող 1864 թվականի մակագրութիւնները ձևով և տեղագրումով հայոց ներդաշնակութեան մեջ են սյունագլուխ ուղտազծի և զարդաքանդակների հետ:

Հարուստ զարդաքանդակներով ծածկված դռների փեղկերի վրայի արձանագրութիւնները, մեծ մասամբ տարբեր բնույթի օրնամենտների համար, կապող օղակի դեր էին կատարում: Որպես օրինակ կարող է ծառայել Սեանա վանքի Ս. Առաքելոց եկեղեցու 1552 թվականի փորագրված դուռը (Նկար 19): Կենտրոնում Աստվածաշնչից վերցրած նյութից կազմած մի բարձրաքանդակ է, իսկ նրա տակը՝ բուսական նախշի մի խոշոր վարդ: Այս բոլորը պարուրվում է ուռուցիկ միտոզանի մակագրութեամբ, որից դուրս դասավորված է երկրաչափական ձևի հյուսվածք: Այսպիսով մակագրութիւնը անցում է ստեղծում տարբեր բնույթի մասերի միջև:

Թվակիր արձանագրութիւնները զարդառում են նաև Մուշի Առաքելոց եկեղեցու, 1512 թվականի Կարասուրազարի (Ղրիմ) հայոց եկեղեցու, էջմիածնի Մայր Տաճարի (1889 թվականի) և այլ տեղերի փորագիր դռները:

Փայտից պատրաստվող կենցաղային և ներքին կահավորման զանազան պիտույքներ, ինչպիսիք են գրակայներ, սկուտեղներ, ջրաթասեր, իրիկներ, հացաստիկի և այլուրի պահարաններ (ամբար) և այլ իրեր շատ հաճախ պատված էին լինում փորագրութիւններով, և վերջինիս հետ մեկտեղ նաև մակագրութիւններով:

Օրինակ կարող է ծառայել Անիի (ԺՌ դ.) փայտի մի կտորից շինված գրակալը: Կողային կողմերի մեջտեղում, որոնք ծածկված են զեղաքանդակ փորագրութիւններով, պետեղված են աստղիկներից բաղկացած կրկրաչափական նախշի ուղղանկյուն շերտերը: Դրանից վեր ու վար ձգված են մակագրութեան հորիզոնական շերտերը, որոնց տաների շափերն ու գծագրութիւնը մեղմացնում են երկրաչափական պատկերից զեկորացված մակերևույթի զգալի մասը գրավող բուսականին անցնելու հանգամանքը:

Ժամանակակից բազմաթիվ տարրեր բնույթի ու նշանակութեան կառուցվածքներ-

րում, արձանագրութիւնները կիրառվեցին հուշարձանների, աղբյուր-հուշարձանների վրա, որոնք կանգնեցվել են 1941—1945 թվականներին Հայրենական Մեծ պատերազմում զոհված հերոսների հիշատակին:

Ժամանակակից մակագրութիւնների տառերի ուրվագծերում հաշվի են առնվում հայ ժողովրդի արձանագրային արվեստի յուրահատկութիւնները: Տառերը իրենց

իրենց ունիք ուրվագծերով, արեւի լուսավորութեան ժամանակ:

Երևանի Ղուկաս Ղուկասյանի (1935 թ.) և Խաչատուր Աբովյանի (1950 թ.) կոթողների արձանագրութիւնները առավել օրգանապես են մտել պատվանդանի ձևավորման մեջ: Առաջինում ուռուցիկ ունիքով արձանագրութիւնը պարզորոշ կերպով առանձնացված է շրջանակով երիզված քաց ֆոնի վրա: Մյուսում, հայերեն և ռուսերեն լեզու-



Նկար 20

Ա. Ա. ԿՐԻՍՏՈՒՅԱՆԻ ՇԽԼԵՒՑ ԳԱՏՈՒՀԱՍ, ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ունիքով փորվում են թե՛ ուռուցիկ և թե՛ խորացված պրոֆիլով:

Ժամանակակից արձանագրութիւնները լակոնիկ են: Սովետական պետութեան նշանավոր գործիչների հուշարձանների պատվանդանների վրայի մակագրութիւնները հանդիսանում են միակ դեկորատիվ էլեմենտը: Կիրովականի Սերգեյ Միրոնովիչ Կիրովի և Եղեգնաձորի շրջկենտրոնի Անաստաս Իվանովիչ Միկոյանի հուշարձանների պատվանդանների հարթ մակերևութի վրա դասավորված վերդիր ուռուցիկ մակագրութիւնները առանձնապես աչքի են ընկնում

ներով, խորացրած տառերով փորագրված արձանագրութիւնը իր քաց զույնով աչքի է ընկնում, հղկած գրանիտի ընդհանուր մուգ ֆոնի վրա:

Աղբյուր-հուշարձանների ձևավորման մեջ արձանագրութիւնները նույն դերն են կատարում, ինչ որ արձաններում: Թխուտի աղբյուր-հուշարձանում (1945 թ.) փորագրված արձանագրութիւնը որպես կապող օղակ է ծառայում արտաքին կամարակապ խորշի եզրակալի զարդաքանդակի և երկու խայածակող դափնեճյուղերից ու հնգաթև աստղից կազմված խորհրդանիշի միջև:


Գվալի լեռնանցքում 1939 թվականին կառուցված աղբյուր-հուշարձանի (Ա. Պուշկինի հանդիպման տեղը Ա. Ս. Գրիբոեդովի անունին) վրա, հայերեն ու ռուսերեն լեզուներով գրված արձանագրությունը գրվում է կամարային խորշի համարյա ամբողջ վերին մասը:

Գեղարվեստական հետաքրքրություն է առաջացնում, Ա. Ս. Գրիբոեդովի «Ենկից Պատուհաս» պիեսի առաջին ներկայացման ժամանակը և տեղը հայտնող արձանագրությունը: Նա տեղավորված է «Արարատ» տրեստի գինու մառանների պատի վրա, որտեղ նախկինում գտնվելիս է եղել Երևանի Սարգարի հայկապատ դահլիճը և որտեղ տրվել է ներկայացումը: Հայերեն և

ռուսերեն արձանագրությունները փորված են ուղղանկյուն խորշի մեջ (ճկատ 20): Խորշի վերին կողի փոքր ինչ հետ ընկած լինելը և սրբատաշ մակերևութները դրդում են կոպիտ տաշված բազալտի սալերից շարված պատի այն տեղը, որը հատկացված է արձանագրության համար:

Սույն ուսումնասիրության մեջ բերված դասակարգումը ակնառու կերպով ցույց է տալիս հայկական արձանագրությունների նշանակությունը ճարտարապետական հուշարձանների կոմպոզիցիայում: Հատկապես հայ ճարտարապետներն են կարողացել ըմբռնել, զարգացնել և հայտնել մեզ Առաջավոր Արևելքի հին բնակիչների, առաջին հերթին ուրարտացիների, էպիգրաֆիկայի տրագիցիաները:





ԳՐԻԳՈՐ ԸՎԸԳ ԳԸՀՄՆԸ ՄԸՆԳՆԿՈՒՆԻ

Յուրաքանչյուր ազգի պատմական անցյալը տվյալ ազգի վեհագույն հարստությունն է: Մեր պատմական անցյալը լի է հավատավոր, հայրենանվեր, էջմիածնասեր, գիտուն ու լուսավոր դեմքերով, որոնցից շատերի համար Հայ Եկեղեցին է, որ անըսպառ աղբյուր է եղել եռանդի, զորության և լուսավորության:

Հայ հավատացյալ ժողովուրդը մեծարանքի և երախտագիտության տուրք ընծայաբերել է իր հոգևորական այն զավակներին, որոնք ոչ միայն հավատի և ճշմարտության պաշտոնյաներ են եղել, այլև գրի ու դրպրության մշակներ: ԺՔ դարի մեր մշակույթի զարգացման պատմության մեջ համեստ և պատվավոր տեղ ունեն հայ քահանաները՝ իրենց կրոնա-քարոյական, մանկավարժական և պատմա-քանասիրական վաստակներով: Այդ քահանաները եղել են ոչ միայն հոգևոր մխիթարիչներ, այլ նաև ազգային և հասարակական ականավոր գործիչներ: Նրանք իրենց կյանքն ու ժամանակը, ուժն ու գիտելիքները ի սպաս են դրել հօգուտ Հայ Եկեղեցու և Ազգի:

Այդպիսի քահանաներից են Ծղնիկ ավագ քահանա Երզնկյանը՝ խմբագիր «Հովիտ» շաբաթաթերթի և ավագ քահանա Քիֆլիսի առաջնորդանիստ Եկեղեցու, Գյուտ ավագ քահանա Աղանյանը՝ խմբագիր՝ «Լուսա» հանդեսի և հրատարակիչ «Դիվան» Հայոց Պատմության» սովոր շաբթի, Ծղիշև ավագ քահանա Գեղամյանը՝ պատմագիր, ավագ քահանա Բաքվի հայոց Եկեղեցու, մանկավարժ և կրոնական դասագրքերի հեղինակ Սահակ ավագ քահանա Մահակյանը, Գրիգոր ավագ քահանա Մանդակունին և ուրիշներ:

ԺՔ դարի վերջի և Ի դարի սկզբի մեր բազմադրյուն և երախտաշատ քահանաների շարքում իր կրոնա-քարոյական աշխատություններով, իր Եկեղեցական նվիրվա-

ծությանը, ալքի է ընկնում Գրիգոր ավագ քահանա Մանդակունին:

Նա ունի մոտ 12 մեծ ու փոքր հրատարակություններ: Բացի այդ, նրանից մեզ հասել են 10 անտիպ աշխատություններ: Վերջերս նրա դուստրը՝ Վարսենիկ Արամյան Մանդակունին, Քիֆլիսից, Ս. էջմիածնի գրադարանին նվիրեց այդ անտիպ ձեռագիր աշխատությունները:

Մանդակունու հայրը՝ Մատթեոս 1820 թվականին գաղթում է Էրզրումից և հաստատվում Ախալցխայում, ուր և ծնվում է Գրիգորը 1846 թվականին:

Գրիգորը 1852 թվականի հոկտեմբերին կորցնում է իր մորը. «Անմայր ապրելը շատ դան է և անտանելի, այս ցավը միայն որբերը գիտեն»,— գրում է հետագայում Մանդակունին իր մանկության մասին: Փոքրիկ Գրիգորին հայրը մյուս որդիների հետ Ախալցխայից ուղարկում է Ախալքալաք իր քահանա եղբոր մոտ, որն անվանի էր որպես հոգևոր գործակալ Ախալքալաքի և շրջակա գյուղերի: Հետագայում, 1856 թվականին, նա ուղարկվում է Հաղբատի վանքը, իսկ 1860 թվականին Ս. էջմիածին՝ Ժառանգավորաց վարժարանում սովորելու համար: Այդ օրվանից Գրիգորը դառնում է Մատթեոս Ա կաթողիկոսի որդեգիրներից մեկը և Ս. էջմիածնի Ժառանգավորաց վարժարանի աշակերտ:

Մատթեոս Ա կաթողիկոսի օրոք ժառանգավորաց վարժարանը ունեւր 2 գրադարան, Առաջին դասարանում սովորում էին Անանիա Շիրակացու այբենարանը, Մաղմոս, Ժամադիրք, Գործք Առաջելոց և Մարյանի «Հավատապատում»-ը, Երկրորդ դասարանում սովորեցնում էին Զամչյանի քերականությունը, հարտատանությունը, Ալամդարյանի «Քրիստոնեական վարդապետություն»-ը, Ս. Գրոց պատմություն, ազգային յգատմություն, աշխարհագրություն, թվարա-

նություն, շարական, ոուսաց լեզու և ֆրանսերեն: Բոլոր ուսանելի առարկաները գրաբարով էին ավանդվում: Գրիգորը վարժարանի ընդունակ աշակերտներից էր:



Գրիգորը Ս. Էջմիածնի ժառանգավորաց վարժարանում սովորելիս, դեռևս իր կյանքի արշալույսին, Լոզաց իր հոգևոր դաստիարակության մասին. նա իր հոգու մեջ սերմեր էր ցանում, որպեսզի հետագայում ասոք հասկեր ունենա և պատրաստի աստվածային հունձք: Նա ցանեց մաքուր և նվիրական սերմեր, ցանեց ուշադրությամբ, զգաստությամբ, քաղցրությամբ և խոնարհությամբ՝ որպեսզի ուրախությամբ և ցնծությամբ կարողանա քաղել բարի պտուղներ և իրեն շրջապատողների հիացման և հարգանքի առարկան դառնա: Մաքուր սիրտ, միտք ու հոգի. ահա այս հրաշալի երրորդությունը իր միությունն էր գտել նրա շնչավոր մարմնի կառուցվածքի մեջ: Ձևսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ՞՞ (Սաղմ. Ծ 19):

1877 թվականի հունիսի 22-ին Գրիգորին շնորհվում է սարկավագության աստիճան և հաջորդ օրն իսկ նա քահանա է ձեռնադրվում Թիֆլիսի Վանաց ավագ եկեղեցում,

ձեռնադրությամբ Գրիգոր արքեպիսկոպոս Սազինյանցի: 1897 թվականի սեպտեմբերի 28-ին նա արժանանում է քահանայական լանչախաչի, 1899 թվականի հունվարի 14-ին՝ կամիլավկայի, 1900 թվականի հակտեմբերի 1-ին ստանում է ավագ քահանայություն, իսկ 1901 թվականի օգոստոսի 9-ին՝ ծաղկյա փիլոն, նրիմյան Հայրիկից:

Թիֆլիսի հայ քահանաների պատմության մեջ կարևոր դիրք է ունեցել Գրիգոր ավագ քահանա Մանդակունին, որը սիրված ու հարգված էր իր հոգու, սրտի ու մտքի լավագույն շնորհների համար, իր հայրական անուշ բարքի, կենցաղի համար, ուր շարամըտությունը չէր նետել իր որոճը:

Գրիգոր ավագ քահանա Մանդակունու հրատարակված աշխատություններն են.

1. «Տնորհրդածութիւն դոկտ. Նելսըն ամերիկացոյ և Յաւելուածներ», Տփղիս, 1880 թ., 292 էջ:
2. «Ս. Գրոց Հին Ուխտի ընդհանուր պատմութիւն», Տփղիս, 1896 թ., 915 էջ:
3. «Կանոնադրութիւն Տփղիսի հայ քահանաների միաբանութեան», Տփղիս, 1907 թ., 31 էջ:
4. «Գրախտի մարգարիտներ Եւսեբոսեան բուրաստանից», Թիֆլիս, 1908 թ., 71 էջ:
5. «Գիւան Տփղիսի հայոց եկեղեցիների», 1910 թ., 80 էջ:
6. «Ձգտանքներ քանազան ժամերի տպուրութիւններից», Թիֆլիս, 1911 թ., 40 էջ:
7. «Մաշտոց-Մեսրոպը», Թիֆլիս, 1912 թ., 39 էջ:
8. «Ոսկի բարեկամ», Թիֆլիս, 1913 թ., 1414 էջ:
9. «Հանրամատչելի բժշկարան», Թիֆլիս, 1914 թ., 140 էջ:
10. «Գրիգոր Լուսաւորիչ», Թիֆլիս, 1915 թ., 116 էջ:
11. «Հարմանալի տեսիլ», Թիֆլիս, 1916 թ., 16 էջ:
12. «Հրաշագեղն Եւգինէ», Թիֆլիս, 1919 թ., 126 էջ:

Գրիգոր ավագ քահանա Մանդակունու անտիպ աշխատություններն են.

1. «Գրախտի Մարգարիտներ», Բ հատ., գրված 1912 թ., 123 էջ:
2. «Գրախտի Մարգարիտներ», Գ հատ., գրված 1913 թ., 150 էջ:
3. «Գրախտի Մարգարիտներ», Դ հատ., գրված 1914 թ., 69 էջ:
4. «Տիստուսն ու Մահմեդը», գրված 1920 թ., 88 էջ:
5. «Ոսկեհատիկ զոհարներ», գրված 1921 թ., 172 էջ:

6. «Հայոց ազգի պաշտպան անզուգատիւ հայրեր», գրված 1923 թ., 78 էջ:

7. «Յիսուսի անձեռագործ նկարը», գրված 1924 թ., 11 էջ:

8. «Ոսկերուղիս աղբիւրներ», գրված 1925 թ., 218 էջ:

9. «ԿՊ համոզմունքը», գրված 1925 թ., 36 էջ:

Գրիգոր ավագ քահանա Մանդակունին խոր հմտութիւն ունեւր գրարար լեզվի:

Նա իր պաշտոնին, իր կոչումին գիտակ, այդ կոչումը որպէս կյանքի նպատակ, կյանքի խորհուրդ դաժանող հոգևորականներից էր, միաժամանակ տքնաչան աշխատող ու շնասանք պրպտող: Նրա այս անխոնջ աշխատասիրութիւնն ու նվիրվածութիւնը բխում էր առ Բարձրալն ունեցած նրա անդրդվելի հավատից: Նա նույնպէս իր գրվածքներում, իր ճառերում և քարոզներում կրկնում էր՝ «պարտ է դմարմնոյն թողուլ, զհոգւոյն լինել պաշտպան»:

Գրիգոր ավագ քահանա Մանդակունին վախճանվել է 1926 թվականի հունիս ամսին և թաղվել է Թիֆլիսի Խոջեվանքի գերեզմանոցում:

Նա սրբությամբ պահեց Հայ քահանայի՝ Ս. էջմիտնի նկատմամբ ցուցաբերած դարավոր հավատարմության անխախտ սկզբունքը և պարտաճանաչ ուղղության ավանդական ընթացքը: Նա լավ էր ըմբռնել Հայ հոգևորականի, հատկապէս քահանայի, վճճ կոչումը: Նա ապրեց քրիստոնեության կենսատու՝ «գաղափարներով» և նույն գաղափարներով դաստիարակեց իր հոտին ու մատաղ սերնդին:


Կարծես նրա համար է ասված Ս. Սահակ հայրապետի խոսքը. «Յորժամ ուխտն որ դուրսն է Եկեղեցւոյ ընտիրք և պիտանից լինիցին, ևս աւազել ժողովուրդն»:

Ահա մի ամշակ առանց ամօթոյ»:

Հարգանք և պատիւ՝ նրա հիշատակին:

ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ԹԵՂՈՒԳՅԱՆ





ՌՌՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄՃԱԿՈՒԹՆՅՒՆ ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ Ժ--ԺԸ ԳԵՐԵՐՈՒՄ*



ուս-հայկական մշակութային կապերի սկզբնական ժամանակաշրջանը, որը մասամբ արտացոլվել է ուսական դրավոր հուշարձանների մեջ, զայիս է շատ վաղ ժամանակներից:

Ռուս տարեգրիչների համար Հայաստանը անհայտ մի երկիր չէր: Այսպես, ուսական տարեգրության մեջ հիշատակվում են Մեծ և Փոքր Հայքը՝ հարեթական ցեղերով բնակեցված այլ երկրների թվում:

Տարեգրությանց մեջ խոսվում է նաև Արարատյան լեռների և Հայաստանի մասին, որպես միանգամայն ողորակի աշխարհագրական մեծ երկրորդ մասին, որը հանդիսացել է քրիստոնեական աշխարհի ծայրագույն սահմանը:

Ցանկանալով Հայաստանի մասին դադար տալ, ռուս տարեգրիչները դիմում էին «Արարատյան լեռներ»-ի պատկերին, որի հետ էր կապվում աստվածաշնչական ջրհեղեղի և Նոյի տապանի Արարատ լեռան դազաթին հանգչելու պատմությունը:

Ռուսաստանում քրիստոնեության որպես պետական կրոն հաստատումից հետո (Ժ դար) ուս-հայկական մշակութային կապերը սկսեցին ամրապնդվել և նկատելիորեն զարգանալ և արտահայտվել ամենից առաջ եկեղեցական կյանքի ոլորտներում, հատկապես ռուս սրբերի Հայաստանում և հայ սրբերի Ռուսաստանում պաշտամունքի կազմակերպման մեջ, ինչպես նաև եկեղեցական շինարարության մեջ:

Ռուսական տարեգրության մեջ (արևմտաուսական խմբագրությանը) պատմվում է

Հայաստանի քրիստոնեացման մասին, որն իր հիմնական դժերով համբնկնում է հայկական պատմական գրականության ազգային ազդեցությունների հետ, որը հայտնի է Ազգաթանգեղոսի «Պատմություն»-ից: Ըստ ուսական տարեգրության՝ Գրիգոր Լուսավորիչը հանդիսու և արիարար տանում է այն սարսափելի տանջանքներն ու շարշարանքները, որոնց ենթարկում է նրան հեթանոս Տրդատ Թագավորը: Եվ վերջապես, Թագավորի հրամանով Գրիգորը զցվում է խոր վիրապի մեջ, որը չի էր օձերով և կարիճներով, Տասհինգ տարի Գրիգորը մնում է այդ վիրապում: Նա կերակրվում էր այն սննդով, որ իրեն հասցրնում էր այրի մի կին: Աստուծո զայրույթը պատժեց Տրդատին, նա դարձավ վայրի խող՝ վարազ: Սարսափը տիրեց ամբողջ Հայաստանում: Այն ժամանակ Տրդատի քույր հորովիդուխտը դադարի տեսիլք է տեսնում այն մասին, որ միայն Գրիգորը կարող է փրկել Տրդատին: Գրիգորը դուրս է լինում վիրապից և նրա աղոթքներով Տրդատը նորից մարդկային կերպարանք է ստանում: Տրդատն ընդունում է քրիստոնեությունը և նրա հետ միասին սրբազան լույսով լուսավորվում է ողջ Հայաստանը:

Գրիգոր Լուսավորչի անունը, որպես Մեծ Հայքի եպիսկոպոսի, խոր հարգանք էր վալերում հին Ռուսաստանում: Ուղղափառ օրացույցով սեպտեմբերի 30-ին Ռուսական Նկեղեցին տոնում է Մեծ Հայքի եպիսկոպոս, սուրբ Նահատակ Գրիգորի հիշատակը: Նովգորոդ քաղաքի Սպաս-Ներնդից եկեղեցում մինչև վերջին ժամանակներս պահպանվում էին Ս. Գրիգորի և Ս. Հռիփսիմի ֆրեսկ պատկերները: Այդ վկայում է այն մասին, որ Ռուսական եկեղեցին բազում դարերի ընթացքում ոչ միայն պահպանել է Հայաստա-

* Քաղված Կ. Գրիգորյանի ուսուրեն համանուն աշխատությունից:— ԽԻՐ:

շարժանը թվագրված է ԺԳ դար և մտնում է Վարք Արբոց-ի (Եթայսմաուրբո-ի) մեջ:

Հետաքրքիր է պարզել, թե ինչպե՞ս ուսական ասքը մտել է հայկական Վարք Արբոցի մեջ: Բանն այն է, որ հեռավոր անցյալում բազմաթիվ հայեր այցելում էին Ռուսաստան, Մ. էմինի ենթադրությամբ, թարգմանութան հեղինակը ոչ միայն եղել է Ռուսաստանում, հատկապես Կիևում, այլև երկար ժամանակ ապրել է այնտեղ և այնքան լավ է սովորել ուսաց լեզուն, որ ձեռնարկել է ուսական ասքի թարգմանությունը որոշակի նպատակով, այն է իր հայրենակիցներին ծանոթացնել ուսական հոգևոր գրականության լավագույն նմուշներից մեկին: Մ. էմինի կարծիքով հայերեն Եթովպիայի և Գավթի մասին՝ ասքի սկզբնաղբյուրը հանդիսացել է ուսական՝ Եկսք սուրբ Բորիսի և Գլեբի մասին»-ը:

ԺԳ—ԺԴ դարերում հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցան նշանավոր իրադարձություններ, որոնք չէին կարող իրենց զրոյմը լղենել ուս-հայկական մշակութային կապերի զարգացման վրա: Այսպես, ԺԴ դարի վերջում Հայաստանը կորցրել է իր պետական անկախությունը և ավար է դարձել Պարսկաստանի և Թուրքիայի միջև: Զավթիների բռնակալությունը Հայաստանը հասցրեց կատարյալ ավերման ու քայքայման: Բազում դարերի ընթացքում Թուրքիայի և Պարսկաստանի կառավարիչները Հայաստանի նկատմամբ վարում էին ժողովրդի ճնշման և ոչնչացման դաժանագույն քաղաքականություն: Հայերի առանձին խումբեր ստիպված էին թողնելու իրենց Հայրենիքը:

Ինչպես նշում է պրոֆ. Ա. Կ. Զիվելիզովը՝ Եղապատաներ ոգին և ազգային քարձր գիտակցությունը նպաստեցին հայ ժողովրդին պաշտպանելու իր ազգայնությունը, իր լեզուն և սովորությունները և իր բազմադարյան հոգևոր և նյութական մշակույթը անցկացնել դաժան պատմության բոլոր փորձությունների միջով»:

Ռուսաստանը դարձավ նվիրական երկիր, ուր ձգտում էին շատ հայեր:

Գաղթականությունը առանձնապես ուժեղացավ ԺԳ—ԺԴ դարերում, երբ Հայաստանում անտանելի պայմաններ ստեղծվեցին թաթարների դաժանությունների և բրոնակալության հետևանքով: Այդ մասին խոսում է նաև պատմաբան Ն. Մ. Կարամզինը:

ԺԲ դարում, լիտվական տիրապետությունից առաջ, հայերը քնակվեցին հարավ-

արևմտյան Ռուսաստանի տարրեր քաղաքներում: ԺԳ դարի կեսերին հայերը քնակություն են հաստատում Ռուսաստանին հարևան Լեհաստանում, Գալիցիայում, Մուլախիայում, Ղրիմում, նաև բուլղարների և դարձերների մայրաքաղաքներում՝ Ոսկե Հորդալի պատմության մեջ:

Պահպանվել են ԺԴ դարի նյութական մշակույթի հուշարձանները, որոնք վկայում են այդ ժամանակ հայկական գաղութի մասին մերձվուլգյան մարզում:

Դեռևս ուսաց ցար Պետրոս Ա-ը 1722 թվականին ուշադրություն դարձրեց արևելյան արձանագրությունների վրա՝ մերձվուլգյան բուլղարների հին մայրաքաղաք Ղազանում և քաղաքից 90 կմ. հեռու և Վուլգայից 10 կմ. հեռու գտնված հայկական տապանագրությունների վրա: Պետրոս Ա-ը հրամայեց այդ բոլոր արձանագրությունների ստույգ պատճենները հանել, Ռուսաստանում հին հայկական արձանագրությունների թիվը այժմ հասնում է հինգի:

Սկզբնական շրջանում այդ տապանագրություններով զբաղվում էր Սեն-Մարտինը: Ավելի ուշ նրանք գրավեցին Մ. Ի. Բրոսսեի ուշադրությունը, որը լրիվ կարգաց և թարգմանեց երկու արձանագրություն, որոնցից մեկը իրենից առաջ հայտնի չէր գիտական աշխարհին: Առաջին փորագրության մեջ, Բրոսսեի թարգմանությամբ, ասվում է.

«Այստեղ հանգրում է աստվածասեր և ողորմած պարոն Ավտին՝ պարոն Տեների որդին. դուք, որ կկարդաք [այս], խնդրեցեք [նրա] մեղքերի թողություն. հայոց թվական 784=1335»:

Երկրորդ արձանագրությունը հետևյալն է.

«Այս դագաղը պարունակում է տիկին Սառայի ագնիվ մարմինը, այն տիկին Սառայի, [որը] գնաց Քրիստոսի մոտ: Դուք, որ կարդում եք [այս], խնդրեցեք Աստուծուց նրա մեղքերի թողություն... (չկարդացվող բառն է՝ «պարոն Ավագ») Տարեթիվ՝ 770=1321»:

Բրոսսեի նպատակը չէր քացատրել, թե ի՞նչ կերպ կամ ի՞նչպես հինգ հայեր գտնվեցին հյուսիսում և իրենց ոսկորները թաղեցին թաթարական քաղաքում ԺԴ դարի սկզբներին: Նա ենթադրում է, որ այդ գերեզմանները վկայում են միայն հայ առևտրականների ներկայության մասին, առևտրական այդ քաղաքներում:

Իրարից ոչ հեռու գտնվող այդ 5 հայրեն տապանաքարերը կարելի է արդյոք համարել օտար քաղաքում ճանապարհին մահացած պատահական մարդկանց գերեզմաններ: Ավելի շատ հիմք կա կարծելու, որ այդ 5 տապանաքարերը գիրևգմանոցի մի

2 Ա. Կ. Զիվելիզով, «Հայաստան և Թուրքիա», 1946 թ., էջ 6:

մասն են կազմել: Տապանաքարերի փորագրութիւնները պարզ ասում են այն մասին, որ գտնված գերեզմանները նշանավոր, անվանի հայերի գերեզմաններն են: Փորագրութիւնները պահեցին նրանց հիշատակը:

Իսկ ո՞վ կարող է ասել, թե արդյոք քանի՞-քանի՞ անհայտ, հասարակ հայեր թողեցին իրենց ոսկորները Վոլգայից ոչ հեռու:

Արգուտինսկի-Ռուզոբուկու նյութերը որոշակի պարզութիւնով խոսում են այն մասին, թե ինչպես ժ՞ դարի երկրորդ կեսին շատ հայեր կային Ղազանի հողի վրա:

Ռուսական պատմական վիպակում, որը կոչվում է «Ճարգրագի», նրա ստեղծման և 1453 թվականին թուրքերի կողմից գրավման մասին», պահպանված են տեղեկութիւններ քաղաքի պաշտպանութիւնը մասնակցած հայկական զորքերի մասին: Հայերը հիշատակվում են որպես երկու խոշոր ճակատամարտերի մասնակից:

Ռուսական աղբյուրը խոսում է այն մասին, որ առաջին ճակատամարտում, քաղաքի հերոսական պաշտպանութիւնը, հունական զորքերի հետ միասին, մասնակցում էին իտալական և հայկական զորամասերը: Առավոտյան կայսրը հրամայեց հավաքել դիակները և թաղել: Այդ ճակատամարտում սպանված հույների թիվը 1740 էր, իսկ իտալացիների և հայերի՝ 700:

Երկրորդ ճակատամարտը, որին նույնպես մասնակցեցին իտալացիները և հայերը, է՛լ ավելի կատաղի եղավ: Դա պաշարման 30-րդ օրն էր: Թուրքերը ևս մեկ կատաղի փորձ էին անում քաղաքը գրոհով գրավելու: Քաղաքը պաշտպանողները, լսելով Աստուծո եկեղեցիների զանգերի ղողանջը, է՛լ ավելի մեծ խիզախութիւնով և քաջութիւնով անխնայ կռվում էին թուրքերի դեմ: Երկու կողմից էլ ընկնում էին դիակները խուրձերի պես, հեղեղի նման հոսում էր արյունը քաղաքի պարիսպների վրայով: Այս սարսափելի ճակատամարտում սպանվածները շատ էին, հույն, ֆրանսիացի և հայ, 5700 հոգի: Բայց թուրքական բանակը անհամեմատ ավելի շատ կորուստ ունեցավ:

«Ճարգրագի մասին» վիպակը պահպանել է այս բոլոր տեղեկութիւնները կոստանդին կայսեր զորքերում թուրքերի դեմ կռվող հայերի մասին:

Ղազան քաղաքը Իվան Ահեղի կողմից գրավվեց 1552 թվականին, իսկ Աստրախանը՝ 1554 թվականին: Այդ քաղաքներում որոնելով հուսալի հենարան, ռուսները ստիպված էին առաջին հերթին է՛լ ավելի սերտ

մտտիկութիւն և մտերմութիւն ստեղծել իրենց հարեան քրիստոնեական ժողովուրդների հետ: Ղազան քաղաքի պաշարման ժամանակ, ինչպես հաղորդում է Ղազանի տարեգրքներից մեկը, քաղաքում մեծ թվով կային օտարերկրյա առևտրականներ, որոնց թվում նաև հայեր: Հույս դնելով իրենց քաղաքի պարիսպների ամրութիւն և պարենային մեծ պաշարների վրա, ղազանցիները որոշեցին համառորեն դիմադրել: 5000 օտարերկրացիներին, նրանց թվում և հայերին ղազանցիները շնորհեցին պաշարված քաղաքից դուրս գալ և որոշեցին կռվում օգտագործել դրանց ռուսների դեմ: Ղազանի տարեգրքը պաշարված քաղաքում մնացած հայ առևտրականների մասին խոսում է համակրանքով, ցավակցութեամբ, որովհետև նրանք ռուսների կողմն էին, հրամարվում էին կռվել ռուսների դեմ: Այն ժամանակ թաթարները հայերին կապում են թնդանոթներին երկաթե շղթայով, նրանց ետևից կանգնեցնում մերկ սուսերով զինված զինվորներին և մահվան սպառնալիքով ստիպում հայերին՝ կրակել ռուս զորքերի վրա: Սակայն այստեղ էլ թուրքերը հաջողութիւն չունեցան, որովհետև, ինչպես ասում է տարեգրքը, հայերը ձևացրին իրենց շատ անվարժ, զենքին անծանոթ, և նրանց արձակած կանաները կամ թռչում էին շատ հեռու, կամ պայթում էին շատ մտտիկ՝ առանց ռուսներին վնաս պատճառելու: Այդ վկայում է հայերի համակրանքի մասին ռուսների հանդեպ: Հայ առևտրականների այս վարմունքը հայտնի եղավ նաև ռուսաց թագավորին և մեծ սիրով հետո թողեց նրանց զնալ իրենց երկիրը:

Այս բոլոր իրադարձութիւններից շատ առաջ, գոյութիւն ունեւր հայկական գաղութ Մոսկվայում: Հայերը հիշատակված են այն տարեգրութիւն մեջ, որտեղ խոսվում է Մոսկվայի 1390 թվականի հրդեհի մասին: Ղազանը գրավելուց հետո, Իվան Ահեղի՝ Մոսկվա հաղթական մուտքի ժամանակ, այլ օտարերկրացիների հետ, դիմավորելու դուրս եկան նաև հայ առևտրականներ: Իվան Ահեղի կարգադրութիւնով շատ հայեր Մոսկվայում մշտական բնակութիւն հաստատեցին մայրաքաղաքի այն մասում, որը այն ժամանակ կոչվում էր Սպիտակ քաղաք, որտեղ ապրում էին առանձին արտոնութիւններ վայելող օտարերկրացի մարդիկ:

Մոսկվայի Պոկրովսկի կոչված տաճարի (Վասիլի Երանելու եկեղեցին) տասը թեկերից մեկի վերևի յարուսը, որը շինվել էր Իվան Ահեղի կողմից ի պատիվ Ղազանի գրավման, ժ՞ դարում նվիրվել է հայոց Ս. Գրիգոր

Ձ Բյուզանդիայի մայրաքաղաքը՝ կոստանդնուպոլիս:

լուսավորչին: Գա հայերի նկատմամբ ոուսաց ցարի ուշադրության նշանն է:

ԺՁ դարի երկրորդ կեսի փաստաթղթերից մեկում խոսվում է Մոսկվայում «Հայկական հյուրանոց»-ի մասին

Շետաքայում հայկական գաղութը ոուսական մարաքաղաքում դարձավ սմժուր և մշտական:

Ռուսաստանի հողի վրա, հայ հին գաղութների թվին է պատկանում նաև Աստրախանի գաղութը: Աստրախանում հայերը ապրում էին վաղ ժամանակներից: Առանձնապես Հայերի հոսանքը ուժեղացավ դեպի Աստրախան 1554 թվականից հետո, երբ քաղաքը գրավվեց ռուսների կողմից և միացվեց Մոսկովյան պետության: Աստրախանը քաղաքը դարձավ կարևորագույն կետ՝ Ռուսաստանի համար Արևելքի հետ իր հարաբերությունների մեջ: Աստրախանի հայկական գաղութի հետ կապված է Միմրիքսկի նահանգում հայկական Կրուտեց լեռը, որի մասին ոուսական տարեգրություններից մեկում ստվում է. «Հայկական Կրուտեց լեռը Միմրիքսկի նահանգում այսպես կոչված է հայերից, որովհետև նրանք երբեմն ապրստամբվել են Աստրախանում և հաստատվել

այդ լեռան վրա: Լեռան ամենավերևի մասը, հյուսիսից գրեթե մինչև իր հարավ-արևելյան կողմը շրջապատված է բարձր պարբսպանման թումրով և նրան կից երկայն փոսով՝ մեկ և կես սաժեն խորությամբ և մոտ 500 սաժեն երկարությամբ»:

Գծվար է այժմ բացատրել, թե ինչպես «Աստրախանում երբեմն ապստամբված» հայերը գտնվեցին Միմրիքսկի նահանգում: Հայտնի չէ, թե դա ի՞նչ ապստամբություն էր, հասարակության ո՞ր շերտի և ո՞ւմ կամ ինչի՞ դեմ: Այնուամենայնիվ, այս բոլոր պատմական տվյալները հաստատում են այն փաստը, որ Աստրախանում գոյություն է ունեցել նշանակալից հայ ընկալություն:

Հայերի ձգտումը դեպի Ռուսաստան սկսվել է դեռևս վաղ միջնադարում, բայց նա զանոնում է շոշափելի փաստ ժՁ դարի վերջերից սկսած և առանձնապես ժէ դարում: Ռուս-հայկական մշակութային հարաբերությունները իրենց զարգացման նոր փուլի մեջ են մտնում Պետրոս Ա-ի ժամանակաշրջանում, երբ ստեղծվեցին հայ ժողովրդի՝ Ռուսաստանի հետ անմիջական մտերմացման նախադրյալները:





Մ Ա Յ Ր Գ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Ի՛նչ զբերե ե՞ն հրատարակվելու 1859 թվականին.— Հայաստանի Պետական հրատարակչությունը որոշել է այս տարի հրատարակել 520 անուն գիրք՝ 3 318 000 օրինակ ընդհանուր տպագրականով: Երազրի մեջ մեծ տեղ է տրված գեղարվեստական գրականության, լույս է տեսնելու հայ գրողների մոտ 120 անուն և 30 անուն քարոզական գրականություն:

Պիտի հրատարակվի Ժ գարի գրական խոշորագույն հուշարձանը՝ Գրիգոր Նարեկացու «Մատեն ողբերգութեան»-ը աշխարհարար քարոզմանությամբ: Հրատարակվելու են նաև Լեոյի՝ «Մեկիճի աղջիկը» վեպը և «Ոսկի ժիտրի մեջ» վիպակը, գյուղագիր Հովհաննես Մալխասյանի՝ «Հորոտ-մորոտ» խորագրով երկերի մի հատորակը, Բագրատ Ավագյանի «Մշուտ երկաթ» վեպը:

Մեծ տեղ է հատկացված հայ դասական գրողների երկերի հրատարակմանը, ինչպես տեսնելու ե. Աբովյանի «Վերջ Հայաստանի»-ն, Սայաթ-Նովայի՝ հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն լեզուներով գրված տաղերի հատընտիրը, Ջիվանու, Հ. Հովհաննիսյանի երկերի մի հատորակները: Պետք է սկսվի Ե. Օտյանի երկերի ժողովածուի նոր հրատարակությունը, շարունակվելու է Ա. Եփրվանզադեի, Բաքճու, Հ. Քամսյանի, Վրթանես Փափազյանի և Ա. Իսահակյանի երկերի հրատարակությունը: Լույս կտեսնի գրականագետ Արսեն Տերտերյանի 7-հատորյա երկերի առաջին հատորը, Հրատարակվելու են սովետահայ գրողների նոր ստեղծագործությունները, այդ թվում Մ. Արազու պետրայել Օրիս և Ստեփան Արուսյանի «1921 թվականը» պատմավեպերը, Հր. Փոլսրի «Մեծ տան զավակները» վեպի 1-ին և 2-րդ հատորները, Քր. Քափայցյանի «Պատերազմ» վեպի 3-րդ հատորը, Ա. Ստեփանյանի «Անտոնամուտ», Ա. Խաչատրյանի «Բագրևազի գավակը» վեպերը: Պետք է հրատարակվեն մեր երկրի և արտասահմանյան երկրների ժողովուրդների գրականության մի շարք լավագույն նմուշներ: Ռուսերենից քարոզմանված են Վ. Կովալովի երկերը, Մ. Ես-հիկյանի «Ուլյանովների ընտանիքը», Ի. Բուենիսի պատմվածքները և այլ ստեղծագործություններ:

Արտասահմանյան գրականությունից լույս են տեսնելու Հ. Հայենի, Ա. Ֆրանսի երկերը, Վ. Ենցսպիրի ստեղծագործությունները, Վ. Սարոյանի «Մարդկային կատակերգություն»-ը, Գ. Յուրբերի «Սալամբո» վեպերը, Դանթեի «Դրախտ»-ը, Լուի Արագոնի «Պոեզիա և պրոզա»-ն, Օմար Խայամի «Պոեզիա»-ն և այլն:

1 400 000-ից ավելի տպագրական գիրք է հրատարակվելու մանուկների համար, 40 անուն գիրք լույս կտեսնի երաժշտական գրականությունից: Առաջին անգամ լինելով պետք է իրականացվի հայ ազգային երաժշտության հիմնադիր Կոմիտաս վարդապետի երկերի լիակատար ժողովածուի հրատարակումը 10 հատորով: Այս տարվա հրատարակչության ծրագրում նախատեսված է նաև այլ ճյուղերի գրականության հրատարակումը:

Սալոնիկի միջազգային տոնավաճառի ճամբար.— Այս տարի սեպտեմբերին Հունաստանում կազմակերպվում է Սալոնիկի 23-րդ միջազգային տոնավաճառը: Տոնավաճառում այս տարի առաջին անգամ ցուցադրվելու են նաև Հայաստանի արդյունաբերության արտադրանքները, դրանց թվում՝ շարժական էլեկտրակայան, տրանսֆորմատոր, ասինխրոնային էլեկտրաշարժիչ, կոմպրեսոր, գինիներ և կոնյակի տարբեր տեսակներ, ժիսխոտ, հայկական գորգեր և այլ արտադրանք:

Երաժշտագետի պատվի երկրոն.— Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի կոնիկտիվը, Երևանի երաժշտական հասարակայնության մասնակցությամբ, նշեց ինստիտուտի ավագ գիտաշխատող, ռեսպուբլիկայի արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր-պրոֆեսոր Գևորգ Տիգրանյանի ծննդյան 50-ամյակը: Տիգրանյանի վաստակը մեծ է հայկական երաժշտական մշակութային զարգացման քննադատում: Նրա հետազոտական աշխատանքի արդյունքն է հանդիսանում «Հայկական երաժշտական թատրոնը» քաղմահատոր ուսումնասիրությունը, որի առաջին հատորը լույս է տեսել 1956 թվականին, իսկ երկրորդ հատորը արդեն պատրաստ է տպագրության, ինչպես նաև Ալ. Սպենդիարյանի

կյանքին և ստեղծագործությանը նվիրված ծավալուն մենագրությունը, որը տպագրվում է Մոսկվայում:

Պրոֆ. Գ. Տիգրանյանի հրաժշտական վաստակի մասին զեկուցեց Ռ. Զարյանը: Ողջույնի խոսքեր ասացին Ռ. Աթաբյանը՝ Հայաստանի Կոմպոզիտորների Կոմիտեի կողմից, պրոֆ. Փնտրոզ Բուդաղյանը՝ Երևանի կոմիտեի անվան Պետական կոնսերվատորիայի կողմից:

Երևկոյի վերջում շնորհակալական շերտ ու հուզիչ խոսքով հանդես եկավ պրոֆ.-դոկտ. Գ. Տիգրանյանը:

Ակադեմիկոս Բ. Յանուշյանի յախատույթունը շինուհե.— 1957 թվականին ուսերեն լեզվով Հայաստանի Պետական Հրատարակչությունը լույս բնծայեց ակադեմիկոս Բ. Յանարյանի «Կրթական դաստիարակչության հիմնական խնդիրները» գրքի հատկանշական ծավալուն աշխատությունը: 1958 թվականին աշխատությունը վերահրատարակվեց:

Զինական ժողովրդական մեխանիկայի բժշկական հրատարակչությունը ակադեմիկոս Յանարյանի վերահիշյալ աշխատությունը թարգմանել է լինարեն և հրատարակել:

Զապել Եսայանի ելույթի միեւտույակը.— Հայպետհրատար լույս բնծայեց արևմտահայ ծանոթ կին գրող Զապել Եսայանի միհատորյակը, որի մեջ տեղ են դրել հեղինակի «Երևան» (Պրոմեթեոս ազատագրված գրքից հատված), «Հանրի Թարրուսի մտա ակնարկը», «Ենտրոնով մարզիկ», «Հոգիս աքսորյալ», «Եսահանգող ուժերը», «Սիլիկոտարի պարտեզները» և այլ գործեր: Ցանկալի է տաղանդավոր գրագիրուհու ամբողջական գործերի վերահրատարակչությունը:

Եսայանը ավելի քան քառասուն տարի ծառայել է հայ գրականությանը, ստեղծելով շատ արժեքավոր գործեր: Նա հայրենասեր մտավորականության այն զենքերից մեկն է, որ 1920-ական թվականներից սկսված իր ամբողջ ստեղծագործական կորովն ու տաղանդը ի սպաս է գրել իր ժողովրդի կյանքին, մշակույթին ու գրականության զարգացմանը:

«Նախերեկի շաբաթուրթունք».— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի կողմից հրատարակվեց քանասիրական գիտությունների թեկնածու և Հոգևոր Եկեմարանի գրաքարի դասախոս Գոցենտ Վարազ Առաքելյանի «Նախերեկի շաբաթուրթունք» մենագրության առաջին հատորը:

Առաջին հատորը ընդգրկում է սպարզ նախադասության ցենությունը: Երկրորդը ընդգրկելու է սրբազ նախադասության ցենությունը:

Հեղինակը երկար տարիների իր տրեսցան աշխատանքով հետազոտել է և ի մի է բերել փաստական հսկայական նյութ, գիտականորեն մշակել է այն, դասավորել փաստերը և բազմակնգումանիորեն ցնեարկել նյութը շոշափող բուրբ հարցերը:

Ժամանակակից հայերենի գիտական ուսումնասիրությանը նվիրված լուրջ ներդրում է վ. Առաքելյանի «Նախերեկի շաբաթուրթունք» աշխատությունը:

Վ. Համբարձումյանը գերմանական ակադեմիայի անդամ.— Աշխարհահռչակ աստրոֆիզիկոս, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը օտարերկրյա մի շարք ակադեմիկոսների և քննորոշությունների պատվավոր կամ թղթակից անդամ է: Վերջերս նա ընտրվեց Գեոդեզիական Գերմանիայի Լեոպոլդինայի րեակալ գիտությունների ակադեմիայի անդամ:

«Փաղափները և արեհասները Հայաստանում»—Ժեղաբեռնավոր.— Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է բնծայել պատմագետ դոկտ.-պրոֆ. Բ. Առաքելյանի «Փաղափները և արեհասները Հայաստանում»—Ժեղաբեռնավոր և մեծածավալ աշխատության առաջին գիրքը: Բարկեն Առաքելյանի այս աշխատության հրատարակումը միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության ուղղությամբ կատարվող քայլերից մեկն է և գիտական արժեքավոր ուսումնասիրություն:

«Ժեղաբեռնավոր».— Այս խորագրեր կրող ժողովածուն կազմել է Հայկական ՍՍՌ Պետական մատենագրարանի գրեթե ամբողջ Վ. Առաքելյանը, որը վերջերս հրատարակվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կողմից: Ժողովածուի առաջին մասը հրատարակված է 1955 թվականին: Ժողովածուն, որի մեջ ամփոփված են 1451—1480 թվականների վերաբերող հիշատակարաններ, գրքի առաջին մասի անվիզական շարունակությունն է:

Ժողովածուի ծավալուն առաջարանը, որը գրել է Վ. Առաքելյանը, նվիրված է Հայաստանի Ժեղաբեռնավոր կենսի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի պատմության հարցերին:

Վ. Առաքելյանի «Ժեղաբեռնավոր» շարունակարանները—ը լուրջ, գիտական ուսումնասիրություն է, որը լույս է սփռում տվյալ ժամանակաշրջանի հայ ժողովրդի պատմության վրա:

Ս. Ս.



Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ի Թ Յ Ո Ի Ն

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱՌԱԲԵԼՅԱՆ, «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄՏԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

(Ա. դ. մ. ք. ա.—ԺԴ դ. մ. ք.)

Հայաստանի, Երևան, 1959 թ., 721 էջ:

1959 թվականի փետրվարին, Երևանի Հայաստանի Կոմունիստական Մշակույթի Մարտի 1-ին Կոնգրեսի Գերագույն Հանձնաժողովի անդամ, Երևանի և Արմավիրի անվան Մանկավարժական ինստիտուտի դասախոս պրոֆ.-դոկտ. Առաքել Գ. Առաքելյանի արժեքավոր մեկ աշխատությունը՝ «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմությունը»:

Պրոֆ.-դոկտ. Ա. Առաքելյանը մեր հայտնի գիտնականներից մեկն է, որպես ներհուն քանասեր և պատմացետ, քաջամուտ զբաղարար, հայ մշակույթի արդյունաշատ աշխատավոր և հասարակական գործիչ:

Պրոֆ. Ա. Առաքելյանը ծնվել է 1887 թվականի հունվարի 1-ին (հին տոմարով), Լեռնային Ղարաբաղի նահապետ գյուղում. լքավոր գյուղացու ընտանիքում: Հայ դպրոցի և մշակույթի սերը ստացել է Գևորգյան ճեմարանում 1899—1907 ուսանողական և արհեստի, և այնուհետև անհաճանք սիրով նվիրվել է մանկավարժական, գրական-հասարակական աշխատանքների՝ որպես ուսուցիչ, թեմական տեսուչ, դպրոցի դիրեկտոր, գիտական աշխատող, դասախոս: Ավելի քան 50 տարի նա ծավալել է մանկավարժական գործունեություն, որի համար և Հայաստանի կառավարությունը արժանացրել է նրան գիտություն վաստակավոր գործիչ բարձր կոչմանը:

Հարգելի պրոֆեսորի գրչին են պատկանում մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ, ինչպիսիք են՝ «Գրաբարի ինֆեուրայն ուսուցման ձևափոխումը» (1937 թ.), «Հունա-հույնական գրականության պատմությունը» (1939 թ.), «Գրաբարի դասագիրք» (Ա մաս (1944 թ.), Բ մաս (1945 թ.)), «Նյութի հեղինակության գրականության մասին» (1945 թ.), «Կերպարներ, զատիարակությունը հին Հայաստանում» (1945 թ.), «Անանիա Շիրակացի» (1954 թ.), «Հռոմեական գրականության պատմությունը» (1956 թ.): Ունի նաև գերմաներենից և ռուսերենից թարգմանություններ պատմա-փիլիսոփայական նյութերի շուրջ:

Պրոֆ. Ա. Առաքելյանի գրախոսվող արժեքավոր նոր աշխատությունը «Հայ ժողովրդի հազար հինգ հարյուր տարվա» (Ա դ. մ. ք. ա.—ԺԴ դ. մ. ք.) հոգևոր մշակույթի պատմության շարադրման մի փորձ է, —ինչպես գրում է համաստիսյանը հեղինակը իր սերկու խոսքում:

Գրախոսվող աշխատությունը կարևոր է առաջին հերթին նրանով, որ այնտեղ ցնկված հարցերը մեծ նշանակություն ունեն հայ հին և միջնադարյան ժողովրդական քանահյուսության, դիցարանության, փիլիսոփայության, ճարտարապետության, արվեստի, կրոնական պատկերացումների, լեզվի, մշակույթի և մի շարք այլ կարևոր հարցերի լուսարանման տեսակն-



տից: Այս կապակցությամբ պրոֆ. Առաքելյանի այս լուրջ ուսումնասիրությունը հայ մշակույթի մի համայնագիտաբան է: Բազմամուտ հեղինակը իր աշխատության մեջ առանձին կարևորությամբ շեշտել է և հիմնավորել ուղարկության արժանի այն գրությունները, ըստ որի հայ ժողովրդի մշակույթը ծագել ու զարգացել է ինքնուրույն, ինքնատիպ կերպով, որպես հայ ժողովրդի ստեղծագործական հանճարի արգասիք: Հարգելի հեղինակը կասկածորիկ կերպով մերժում է այն գիտնականների տեսակետները, որոնք հայ ժողովրդի դիցարանությունը, արվեստը և համանման գաղափարախոսական վերնաշերտը համարում են փոխառություն օտար ժողովուրդներից:

Գրախոսվող աշխատությունը բաժանվում է երկու մեծ մասերի.

1. Հայ ժողովրդի պատմության պերիոդացման մասին (ստրկատիրական զարգացման), պատմական ակնարկ, որն ունի հրեք ստորաբաժանում.

ա) Մոցիայական կյանքի պայմանները ստրկատիրական Հայաստանում:

բ) Հայաստանը Ա—Գ դարում (Արշակունյաց թագավորության հաստատումը Հայաստանում և հայ-

վրաց ժողովուրդների համատեղ պայքարը Հոռմի և Սասնայանների դեմ)։

դ) Ստրկատիրական Հայաստանի մշակույթը — դիր, թատրոն, անդիր բանաստեղծություն, ճարտարապետություն, փոխհոգաբարձություն, զինացարանություն, առասպելներ, հուշկապարիկներ, քաղցր, անտաս, բարդի, կրակ, ջուր, ժամանակ, ԲՊԻՐՅ պիտույից և հունական վեպի հետքերը հայ հին բանահյուսության մեջ, արդենավորդների արչավանքը և Արա Գեղեցիկի առասպելը։

2. Ֆեոդալիզմի դարաշրջան, որն ունի հետևյալ ստորաբաժանումները.

ա) Սոցիալական կյանքի պայմանները ֆեոդալական Հայաստանում Ա—Ժ դարերում, Հայաստանը '—ն դարում, հայ ժողովրդի պայքարը պարսկական բռնապետության դեմ, մարզպանության շրջան, ապարյուզանդական գերիշխանության դեմ, համաժողովրդական ապստամբությունները բյուզանդական և արաբական բռնակալության դեմ, անդրկովկասյան ժողովուրդների համատեղ պայքարը արաբական տիրակալների դեմ, Բագրատունիների հաստատումը և անկումը, հայ և վրաց ժողովուրդների պայքարը Բյուզանդիայի և Սելջուկների դեմ, կիլիկյան հայկական թագավորության հաստատումը և պայքար մամլուքների, սելջուկների և խաչակիրների դեմ, Զաքարյանների իշխանությունը, մոնղոլների տիրապետությունը Անդրկովկասում և ժամանակի դասակարգերը (Նախարարություն, հոգևորականություն, ազատներ, շինականներ, քաղաքային բնակչություն, արհեստավորներ)։

բ) Ֆեոդալական Հայաստանի մշակույթը, գրերի դյուտը, հայ գիրը և գրքի ձևավորումը, Ս. Մեծորոպ Մաշտոց և առաջին թարգմանիչները, Աստվածաշնչի թարգմանության հարցը, գրաբարը որպես լեզու, միջնադարի թանրերգությունը, տաղաչափության արվեստը, հայկական էպոսը, կրթությունը և դաստիարակությունը Հայաստանում, իրավունքը, պատմությունը, ճշգրիտ դիտությունները, սոցիալական շարժումները հին Հայաստանում, փոխհոգաբարձությունը և արվեստը։

Գրախոսվող աշխատության «Հայ ժողովրդի պատմության պերիոդացման մասին» ենթախորագիրը կրող էջերում (5—18), հեղինակը առաջ է քաշել ուշադրության արժանի մի հանդամանց, որը, ըստ հեղինակի, վրիպել է հայ պատմաբանների ուշադրությունից։ Հայ ժողովրդի պատմության պերիոդացման խնդրով դրադվել են մեր հին և նոր անվանի պատմաբաններ և գիտնականներ, ինչպիսիք են հերից Զամյանը, Բալասանյանը, պրոֆ. Գ. Խայաթյանը, Գրաբազյը, բազմազատակ պատմաբան Լևոն, ահաղեմիկոս Մանանդյանը, և Սամվելյանը, ներքինի պրոֆ. Ս. Ասաբեկյանը, պրոֆ. Գ. Ս. Նրեմյանը, պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը, պրոֆ. Ա. Հակոբյանը և պրոֆ. Ա. Առաքելյանը՝ իր ներկա աշխատության մեջ, Ինչպես հայտնի է, հույն նշանավոր պատմաբան Փանենոֆոնը (430—358 թ. թ. մ. թ. ա) իր «Անարախես (սևնահյ թիւրոց)» գրքում նկարագրում է հայ ժողովրդի կենցաղը, նիտու կայքը, բայց ոչ մի խոսք չի ասում Հայաստանում



տիրող հասարակական կառուցվածքի մասին։ Պրոֆ. Ա. Առաքելյանը այս հանդամանքից անում է հետևյալ հետաքննությունը եզրակացությունը, որ Հայաստանում էլ, ինչպես և Հունաստանում՝ Փանենոֆոնի հայրենիքում, ստրկատիրություն էր, խիչ այդ հասարակարգը Փանենոֆոնի համար նորություն չէր ներկայացնում, այլ սովորական, իրեն ծանոթ մի կրթությամբ էր, որի վրա ավելորդ է համարել հույն պատմաբանը կանգ առնել և նույնիսկ որևէ բան ասել։ Արդարև, էթն Հայաստանում ստրկատիրություն չիկներ, այլ լինելու մի այլ հասարակարգ, Փանենոֆոնի այնպիսի չէր վրիպի այն, և նա անպայման կնկարագրեր այդ նորը, որը դոյություն լուրերը Հունաստանում։ Այս հանդամանքը պրոֆ. Ա. Առաքելյանի գրախոսվող աշխատության մեջ նոր դրույթ է, որ խոսում է հողուտ Հայաստանում զույթություն ունեցող ստրկատիրական հասարակարգի։ Ահա թե ինչու հեղինակն էլ իր աշխատության առաջին մեծ մասը վերնագրել է «ստրկատիրական դարաշրջան»։

«Հայ ժողովրդի պատմության առաջին դասակարգային հասարակության ժամանակաշրջանը մենք հաստատում ենք մեր թվականությունից առաջ 6-րդ դարից մինչև 3-րդ դարը (մ. թ.)։ Այդ դարաշրջանը մենք անվանում ենք ստրկատիրություն։ Արևելքի մասնակաշրջանը, որի նկատմամբ տարակարծություն չկա պատմաբանների մեջ, կոչվում է ֆեոդալական։ Դա սկսվում է մեր թվականության 4-րդ դարից և տևում է մինչև 14-րդ դարը։

Այս երկու մեծ ժամանակաշրջանների նյութական բազայի վրա խարսխվել է հայ ժողովրդի կուլտուրան, որի ուսումնասիրությունը նվիրված է սույն աշխատությունը (էջ 16):

Ասորկատիրական Հայաստանի մտավոր դարձաբեկման մասին մեր տեղեկությունները շատ սառը են: Հայ ժողովրդի պատմության մասին՝ մեր թվարկությունից առաջ 2 դարից մինչև 9 դար մ. թ. առավելապես խոսում են հույն և հռոմեական պատմական աղբյուրները: Հայ մատենագիրներ Մովսես Խորենացին և Փավստոս Բյուզանդը մասամբ պահպանել են մի շարք առասպելներ և քանահայտական փշրակներ, որոնց միջոցով գաղափար ենք կազմում մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հայ մտավոր մշակույթի մասին: Բացի դրանից, Հայաստանի մասին են նյութական կուլտուրայի կոթողներ՝ արձանագրություններ, գրամներ, տնային իրեր, զործիքներ, շենքերի ավերակներ և այլն, որոնք հնարավորություն են քննելու միայն կառուցման անելու ստրկատիրական Հայաստանի մտավոր դարձաբեկման մակարդակի մասին (էջ 34):

7 դարում (մ. թ. ա.) Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից հետո Հայաստանը թևակոխում է այսպես կոչված հելլենիստական մշակույթի շրջանը: Տեղական արևելյան մշակույթի բազայի վրա դարձանում է նոր հելլենիստական մշակույթը, որը տևում է մինչև 36 թվականը (մ. թ.):

Հայաստանը որպես տերիտորիալ ամբողջություն կազմավորվում է հելլենիզմի շրջանում և—Ա դարերում (մ. թ. ա.), հասնում է հելլենիստական մշակույթի բարձր մակարդակին, հատկապես Տիգրան Ա-ի և նրա հաջորդների օրով: Հելլենիստական այդ մշակույթը Հայաստանում զարգանում է սինցետրուսյն ուղիով,— ինչպես նշում է Հեղինակը (էջ 44): Հայաստանում առաջին դարում թատրոնը մտել էր հայ ժողովրդի կենցաղի մեջ: «Հայաստանը ուներ իր սեփական թատերական շենքերը Տիգրանակերտում և Արտաշատում, որտեղ բեմադրվել են և՛ հույն և՛ հայ գրաստուգների ստեղծագործությունները:

Ապա գրքի հայտը էջերում (48—114) Հեղինակը խոսում է ստրկատիրական Հայաստանի մշակույթի մասին. «Ստրկատիրական Հայաստանի գրական ստեղծագործություններից ոչինչ չի հասել մեզ և միայն օտար պատմիչների վկայություններով ենք դատում դրանց մասին. ապա ժողովրդական ստեղծագործության անգիր բանահյուսության ուղղությամբ մեզ հասել են սակավաթիվ նմուշներ» գեղարանական, պատմական բնույթի, որոնք պահպանվել են մեր հին մատենագրության մեջ Եփոզթան երգերն ընդհանուր խորագրի տակ:

Տվյալ ժամանակաշրջանում Հայաստանում կառուցվել են պալատներ, թատրոններ, տաճարներ, պարիսպներ, երրոնց փնայակները վկայում են բարձր ճարտարապետական արվեստի առկայությունը: Հայաստանում Այդ արվեստը ինքնատիպ հայկական է, որն իր մեջ ընկալել է հունական տարրերը: «Գոթեթի ամբողջ հանդիսանում է հայկական հնագույն ճարտարապետական նառնուցումը» (էջ 50—51), հավանաբար 70 թվականին (մ. թ. ա.) կառուցված:

Հեղինակը հայ հին հավատքին՝ հեթանոսական կրոնի կամ հայկական դիցաբանության նվիրել է 40 էջ: Հայ պանթեոնի բոլոր աստվածները՝ Արամազդ, Անահիտ, Աստղիկ, Վահագն, Նանե, Տիգր, Միհր, Ամանոր և ուրիշները «մտված են դրական հատկություններով և զուտ հայկական ազգային նկարագրի ունեն: Այդ հեթանոս հին աստվածներին ստեղծել է ինքը, հեթանոս հայ ժողովուրդը: Արքունիքում իշխել են օտար, փոխառնված կուլտուրներ, իսկ ժողովրդի մեջ չի տարածվել երբեք նրանց պաշտամունքը: «Հայկական Արամազդը, Անահիտը րովանդակությամբ ավելի բարձր բարոյական կշիռ ունեն քան պարսկական, հունական կամ ասորական համանուն աստվածները, որով վերանում է փոխառության խնդիրը: «Հայկական Անահիտը ոչ մի առևշտություն չունի այլ ժողովուրդների պատմական դիցուհիներին հետո: Անահիտ դիցուհու կերպարի մեջ, որինակ, հայ ժողովուրդը մարմնավորել է ընտանիքի սրբության, սիրտ, գեղեցկության, պահպանության մասին իր բարոյական նորմաները: Անահիտը «է մայր ամենայն զգաստութեանց», այսինքն աստվածության խորհրդանշանը և սեփառ ազգիս մեղու և կենցուցիչ... որով կհայ և զհինգանություն կրել երկիրս Հայոց»:

Հարգելի Հեղինակը ցնուցյալ առնելով նաև հայկական դիցաբանության ծագման խնդիրը և ցնուցյալ հայ և օտար մի շարք գիտնականների առաջ քաշած սփոխառության տեսակետները, եզրակացնում է, որ հայ ժողովուրդը ոչ փոխել է իր աստվածների անունները և ոչ էլ աստվածներ է փոխառել... Հեղինակը շատ անողջ միտք է զարգացնում այն մասին, որ «հայ ժողովուրդը հունեական աստվածների անունով չի կոչել իր զավակներին Ապոլոն, Հերցուլես, Արտեմիս, այլ Անահիտ, Աստղիկ, Վահագն, Միհր և այդ անունները մինչև այսօր պահպանվել են հայ ժողովրդի մեջ, որպես սիրված անուններ»:

Հեղինակը ճիշտ է մեկնաբանում նաև այն, որ ժողովուրդների մեջ դիցաբանական նմանությունը երբեք էլ պետք չէ բացառել սաղեցություն կամ փոխառության հանգամանքով:

Գրքի երկրորդ մասում խոսվում է ֆեոդալական Հայաստանում սոցիալական կյանքի պայմանների և հայ մշակույթի մասին Ա—ԺԱ դարերում:

Հարգելի Հեղինակը ապա հանգամանորեն և սպառնիչ կերպով խոսում է հայ գրքի ստեղծման, ձևավորման, պատմության մասին, ցնուցյալ և առնում հայոց լեզվի ծագման, զարգացման, պատմության և տեսության հարցերը, ցնուցյալ օգտագործելով այս անթիվ կուտակված լեզվաբանական հարուստ նյութը: Հեղինակը ջերմ և սրտաքին տողեր է նվիրել Մեսրոպ Մաշտոցին. «Մեսրոպ Մաշտոցը հայ գրքի ու գրականության, հայ մտավոր մշակույթի պատմության մեջ կատարել է բացառիկ և անզուգական դեր: Նա եզակի դեմք է և հանդիսանում է հայ գրքի ու հայ գրական մշակույթի հանձնարեղ հիմնադիրը (էջ 228):

Գրքի հարցը էջերում ցնուցյալ և առնված Աստվաշնչի առաջին թարգմանության հարցը. «հունարենից թե ասորերենից է առաջին թարգմանությունը»:

Հարգելի հեղինակը պաշտպանում է այն տեսակետը, որ առաջին ֆարգամենությունը կատարվել է հունարենից և ոչ թե ասորերենից (էջ 240), ինչպես վկայում է կորյունը:

Հարգելի հեղինակը մշակութային և մատենագրական որոշ նրբությունների մասին անում է նոր, հետաքրքիր, յուրահատուկ, մերթ վիճելի դիտողություններ և գնահատումներ:

Պրախոսվող աշխատության 250—308 էջերում խոսվում է գրաբար լեզվի ծագման, զարգացման օրինաչափությունների և պատմության մասին, պատմա-համառակարգական ուսումնասիրությանց լույսի տակ, լեզվաբանական տեսակետից կուռ, արժեքավոր և հիմնավորված ուսումնասիրություն է այս գլուխը՝ նվիրված գրաբարին, Հեղինակը առանձին ուշադրություն է մի է խմբում և խոսում նաև հայ քերականների մասին, ինչպիսիք են Մովսես Փերթոզը, Անանիա Մեկեկը (հրկուսն էլ թ դ.), Աստփանուս Սյունեցին (Է դ.), Համամ Ապերը (Բ դ.), Պրիգոր Մազիստրոսը (ԺԱ դ.), Արիստակես գրիչը (ԺԲ դ.), Չեոզը Սկևոսցին (ԺԳ դ.), Վարդան վարդապետը (ԺԴ դ.) Հովհաննես Երզնկացին (ԺԴ—ԺԵ գ.), Նսայի Նյնցին (ԺԶ դ.), Պրիգոր Տաթևացին (ԺԶ—ԺԷ դ.):

Չրբի 311—320 էջերը նվիրված են հայ միջնադարյան տաղայափական արվեստին և մեր մեծանուն քնարերգուներին, ինչպիսիք են Գավթակ Փերթոզը, (է գ.), Պրիգոր Նարեկացին (Ժ գ.), Պրիգոր Մազիստրոսը (ԺԱ դ.), Հովհաննես Իմաստասեր Սարկավազը (ԺԲ դ.), Ներսես Շնորհալին (ԺԲ դ.), Ֆրիկը (ԺԳ գ.), Հովհաննես Պուզը, Կոստանդին Երզնկացին (ԺԴ գ.):

381—390 էջերում խոսվում է հայկական էպոսի (Սասունցի Դավիթ) և առկների (Մխիթար Չոլ, Վարդան Այգեկցի) մասին, Ուշագրավ է այստեղ նաև այն, որ հեղինակն առաջինը զուգահեռ է անցկացնում Վերածնության դարաշրջանի պոետների և հայ երգիչների միջև՝ Նարեկացի—Պետրարկա, Ֆրիկ—Դանտե, և հայ զեղարվեստական խոսքի փայլուն ներկայացուցիչներին քարձրացնում հումանիզմի հանրաբնու շեփոքների հավասար աստիճանի:

420—440 էջերը գրված են հայ իրավունքի մասին, Պրախոսվող աշխատության մեջ հեղինակը իրավամբ մեծ տեղ է հատկացրել հայ պատմագրության և նրա մեծանուն ներկայացուցիչներին, ինչպիսիք են Կորյունը, Ազաթանզեղոսը, Բյուզանզը, Ջենտր Գյակը, Խորենացին, Եղիշեն, մինչև ԺԳ քար՝ Թովմա Մեծոփեցին (էջ 442—482), Անանիա Շիրակացին, Անանիա Նարեկացին, Պրիգոր Մազիստրոսը, Հովհաննես Սարկավազ վարդապետը և Հովհաննես Երզնկացին ներկայացուցիչներն են անցյալի «ճշգրիտ գիտությունը»: Մխիթար Հերացին ներկայացուցիչն է հայ հին բժշկության:

Ճեռոցայական Հայաստանի մշակույթի պատմության մեջ պատվավոր տեղ են գրավում նաև մեր փիլիսոփաները, Գավթի Անհաղթը, Եղիշի Կողբացին, Գավթի Հարթացին, Պետրոս Սյունեցին, Պրիգոր Մազիստրոսը, Հովհաննես Իմաստասերը, Հովհաննես Որոտնեցին, Պրիգոր Տաթևացին և ուրիշներ (էջ 581—601):

661—701 էջերում խոսվում է հայ արվեստի՝ ճարտարապետության, քանդակագործության, նկարչության, մանրանկարչության, նրբաշտության և թատրոնի մասին: Պրոֆ. Առաքելյանի աշխատությունը, Հեղինակի բազմակողմանի դարաքննման, մանկավարժական նրկարամյա գործունեության, դիտական տեղական և քրտեսայան ստեղծագործական աշխատանքի արդյունքն է: Պրոֆ. Առաքելյանը հարմարագույն անձնավորությունն էր գլուխ բերելու համար նման կարևոր մի աշխատություն:

Հայ մշակույթի առանձին ընագավաններին նվիրված ունենց բազմաթիվ հայտնական լուրջ ուսումնասիրությունները Սակայն հայ մշակույթի ծագման, զարգացման, զաղափարական բովանդակության և գնահատման հարցերը սպառիչ կերպով չէին ուսումնասիրված և համաքննված մի հատորում: Պրախոսվող աշխատությունը լրացնում է այդ պակասը:

Հայ ժողովուրդը, որպես աշխարհի հնադույն քաղաքակիրթ ժողովուրդներից մեկը, թողնել է հարուստ, ինքնատիպ, ինքնուրույն մշակույթ, որի ակունքները քարձրանում են մինչև հին դարերը: Այդ մշակույթը, իր բազմաճարտուստ և նրբինքանց մտտիվներով, պայծառ վկայությունն է հայ ժողովրդի ստեղծագործական տաղանդի:

Պրոֆ. Առաքելյանի աշխատությունը խղճամիտ ուսումնասիրություն է: Որք պատկերում է ընթերցողի առաջ հայ ժողովրդի դարավոր մշակույթի հարուստ պատմությունը: Պրոֆ. Առաքելյանը սրտի մեծ դուրդուրանքով, բերկրանքով և հայրենասերի խանդավառությամբ է խոսում հայ մշակույթի մասին: Առողջ են և կենսունակ՝ հեղինակի խորհրդածությունները, գիտական պրպտումները, զգացմունքների ակունքը: Նա շատ լավ գիտի հայոց պատմությունը և կարողանում է ճիշտ ու արժեքավոր ընդհանրացումներ անել: Հեղինակի հայրենասեր գրչի տակ նորից կյանք են առել մեր անցյալի հերոսական պատմությունը, մեր Գողթան իրգերը, ավանդությունները, հայրենի աշխարհի Նիստ ու կացը, համատարիցները, նրոց ու պարը, աղոթքն ու աշխատանքը, միտքն ու հոգին:

Պրախոսվող աշխատության կարևոր արժանիքներից մեկը նրա կենդանի, բարախուն շունչն է, հայրենասիրությունը: Գիրքը գիտական լուրջ ուսումնասիրություն է: Որված է քնարական վառ զեղումներով և դրան համապատասխան խորհրդածություններով: Կարգացվում է հարանուն հետաքրքրություններ: Հեղինակի լեզուն ճոխ է, պատկերավոր: Էջեր կան որվտեքնարական վառ զգացմունքներով, ոյունք գրքին տալիս են կենդանություն, գրավություն:

Պրախոսվող աշխատությունը կշահեր, եթե վերջում ունենար հատուկ անունների ցանկ և հայ մշակույթի բերթիզարաֆիս:

Պրոֆ. Ա. Առաքելյանի աշխատությունը գիտական լուրջ ավանդ է հայ մշակույթի պատմության ուսումնասիրության ընագավառում և արժեքավոր ավանդաչափությունների մեջ:

Ա. Հ.